



ԲԱԳԻՆ ԺԴ. ՏԱՐԻ-1975 ՓԵՏՐՈՒԱՐ ԹԻԻ 2
digitised by A.R.A.R.®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Նիւ Եօրֆ եւ դարձ
Ա. ԵՐԿԱԹ	Կեանքիս եեփաբը
»	Անյիշատակ
»	Զմեռնային
Ա. Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Անօթի էի քեզմով ու դուն չեկար
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Ես՝ ծովուն մէջ
»	Մետաղա՞խտ, թէ...
Յ. ՈՇԱԿԱՆ	Մաթիկ Մելիֆխանեան
* * *	Հանրիխ Պէօլլ
Հ. ՊԵՕՅԷԼ	Բա՛ն մը պիտի պատահի
* * *	Խօսք՝ յարգանքի
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Սեր ցելերի սերմնացանը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Հայրենի գեղանկարիչներուն ցուցահանդէսը
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Բարոյագիտական շեշտը փիլիսոփայութեան մէջ
* * *	Սովորամուտքեան կարգով
* * *	«Ես մտաւորական մը չեմ»
* * *	Անփոխարինելի...
* * *	«Հաննարեդ» շտեմարիւն
* * *	Մեծատղանդ-անտղանդ
* * *	«Մինչեւ այսօր»...
* * *	Բացատրութիւններ

Քաղաք

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Գ. ՏԱՐԻ. ԹԻԻ Զ

ՓԵՅՐՈՒԱՐ 1975

ՊԵՏՐՈՒԿ

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

ՆԻԻ ԵՈՐՔ ԵՒ ԴԱՐՁ

Սուրեն Սամբևանի այս գրությունը, ուր տարբեր ազգութիւններու պատկանող սոճերու բնգմէջն էր պատկերացուին Ամերիկայի տօրեային կարգ մը երևանքը, ունի հոյն խորագիրը կրող երկու բաժիններ եւ, զորս պիտի ստնժ գրագիտի այս տարուամբ թիւերուն մէջ, պարբերաբար:

Ես մտեցայ Հանրակառուցի մեծ կայանի բազմաթիւ գրամարկղներէց մէկի պատուհանին եւ գրպանիցս հանելով թղթաղբամների մի ծալք, հպարտութեամբ ասացի.

— New York and back!

— YOUR MONEY, MISTER —

Հանրակառուցում ես նստեցի վարորդից աջ շարքի միջին նստարաններէց մէկի վրայ, լուսամտաի տակ:

Ինչ յետոյ իմ նստարանին մտեցաւ զրկում մեծ թուով թերթեր եւ պատկերազարդ պարբերականներ բռնած, երկար մազերով, երկար ու անխնամ ձորուքով ու բերկրով մի շէկ երիտասարդ եւ հարցրեց, թէ կարո՞ղ է արդեօք նստել իմ կողքին:

Ես այդպիսիներին չեմ զերբջե՛ Զգիտե՛մ, թէ ինչու, ես միշտ կար-

digitised by A.R.A.R.®

ծում եմ, որ դրանք ծուլութիւնից է, որ իրենց ժօրութենքը չեն սփարում եւ իրենց ժպտերը յարգարել չեն տալիս: Եւ եթէ դրանք այդքան ծոյլ են, մտածում եմ ես, ուրեմն նաեւ ծուլութիւնից չեն լուացուում, ուրեմն եւ անծաղուր են: Եւ որովհետեւ ես չէի կարող ոչ առել, զլիտով եւ տհաճութեամբ, հաստատակամ նշան արեցի:

Երկար մագերով կրիտասարդը նստեց եւ խորասուզուեց իր թերթերի եւ պարբերականների մէջ:

Հանրակառքն աստիճանաբար լեցում էր ճամբորդներով: Ներս մը-տաւ մօտ երեսուն տարեկան մէկը, որը կարծիր տարատ էր հազել եւ գր-խարկը հրել էր ծոծրակի վրայ: Նա շատ ինքնագոհ տեսք ունէր եւ, երեւի, հպարտանում էր իր կնոջ գեղեցկութեամբ: Երիտասարդ այդ զոյգը անդ բռնեց իմ եւ Երկար մագերով տղայի նստարանի շարունակութիւն կազմող, մեզմից ձախ շարքի նստարանի վրայ: Կինը նստեց պատուհանի տակ, իսկ ամուսինը մինչեւ նստելն իմ անձի նկատմամբ անհանդուրժողականութիւն ցուցարարող հայեացք նետեց վրաս: Նա երեւի նկատել էր, որ ես հմայուել էի իր կնոջով եւ խանգում էր: Սակայն, նրա խանդն աւելորդ էր, քանի որ այդ գեղեցիկ կինը չկանգնեց եւ նրան շատեց, թէ «Հէ՛յ, դու, քեզ հետ ինչքան սպրեցի էլ հերիք է, հիմա էլ դնում եմ այն տղայի հետ սպրեմ...»: Չասեց:

Ներս եկաւ բողոքական մի քահանայ իր կնոջ եւ ծծկեր երեխայի հետ: Երեխային գրկել էր կինը, իսկ ինքը՝ քահանան, իր դէմքից ցածր մակարդակի վրայ, եւ իրենից երկու թիզ հեռու մի փոքրիկ պայտուակ էր պահել, «Ի՛նչ այնպէս՝ ինչպէս կանայք ու երեխաներն պահում են մի վանդակ, որի մէջ նստած է լինում իրենց սիրելի թռչնակը: Բողոքական քահա-նան թէեւ անձանթ էր մեզ, հանրակառքում նստածներին հետ, բայց զը-խով բարեւեց ամէնքին օրհնէր դէմքին:

Քահանան եւ իր կինը եկան նստեցին մեր առջեւ երկու աթոռների վրայ: Կինը նստեց պատուհանի մօտ: Քահանան իր ձեռքի պայտուակը դը-րեց բարձր դարակի վրայ եւ նստեց կնոջ կողքին: Երբ նրանք արդէն նըս-տած էին, քահանայի կինը երեխային պարզեց դէպի իր ամուսինը: Նա երեւի յոգնել էր եւ ուզում էր մի քիչ հանգստանալ: Սակայն, քահանան ձեռքի երեսով յետ հրեց երեխային: Կինը հառաչեց եւ նորից երեխային պահեց իր գրկում:

Ես ուզեցի բողոքել՝ քահանայի այդ անսրտութիւնը տեսնելով, բայց ինձ զսպեցի, որովհետեւ յիշեցի, որ մի ուրիշ ընտանիքի ներքին գործերին խառնուելու իրաւունքի մասին յստուկ մի նշում չկայ սահմանադրութեան մէջ:

Բողոքական քահանաները մեծ մասով նիհար են լինում, բայց այդ մէկը բաւական լեցուն էր եւ կարճահասակ: Նրա կինը հասակով նրանից բարձր էր, շատ նիհար էր եւ տառապած դէմք ունէր:

«Այդ քահանան տառապեցնում է իր կնոջը», — հայերէնով մտածեցի ես:

Սակայն, հազիւ էի այդպէս մտածել, երբ քահանան գլուխը շրջեց եւ մի բարկացուտ հայեացք նետեց վրաս:

«Այդ քահանան երեւի էլէֆլորոնիէ մեքենայ ունի իր վրայ, որը ո՛չ միայն որսում է ուրիշի մաքերը, այլեւ թարգմանում է: Նա երեւի կոտա-վարական լրտես է: Զոյգը պէտք է լինել», — մտածեցի ես:

Ես նորից հոգեւորականի անդրադարձին էի սպասում իմ մաքերիս վերաբերեալ, երբ բարձր ու միատեղ խօսելով հանրակառքը մտան երեք

պորտո-րիկացի աղջիկներ, թարմ, լեցուն ու հաճելի: Սակայն, ես սարսափեցի նրանց տեսնելով, որովհետև փորձից դիտէի, որ նրանք մինչև Նիւ Եորք հասնելը պիտի խօսէին անվերջորէն:

Պորտո-րիկացի աղջիկներէ ձայները տաք էին, կրծքային ու կանացի եւ երեւի այդ էր պատճառը, որ քահանան երբեմն-երբեմն յետ էր նայում, դիտում էր նրանց լեցուն կրծքերը, ապա նայում էր իր չոր ու ցամաք կը-նոջն ու հառաչում: Նստարանակիցս՝ երկար մազերով տղան, այդպիսի դէպքերում նայում էր ինձ եւ մինչ Ծիծաղում էինք, իսկ քահանայի կինը կարմրում էր:

Միւս կողմից էլ ես մտահոգուած էի այդ կարմիր ու երկար մազերով նստարանակցիս անձնական ապահովութեամբ, որովհետև համոզուած էի, որ մեր առջեւի նստարանի վրայ նստած քահանան կառավարական լրտես էր եւ իր վրայ կրած մանրամասնագիր մեքենայով դրանցում էր իմ եւ նրա ասածները: Հենց իմ այդ կասկածն էր պատճառը, որ ես նստարանակցիս անունը չհարցրի, որպէսզի քահանան այդ էլ չգրանցէր:

Որ քահանան լրտես էր, այդ երեւում էր այն բանից, որ նա յաճախ ձեռքը ծոցի գրպանն էր տանում, որպէսզի բացէր կամ փակէր մանրամասնագիր մեքենան: Երբ նա այդպէս էր անում, նրա ծոցի գրպանից մի ինչ-որ ծլթոց էր լուում:

Ամենավերջին, ընդհանուր նստարանի կենարոնում նստած էր մի պատանի, որն ասաց, թէ ինքը սպաներէն խօսելի դիտէ: Յիշ այն պատանին էր, որին bandit վիլին լեզուազէտ էր կոչում:

Երկրորդ շարքի վերջին նստարաններէ վրայ նստած էին միջին տարիքի, բայց ուժնքն էլ տարատ հազած մի խումբ կանայք: Որպէսզի ձեռք երբեք կարօտը չբաշխէր, եւ նրա պատկերը միշտ մեր աչքի առջեւ ունենայինք, այդ կանայք իրենց ձախ կրծքերին կրում էին հողաթափանման ջր-թով, մի դէր երեխայի ուսած այտերով եւ մանր ու ծանր աչքերով, գիշեր-ցերեկ մեր բարօրութեան համար տառապող, երկրի օրուայ նախագահի փոքրիկ ու դունաւոր նկարը: Նախագահի էմալէ նկարից բացի, այդ մաշ-ւած ախիկներն իրենց աջ կրծքերի վրայ կրում էին այցեւորածի նման մի քարտ, որոնց վրայ գրուած էր նրանց անունները եւ անունն այն կազմա-կերպութեան, որին նրանք անդամ էին: Սկզբում մենք չգիտէինք, թէ նը-րանք ինչ կազմակերպութեան անդամներ էին, բայց երբ յերուզակ վիլին նրանց հետ խօսակցութիւն ունեցաւ, իմացանք:

Նրանք կա՛մ համազումարից էին վերադառնում, կամ համազումար էին դնում՝ զանազան պատուհաններից փրկելու համար ամերիկացիներին, որոնց թւում ինձ եւ կարմիր ու երկար մազերով տղային, որի համար էլ նա նրանց չէր կարողանում տեսնել: Այդ ասում եմ, որովհետև այդ կար-միր մազերով տղան հետազայում ինձ այդ տարատաւոր կանանց մասին այն-պիսի բաներ ասաց, որ ես զարմացել էի, թէ ինչպէս կարելի է այդքան ա-պերախտ գտնուել տարատ հազած այդ տարիքոտ կանանց փրկարար աշ-խատանքների եւ Հեիհեւ ջանքերի նկատմամբ:

Այդ ջանքերի մասին ես իմացայ, երբ յերուզակ վիլին վէճի բռնուեց նրանց հետ: Վիլին այն հարցումին, թէ ինչո՞ւ եւ նրանք նախագահի նկարը կրում իրենց կրծքերին, քաղաքականութեամբ զբաղուող տարատ հազած կանանց խմբի առաջնորդն ասաց.

— Որովհետև նա պետական հանճար է...:

Յերուզակ վիլին, որ ե՛ւ չէր շտապում, ե՛ւ ժամանակ ունէր, ցիմիկա-բար ծիծաղեց եւ ծոր տուեց:

— You don't say!

— Մի՛ ծիծաղէ՛ք, երիտասարդ, — Վիլիին օտտեց առաջնորդ տիկինը:

— Իրաւունք չունե՞մ, — զուարթ չքմեղանքով Հարցրեց Վիլին:

— Ո՛չ, չունէ՛ք, — Հերոսաբար պատասխանեց տարատաւոր տիկինը:

— Բայց դուք ինձ ասացէ՛ք, թէ՛ ինչո՞ւմն է կայանում այդ պարոնի Հանճարը, — մտառ տիկինը կրծքին թառած նախազանգի նկարին պարզեց Վիլին:

— Մի՞թէ դուք, banditներդ նման Հարցերով Հետաքրքրուած էք, — արհամարհանքով, իր հերթին Հարցրեց առաջնորդ տիկինը:

Յելուզակ Վիլին հառաչեց եւ դարձաւ դէպի իր օգնական Ջորջը, որը զարմացել էր, թէ ինչո՞ւ է իր բարձր դրամահաւաքի պէս կարեւոր գործը թողած, կանգնել եւ վիճում է այդ պատահների հետ:

— Ջորջ, — ասաց նա, — մեր այս ինչքան վտանգաւոր, այնքան Հետաքրքրական մտնադիտութեան գործադրման ժամանակ, դու զանազան տիպարների կը Հանդիպես: Ասեմ, որ մի վախեցիր տղամարդկանցից, որոնք քո այդ օգնական՝ կարմիր տարատաւորի նման Հոգարտ ու ինքնահաւան տեսք ունեն, որովհետեւ դրանք ամէնից վախկոտներն են, եւ միշտ էլ պատրաստ են քո ամենաչնչին կարգադրութիւնները կատարելու, իսկ կանանցից էլ ուշադրութիւն մի զարժու ախպիտիների վրայ, ինչպիսին է այս պատու վհուկը: Հաւատա՛ ինձ, Ջորջ, որ նա ոչ օքի Համար ոչինչ չի անում եւ ցանկութիւն էլ չունի անելու: Նա ուզում է միայն երեւալ: Նա սէր է փնտրում, նա երիտասարդ է ուզում... եթէ ես նրա ականջին շնչայտի, ասելով՝ գտիկին, ձեր Հասցէն...» նա մէկ անգամ չէ, այլ ասան անգամ կը զրէր իր Հասցէն եւ ինձ կը տար, Ջորջ...:

Քանի յելուզակ Վիլին խօսում էր, տարատ Հուզած այդ տարիքոտ կանանց խմբի առաջնորդն բարկութիւնից ինքնիրեն ուտում էր, նստած տեղում վեր-վեր էր թռչում, սիրտն էր բռնում, իր առջեւի նստարանի յինակն էր ծեծում, մինչեւ որ ասաց.

— Ինչպէս կ'ուղենայի, որ դուք իմ ամուսինը լինէիք, որպէսզի մի առաւօտեան ես թոյն խառնէի ձեր սուրճին, որ դուք խմէիք եւ ձեր ոտքերը ցնցելով սատկէիք, իսկ ես կանգնէի եւ քահ-քահ ծիծաղէի...:

Այդ պէտք էր, որ ահաւոր մահ լինէր: Թէեւ Վիլին աւազակ էր, բայց եւ այնպէս ես խղճացի նրան այդպէս մեռնելու Համար, մանաւանդ՝ որ նա ոտքերը ցնցելով պէտք էր մեռնէր:

Սակայն, ինքը՝ Վիլին, սկսեց ծիծաղել իր այդ տանջալից մահուան վրայ եւ դառնալով տարատաւոր կանանց առաջնորդի կողմը՝ ասաց.

— Ես տեսնում եմ, տիկին, դուք փորձ ունէք այդպիսի ամուսնասիրական բաների մէջ...:

— Անուշտ ունեմ, — Հոգարտացաւ առաջնորդ տիկինը, — բայց դուք ինչո՞ւ էք այդպէս անվարան ծիծաղում:

— Ես ծիծաղում եմ, տիկին, որովհետեւ մինչեւ մեր ամուսնութիւնը ես ձեզ կը սպանէի, որպէսզի դուք Հնարաւորութիւն չունենայիք մէկ վայրկեան անգամ իմ կինը լինելու:

Հանրակառքում, նրանք, որ տրամադրութիւն ունէին, ծիծաղեցին: Բայց ամէնից շատ ծիծաղեց այն պատանին, որ սպանեղէն գիտէր:

Յելուզակ Վիլիի եւ տարատաւոր կանանց մէջը շատ երկար տեւեց: Նրանք միշտ փոխում էին նիւթը:

Սակայն, ես շատ առաջ անցայ, որովհետեւ bandit Վիլին եւ իր

օգնական Ջորջը յետոյ մեզ ժխացան, երբ մեր հանրակառքը մէկ ժամ էր, ինչ դէպի նիւ Եորթ էր սլանում:

Մինչեւ յիշողակ Վիլիի մէջը տարատաւոր կանանց հետ, նրանց մասին ինձ հետ խօսեց նստարանակից ժօրուքաւոր տղան: Եւ ես կարծում եմ, որ բողոքական քահանան նրա ասածները արձանադրեց իր ձայնագիր մեքենայով: Ես ծիտում էի, երբ ժօրուքաւոր տղան ինձ նայեց.

— Ձեզ խանգարում է ի՞մ ծուխը, — հարցրի, չարացած:

— Ոչ, — ասաց նա անտարբեր, — տեսա՞ք դրանց...

— Ո՞ւմ:

— Այդ տարիքոտ կանանց:

— Այո:

— Իսկ նրանց կրծքանշանները:

— Նոյնպէս:

— Դրանք մեր կեանքը յապաղեցնողներ են, — ասաց նա խիստ ատեւութեամբ:

— Ովքե՞ր, այդ կրծքանշանները:

— Ոչ, այդ տարիքոտ կանայք:

Հոգեւորականն իր տեղում այնպիսի շարժում արաւ, որ ինձ թուաց, որ նա ուզեց մեզ աւելի լաւ լսել:

— Ինչո՞ւ է այդպէս, — հարցրի:

Երկար մազերով տղան հառաչեց.

— Դրանք շատ են: Ծատ, շատ:

— Դուք դէ՞մ էք նրանց գոյութեանը կամ շատութեանը, — հարցրի:

— Դէ՞մ չէի լինի, եթէ դրանք տատիկներ մնային, ինչպէս են Եւրոպայում դրանց տարիքի կանայք: Բայց ոչ, դրանցից ոչ մէկը սէր չունի իր թոռնիկներին նայելու: Ոչ: Դրանցից իւրաքանչիւրը տաս-սասներհիստարի իր ամուսնուն վաղաժամ գերեզման ուղարկելուց յետոյ, ինչպէս իրենք են ասում՝ ճնոր միայն սկսում են ապրել: Ներկում են իրենց մազերը եւ սկսում են տարազների հետեւել: Mini skirt են հագնում կամ տարատ եւ սկսում են մէկ համազումարից միւսը վազել: Անձ են ձեւացնում իրենց, զբաղաբացիական իրաւունքի տէր: Եւ որովհետեւ դրանք եսակենտրոնական են եւ տգէտ, ապա դրանք պահպանողական ծայրայեղականներ են, եւ դործիք՝ այս երկրի անտեսական ու վարչական տէրերի ձեռքին, ընդդէմ ամէն տեսակի բարեշքման: Դուք տեսա՞ք նրանց կրծքերի ամբողջում լուսանկարը: Այդ նկարի տէրը յաղթական է դուրս դալու այն պայքարից, որը նրա գէժ սկսել է իմ թեկնածուն: Այդ նկարի տէրը յաղթական է դուրս դալու այդ պատանների շնորհիւ, որոնց թիւը քսան միլիոնից էլ աւելի է... Այդ կանայք այդ նկարի տիրոջն են ձայն տալու...

Յանկարծ հոգեւորականի երեխան ճշաց ժօր գրկում եւ ընդհատեց իմ նստարանակցին: Երեխայի մայրը փորձեց հանգստացնել լացող երեխային, բայց ի զուր:

— Սամ, — երեխայի մայրը դիմեց իր ամուսնուն, — երեխան թաց է, դարակից իջեցրու պայուսակը եւ ինձ տուր չոր փաթեթոցները...

Հոգեւորականը ականջ չկախեց իր կնոջը:

— Սամ, — դողողով ձայնով կանչեց կինը:

— Նա կարող է դիմանալ մինչեւ Ծիլագէլֆիա, — չոր ու կոշտ կրտրեց հոգեւորականը:

Ֆիլադելֆիա տնունը լսելով իմ նստարանակիցն ինձ նայեց հարցա-
կան: Ես ուսերս վեր հանեցի:

Սակայն, երկար մազերով նստարանակիցս ցուցամատի ծայրով հար-
ւածեց հողեւորականի ուսը, ճիշդ տյնպէս՝ ինչպէս աքաղաղը կտուցը սրե-
լու համար հարուածում է շոր ատաղձին: Հողեւորականի սեւ համազգես-
տից թեթեւ փոշի բարձրացաւ:

— Պարոն, — ասաց նստարանակիցս, մի քիչ թեթուելով նրա ճա-
ղատ զազաթի վրայ:

Հողեւորականը դուրսը դէպի մեզ շրջեց ջղային.

— Ես պարօծ չեմ, այլ վերապատուելի:

— Ո՛վ ուզում էք հղէք, բայց ես ուզում եմ ձեզ զգուշացնել, որ այս
հանրակառքը Ֆիլադելֆիա չի գնում, այլ Նիւ Եորք, — ասաց երկար մա-
զերով աղան:

— Ես ձեզ չեմ հաւատում եւ ոչ էլ հաւատում եմ այն բոլորին, որ
դուք ասացիք ձեր բարեկամին, — ջղայնացած պատասխանեց հողեւորականը:

— Հարցրէ՛ք վարորդին, — շատ հանդիստ ասաց երկար մազերով
աղան:

Հողեւորականը տատանուեց, տատանուեց եւ մէկ էլ նստած տեղից
զոչեց.

— Հէ՛յ, վարորդ, այս հանրակառքը ո՞ւր է գնում...

Վարորդն ատանց դուրսը դարձնելու եւ միշտ արեւի տակ պսպղացող
ճանապարհին նայելով, երգելու պէս բառերը երկարացնելով եւ երաժշտու-
թեան երանգ տալով պատասխանեց.

— Նիւ Եորք, պարոն...

— Ինչու, — բարկացաւ հողեւորականը եւ ոտքի ելաւ:

— Այո, պարոն, — շարունակեց երգելով խօսել վարորդը:

— Այդ անկարելի է, — ասաց քահանան:

— Ինչո՞ւ է անկարելի, — ինչպէս միշտ ատանց յետ նայելու ուսերը
ցնցեց վարորդը, — եթէ կարելի է լուսին գնալ, ապա ինչո՞ւ չի կարելի
Նիւ Եորք գնալ...

— Բայց ես ուզում եմ Ֆիլադելֆիա գնալ, — շատ սրտնեղեց կրօ-
նականը:

— Ա՛հ, պարոն, ես էլ շատ կ'ուզէի Ֆիլադելֆիա գնալ տեսնելու իմ
դոքանչին, որին շատ եմ կարօտել, — ծիծաղեց վարորդը:

Ուղեւորներին մէկ մասը ծիծաղեց վարորդի կատակի վրայ, բայց
կրօնականը բարկացաւ ծիծաղողներին վրայ եւ սաստեց նրանց.

— Shut up! — վիրաւորեց նա ծիծաղողներին:

Նրա այդ բացականչութեան վրայ, հանրակառքում ամէնքը լռեցին,
երեք պորտօ-րիկանցի աղջիկներից բացի: Նրանք չէին հասկանում, որ ի-
րենց հակառակորդ մի այլ դաւանանքի գործիչ սխալ հանրակառք է նստել:
Լռեց նաեւ թացութիւնից լացող երեխան: Նա երեւի իր մարմնի վարի մա-
սի խոնաւ պայծաններն աւելի ընդունելի համարեց, քան իր հօր ճղճղան
ձայնը, որ լսել էր իր ծննդած օրից ի վեր:

— Դուք պէտք է ինձ ասէիք, թէ ուր է գնում այս հանրակառքը, —
վարորդին ասաց հողեւորականը պահանջկոտ:

— Դուք էլ ինձ պիտի յայտնէիք, թէ դուք ուր էք ուղում գնալ, —
ցինիկաբար պատասխանեց վարորդը:

— Կարքը կանգնեցրու վար իջնէ՛ք, — ասաց հողեւորականը:

— Ձեմ կարող, իրաւունք չունեմ: Այս հանրակառքը սրբնթաց է եւ

մինչև Նիւ Եորք մի շունչով պիտի գնայ: Յետոյ էլ իմ ընկերութիւնն այնքան հոգատար է, որ թոյլ չի տայ ձեզ այդ բաց դաշտում վար դնեմ, — շատ հանգիստ պատասխանեց վարորդը:

— Ի՞նչ է լինելու, — հարցրեց քահանան:

— Առանձին ոչինչ: Կը գնաք Նիւ Եորք, այնտեղից դուք մի այլ հանրակառքով Ծիլադելֆիա կը գնաք:

— Իսկ ամսի արժէ՞քը, — հարցրեց հոգեւորականը:

— Դուք կը վճարէք, — բացատրեց վարորդը, — իմ ընկերութիւնը չի սիրում, երբ մարդիկ իր կառքերով մրի գրասարկութիւն են կատարում քաղաքից քաղաք:

Այդտեղ, ես վճեցի միջամտել այդ վէճին, ոչ այդ հոգեւորականին պաշտպանելու համար, այլ կարմիր տարատաւոր երիտասարդի կնոջ աչքին երեւալու համար, որի հետ ես արդէն, թէեւ անյայտ եւ իրադրութեանց հետ, բայց եւ այնպէս սիրային հայեացքներ էի փոխանակում:

Ես, թերեւս, այդպէս չանէի, եթէ նրա ամուսինն այդպէս ինքնագոհ տեսք չունենար: Ես տանել չեմ կարողանում ուստի մարդկանց:

Լաւ լսելի դարձնելու համար իմ ձայնը՝ ես ոտքի կանգնեցի:

— Հէ՛յ, վարորդ, — կանչեցի:

— Ի՞նչ է, — հարցրեց նա, մեքենայի հայելու մէջ նայելով:

— Դուք ինչո՞ւ չէք ուզում օգնած լինել այս ճամբորդին:

— Ո՞ր ճամբորդին:

— Այն ճամբորդին, որ սխալ հանրակառք է մտել:

— Իմ կառքը սխալ չէ:

— Այո, բայց թիւրիմացութիւնն երկու կողմից է:

— Ես մերժում եմ ձեր մեղադրանքը: Մարդկանց դէմքերին չէ դբրւած, թէ ո՞վ Նիւ Եորք է գնում, եւ ո՞վ՝ Ծիլադելֆիա:

Ես նայեցի գեղեցկուհու կողմը եւ, երբ տեսայ, որ նա ինձ լսում է հետաքրքրութեամբ եւ համակրանքով, ոգեւորուեցի, մտնաւանդ՝ որ նրա ամուսինը հեղանքով էր ինձ նայում ու լսում: Ինձ թուաց, որ իմ ձայնը լաւ էր հնչում հանրակառքի լուսնեան մէջ: Միայն թէ՛ խանդարում էին այդ պորտօ-րիկացի երեք արջիկները, որոնք խօսում էին ու խօսում: Ես սպաներէն չգիտէի, որ նրանց խնդրէի, որ մի պահ լռեն, մինչև որ ես աւարտէի իմ սկսած հարցապնդումը:

— You are right, sir! — ասացի:

— Thank you! Բայց ասէք, թէ ի՞նչ էք ուզում ինձնից, — հետապնդեց վարորդը:

Նա ճշմարիտ էր: Ի՞նչ էի ուզում ես նրանից, ես ինքս էլ չգիտէի: Այդ խօսակցութիւնը ես սկսել էի կարմիր տարատաւոր երիտասարդի գեղեցիկ կնոջ աչքին երեւալու համար: Բայց սկսել էի առանց նախազգոմի: Եւ ես չգիտէի, թէ ինչ պատասխան տամ վարորդին ու շուարել էի:

Իսկ այդ սրիկան, որ իր գլխի վերեւի հայելու մէջ տեսնում էր իմ շուարումը, իրար յետեւից կրկնում էր իր հարցումը, թէ ես ի՞նչ եմ ուզում իրենից:

— Ոչինչ, — ասացի:

Ճամբորդներից նրանք, որոնք լսում էին իմ եւ վարորդի խօսակցութիւնը, ծիծաղեցին իմ պատասխանի վրայ: Բայց կարմիր տարատաւոր երիտասարդը չափն անցկացրեց իր ծիծաղին: Նա ոչ թէ ծիծաղում, այլ քրքրւում էր, երկու ձեռքով իր փորը բռնած: Վերջում նա աչքերից արցունքները սրբեց ու բռնեց իր գեղանի կնոջ մերկ, լեցուն եւ ճշմարտացի շրթերի վրայ:

մարիտ կանացիական թելը, արժուկից վեր.

— Տեօա՞ր, honey, թէ այդ dum-dumb ինչ պատասխան տուեց, եւ զու...

Փեղուհին սուր մի շարժումով թելը հանեց ամուսնու ձեռքից եւ, զէմքը դարձնելով նրանից՝ սկսեց դուրսը նայել:

Կարժիք տարատաւորը շփոթուեց, ինձ նայեց ատկութեամբ, եւ այս անդամ շողորթ ձայնով գիմեց կնոջը.

— I am sorry, baby!

Ես էլ ի՞մ հերթին ի՞մ շփոթումը ծածկելու համար դիմեցի քահանայի կնոջը եւ հարցրի.

— Ձեր փոքրիկը աղա՞յ է, թէ աղջիկ:

— Տղայ է:

— Օ՛, ի՞նչ լաւ, — ասուշարար բացականչեցի ես, — ի՞նչ է անունը: Քահանայի կինը, ինչպէս բոլոր մայրերը, մի քիչ վերաւորուեց, որ ես ասալնութիւն տուեցի տղայի, այլ ոչ աղջկայ, բայց եւ այնպէս ասաց.

— Անունը Սամուէլ էրրորդ է:

—Օ՛, — բացականչեցի եւ ցուցամատիւ ծայրով խաղալով Սամուէլ էրրորդի փոքրիկ ծնօտի հետ, ասացի, — Ձերդ մեծութիւն, քիչ առաջ, որ լաց էիք լինում, երեւի ձեր փորիկն էր ցաւում:

— Այ, — Սամուէլ էրրորդի փոխարէն պատասխանեց նրա մայրը, — նորին մեծութիւնը... եւ ցոյց տուեց իր թաց մատները:

Շփոթումն ծածկելու համար ես երեւի շարունակեցի խօսել քահանայի կնոջ հետ, բայց քանի խօսում էի, նրա ամուսինն այնքան անհանդիսաւ շարժումներ էր կատարում իր տեղում եւ վարի ծնօտն այնպէս էր շարժում, որ թւում էր, թէ սխալուել էր եւ տապակած դետնախնձորի մի տաք շերտ էր առել բերանը:

Պարզ էր, որ նա խանդում էր, եւ երեւի ենթադրում էր, որ ես ձրգտում եմ նրա կնոջը սիրահարեցնել վրաս:

«Այ քեզ դուրս, — մտածեցի, — աշխարհիս վրայ այդ ս՛վ է, որ փորձում է մի քահանայի կնոջ իր վրայ սիրահարեցնել»:

Մենք մի քիչ էլ զնայինք: Ես մտածում էի, որ Նիւ Եորք հասնելու պէս քառասուներկուերորդ փողոցը կը դնամ՝ իտալական կամ Փրանսական մի շարժանկար տեսնելու, երբ մեր հանրակառքը կանգնեց: Ես պատուհանից դուրս նայեցի եւ միայն ցաքուցրիւ պուրակներ տեսայ եւ նրանց արանքներում տարածուած հնձուած արտեր: Ամայութիւն էր ամէնուրեք:

«Երեւի վառորդը վճռեց քահանային եւ նրա ընտանիքին վար դնել, հակառակ ուղղութեամբ զնացող մի հանրակառքով յետ ուղարկելու համար», — մտածեցի ես:

Այդ հնարաւոր էր, մա՛նաւանդ՝ որ այդպիսի հանրակառքերի վառորդներին նա յաճախ էր բարեւում ձեռքը վեր բարձրացնելով: Սակայն այդպիսի բան տեղի չունեցաւ:

Երբ հանրակառքի դուռը բացուեց, նախ ներս մտաւ խոշոր ու տըխուր աչքերով մի պատանի նեղր: Նա շատ անմեղ տեսք ունէր եւ շատ խոշոր ձեռքեր: Նեղր պատանին օգնեց դրոյց ներս դալու մի երիտասարդ ըսպիտակամորթի, որը նիհար էր եւ նրա քիթը ծռուել էր զէպի աջ: Այդ երիտասարդը մի շատ մեծ ու սեւ թաչկինակի հակադիր ծայրերը միացրել էր վզի վրայ եւ մի յեմարան պատրաստել, որի մէջ դրել էր իր աջ ձեռքը, որը երեւի վնասուել էր:

Այն ժամանակ, երբ պատանի նեղրը մէջքը վառորդին արած մեզ էր

նայում չփոթուած հայեացքով, սպիտակամորթ երիտասարդը թեքուեց եւ ինչ-որ բան ասաց վարորդին, որը զիկը թողած ձեռքերը բացեց անօդնական։

— Go!

Հանրակառքը շարժուեց։ Այդ յանկարծակի շարժումից նեկր պատանին հագիւ վար չընկու, իսկ սպիտակամորթ երիտասարդը նոր միայն մեր վրայ նայեց շատ ուշադիր եւ մանրակրկիտ։ Ինձ թուաց, թէ նա հաշուեց, թէ քանի հոգի կայ հանրակառքում եւ ովքե՞ր են դրանք։ Եւ յանկարծ նա ձեռքը հանեց թաշկինակից՝ ձեռքում մի փոքրիկ ու տափակ ատրճանակ։

Այդ ատրճանակը սկզբում իմ վրայ խաղալիքի տպաւորութիւն թողեց, յետոյ՝ ատրճանակաձեւ հրահանի։ Սակայն, երբ նա այդ հրահանը աջ ձեռքից փոխեց ձախ ձեռքը եւ աջ ձեռքով վերելի մասը յետ քաշեց եւ առաջ հրեց, ցածր բայց մարտական շայշնով, էս հասկացայ, որ նա փամփուշը մղեց խողովակի մէջ ու համոզուեցի, որ այդ սիրուն գործիքը զըլանիկ վառելու համար չէ, այլ՝ մարդ սպաննելու համար։

Երբ սպիտակամորթ երիտասարդը կարգի բերեց իր ատրճանակը, դարձաւ մեզ եւ մի կարճ ազդարարութիւն արեց, բոլոր ժամանակ ատրճանակը վեր զցելով ու բռնելով, ինչպէս այդ անուձ են փողոցներէ անկիւններում կանգնած ստահակները, երբ նրանք արծաթեայ մի խոշոր դրամ են ունենում։

— My fellow americans, — ասաց նա, ինչպէս որ անուձ էր այս երկրի նախազահներէ մէկը, — ես մի gunman եմ եւ ձեզ հետ մօտ մէկ ժամ շատ անտղոր յարաբերութիւնների մէջ պիտի դտնուեմ։ Ուստի՝ ուղուձ եմ, որ մենք ճանաչենք իրար, թիւրիմացութիւններէ տեղի չաւրու համար։ Զորջն, — ասաց նա գլխով ցոյց տալով նեկր տղային, — իմ օգնականն է։ Բայց սրովհետեւ այս նրա առաջին աշխատանքն է, խնդրում եմ աջակցել նրան եւ ընդհանրապէս համազործակցել մեզ հետ։ Ծնորհակալութիւն։

— Ի՞նչ էք ուզում անել մեզ հետ, — ներքին յուզումից զողորոզացող ձայնով հարցրեց տարատաւոր կանանցից մէկը։ Նրա ձայնում ուրախութեան պէս մի բան կար։

Ինձ նստարանակից երկար մազերով տղան ինձ ժպտաց ու ասաց.

— Այդ պատուը կարծում է եւ ուզում է, որ իրեն բռնաբարեն, որպէսպիսի նկարր թերթերում դնեն եւ պատկերասփիւռով ցոյց տան, ամբողջ երկրով մէկ ճանաչուելու եւ մի քիչ էլ սէր վայելելու համար...

— Այդ լու հարցում է, — ասաց կամսէնը եւ իմ նստարանակցի ու իմ կողմը նայեց խօսօրէն, ապա ծիծաղելով ասաց, — ոչ, young lady, այն՝ ինչ որ դուք մտածում էք, զժբախտաբար այդ չի լինելու։ Կամսէններէ մեր միութիւնը առայժմ մեզ արդիւում է հասարակական վայրերում սիրային գործերով զբաղուել։ Բայց այդ կը լինի, կարծում եմ, մի երկու տարուց յետոյ... Այն ժամանակ, եթէ նորից հանդիպենք, սիրով, ինչո՞ւ չէ...

Տարտաւոր կիկը հատաչեց յուսահատ։

Նրա հառաչանքը լսելով կամսէնը ցաւ յայտնեց.

— I am sorry, young lady! Ուրիշ ի՞նչ հարցումներ։ Զկան։ Այժմ անցնենք գործի։ Ասեմ, որ Զորջը պէտք է հաւաքի ինձից աջ շարքի դրամները։ Ես՝ ձախ կողմի։ Զորջ, հանի՛ր դանակդ։

Զորջը դրպանից հանեց Փիինական մի խոշոր դանակ, սեղմեց կոթին եւ դանակի շեղրն այնքան արագութեամբ եւ այնքան անհամբերութեամբ

դուրս ցցուեց, որ կարծես այդ վայրկեանին էր սպասում՝ մի քիչ լոյս աշխարհ դալու եւ դործ տեսնելու:

Պորտո-րիկացի ազջիկները, որ ի տես նորեկների լուել էին, դանակը տեսնելով սկսեցին ազազակել:

— Bandidos! Bandidos!...

— Եաք ափ... — Կրանց հրամայեց կամուֆլէնը:

Բայց Կրանք շարունակեցին ազազակել:

— Պանտիտա... Պանտիտա... —

Կրանց ձայնը, երևի, շատ էր ազդում կամուֆլէնի վրայ, որովհետեւ նա դիմեց մեզ եւ հարցրեց, թէ մեզնից ով է սպանելն խօսում: Ամենավերջին ընդհանուր նոտարաններից մի պատանի բարձրացաւ եւ ասաց, որ ինքը խօսում է:

— Այդ ազջիկներին ասա՛, որ ձայները կտրեն, — հրամայեց կամուֆլէնը:

— Եաք ափ, — ազջիկներին ասաց այն, ինչ նախապէս ասել էր ինքը, կամուֆլէնը: Յետոյ նա բաղի պէս բացեց բերանը եւ սկսեց ծիծաղել իր արած կատակի վրայ:

Մենք, ամէնքս էլ ծիծաղեցինք: Ծիծաղեց նաեւ կամուֆլէնը եւ մթնուլորտը շերմացաւ: Միաժամանակ ազջիկները լռեցին:

— Դու ինձ դուր ես դալիս, — պատանուն ասաց կամուֆլէնը, — դըրամ ունե՞ս:

— Ոչ, — պատասխանեց պատանին:

— Ես քեզ տար դուրս կը տամ այդ ազջիկներին լռեցնելու համար, — ասաց կամուֆլէնը:

— Տասը դուրսը շատ է մէկ Եաք ափի համար, — ասաց պատանին:

— Ինձ մօտ աշխատանքը թանկ արժէ: Գիտե՞ս Ջորջին ինչքան պիտի վճարեմ: Այս հանրակառքից եկած եկամուտի քսանըհինգ տոկոսը, — բացատրեց աւազակը:

Նա, այդ կամուֆլէնը, ամենեւին էլ չէր շտապում եւ ոչ էլ ջղախուժիւն էր ցուցաբերում, ինչպէս որ անում են աւազակները նման դէպքերում: Հանրակառքի երկու դռները փակ էին: Եթէ նոյնիսկ բաց լինէին, նա դիտէր, որ մեզնից ոչ մէկը չէր համարձակուի դուրս թռչելու սուրացող կառքից: Մեր կողքերից անցնում էին ու դէմուդէմ դալիս ու անցնում անձնական ինքնաշարժներ, հանրակառքեր, բեռնատար ինքնաշարժներ, որոնց վարորդները եւ ճամբորդները ոչ մի ուշադութիւն չէին դարձնում, թէ ինչ սարսափ էր տիրում մեր հանրակառքում: Մեր վարորդը ձկան պէս լուռ էր: Միայն երբեմն-երբեմն ձեռքը բարձրացնում էր եւ ողջունում դէմուդէմ եկող նոյն ընկերութեան հանրակառքերի վարորդներին: Նիւ Եորքը դեռ շատ հեռու էր:

(Վերջը յաջորդով)

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

Ա. Ե Ր Կ Ա Թ

ԿԵԱՆՔԻՍ ՆԵՔԻԱԹԸ

Կեանքիս հեփտքն անաւասիկ, պզտի՛կ տըզաս -
 — Լացող ուտի մը հովանի կ'ընէր վըրաս :

Ծընոյ հեռո՛ւն, գետի մ'ափին կանանչուէտ -
 Ծաղկեցաւ սիրտս՝ Աստուածածնայ վարդերուն հետ :

Ու ծընած օրս, երբահասակ հարսի մը պէս,
 Կեռասնի մը այգիէն բերին պարտէզ :

Որք եզնիկի մը նետաճար որտե՛ն արդեօք
 Ծըլած էր այն կեռասնին սրտամարմա՛ք...

Ան կը մեծնար, կը մեծնայի երագորէն,
 Շնչաւորուած աշխարհի սուրբ գազանի՛քներէն :

Դեռ կը ծաղկի՞՞ ծառը չ՛ֆնաղ՝ որ գիս առուսն
 Իր ոստերուն մէջ կը ծածկէր իբրեւ բռչուն...

Թեթեւ էի, եւ ճմեռին ճամբաներէն
 Դեպի գարուն կը վազէի գըւարթօրէն :

Օր մըն ալ մեծ փոքորիկէ մը տարուբեր՝
 Գտայ ինձգի՛նքս անապատին այս առըթեբեր :

Ձեմ գտեր, ո՞ւր, չեմ գիտեր, ե՞րբ կը վերջանայ
 Կեանքիս գիշերն՝ որուն պայծառ այգն ես հիմա...

Պիտի կրնա՞ս գոցել աչքերն իմ սեւեռուն
 Կարօտավառ, հայրենաբազն հեռուններուն :

Օտարութեան ցուրտ ափին վրայ, պզտի՛կ տըզաս,
 Արմատե՛նի մը երբոր շուք ընէ վըրաս...

ԱՆՅԻՇԱՏԱԿ

Օր մը եթէ վերադարձիդ հանդիպիս դուն
Տնակն այս փոքր, նամբուն եզերքն անտառախիտ.
Պիտի գտնե՞ս լուսամուտները զըւարթուն,
եւ պարտէզին մէջ ազբերակն ականակիտ:

Երբոր տեսնես, որ հիւսուած է բաղեղներով
Դուռը խարխուլ եւ փեթակն է վազուց լճուած.
Եւ թռչնատան մէջ՝ արեւին սրտէն գինով
Գորշ մողէսներ անվախօրէն բայն են դըրած:

Ի գուր պիտի շրջագայիս անտառին մօտ,
Յուսալով որ թերեւս մէկուն կը հարցնես,
Քէ ո՞ւր է ան, որ աստեօք կը բռնակէր

Խրճիթն այս հին: Բայց նոճիի մը շուփն տակ՝
Պիտի տեսնեն տրտում աչքերդ քար մ'ըսպիտակ,
Ուր անձրեւով դեռ առլցուն սիրտ մ'է փորուեր:

ՁՄԵՌՆԱՅԻՆ

Երբ վերըստին ճիւղը գոցէ նամբան բիւրեղ,
Կզպանք դնէ հովը լուած ազբիրներուն,
Երբ կռնչէ տարազընաց բառ մը հեռուն,
Պիտի յիշեմ քեզ, տնակն իմ երագագեղ:

Դուշտանրկար պատուհաններդ եւ ծխանիդ
Ծուխը ներմակ՝ գոր խօլ քամին կը տարածէ.
Ճննչող դուռն՝ որ շատ երկար սպասած է
Կարօտաբազձ եկուորներու լուսամպիտ:

Դեռ կը յիշեմ լոյսը պլպլուն կանթեղներուդ՝
Որ քեզ այնքան նմանցուցեր են մատուռի,
Տուն մանկութեան, խնկածաղիկ տա՛ն սիրալի,

Երբոր հասնիմ արահետէ մը շուտափոյթ-
Գորշ երդիփիւզ, պիտի ձայնեմ կարօտագին
Վերադարձող վայրի բաղի մը կռնչին:

(Անտիպ)

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԱՐԱՔՍԻ Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ

ԱՆՕԹԻ ԷՒ ԲԵԶՄՈՎ
ԵՒ ԴՈՒՆ ԶԵԿԱՐ

Կը սպասես: Սրճարանը պարապ է, ճամբան կը կտրուի խեղդուող ժանուկի մը շունչին պէս. չես տեսներ ոչ մէկը. միտքդ կ'իյնան այն տղաները, սրտնք ցանկացած էին քեզ օր մը... Եւ դո՛ւն, քոյն ատեն չէիր զգար այս սոսկալի անօթութիւնը, այս ահաւելի պարտութիւնը մարմինիդ միսերուն...

Այսօր անօթի ես, Ակնէ՛ս, անօթի՛. կոկորդի կը սեղմուի ճիշով, մռայլութեամբ եւ կսկիծով. կը սպասես դալիթքին:

Ափերուդ մէջ կը տեսնես գիծերուդ շիւանդութիւնը:

— Սո՛ւրճ, — կը կրկնէ քաղաքակը. կը բերէ երրորդ սուրճը. աստղերն իսկ չեն ելած. աղջիկները խամբերով կը դեղերին: Գեղեցիկ են անոնց ստինքները: Օդը փայլուն է՝ ցոփուհիի մը պորտին պէս: Ժամացոյցը դանդաղ կը զործնէ: Տղան կը ժպտի, այն տղան, որուն շրթունքներէն փոխուք կը հոսի կարծես. հեռուդ է. պիտի իյնայ... Չես գիտեր որքա՞ն տկար կ'երեւի ան.

— Մի՛ լար, — կ'ըսէ քեզի, — աչքերդ կաւերու պէս եղած են, սակայն չես լացած... Գիտե՛ս... Կու լա՞ս: Ոչ: Ակնոցդ կը ճեղքուի... Թեւերուդ մէջ կայ կարօտ, պահուրտած իղճերու ծոփեր, ինչո՞ւ կը կարծես, որ լացած ես: Ուռած են բիրբրդ, գիտե՛ս եւ սակայն: — Պիտի չգայ, — կ'ըսես եւ կը ճղճես մատներդ, կզակիդ տակ:

Պիտի չգա՞յ, եւ անօթի ես... կը բռնես թուղթերուն արցակը. ծանր չէ. աչքերէդ կրակներ կը հոսին:

— Մի՛ լար, — կ'ըսէ ծեբ կիսը, որ

կայնած է անկիւնը... ա՛հ, ո՛չ, մայրդ չէ. մօրդ մտասեւեռո՞ւմը ունիս: Ո՞վ եղած է մայրդ, որ չկայ, չկա՞յ երբեք, չէ եղած երբեք:

— Սպաննուած եմ, — կ'ըսես, — օր մը, քաշուեցայ խրախճանքէն, երբ անծանօթ մէկը եկաւ խելու սրտիս զարկերուն մեծ մասը. զոչցաւ ամէնէն թանկագին տենդերս, դնաց:

Վայրկեանք կը բռնէ իր շունչը...

— Ո՞վ էր ան, — կ'ըսէ տղան, որ չկայ, եւ որուն բիրբրէն հսկայ իղճեր կը թափին:

Ճակատդ կը մթնայ:

— Ան, որուն մազերը թափած են ճակտին վրան. որուն աչքերէն քերթուածներ կը հոսին, որուն մասներէն կը ժայթքին լոյսէ փրփուրներ...

— Ինչո՞ւ չեկաւ, — կ'ըսէ կրկին տղան:

— Գիտէք, չի ցանկար զիս. չ'ուզեր զիս:

— Ինչո՞ւ երկար սպասեցիր...

— Խե՛նթ եմ, չե՞ս հասկնար. խենթ եմ իրմով...

— Ի՞նչ է խենթութիւնը, — կը շըշըջալ տղան կամաց:

— Երազ է, երա՞զ, — կ'ըսես եւ կ'իյնաս գոլորչիին գիրկը...

Այլեւս պիտի չուզէիր կորուսիլ խանգարուած բուզէի մը գիրկը...

Կր ճգմես ձեռքիդ թուղթերը. անոնք կը խօսին քեզի երազներու ուժգրնութեամբ. ճակտիդ կրակը կը մարի, աչքերդ կը սարսափին բուզէին կնճիտներէն:

— Խօսէ՛, պատմէ՛ իր մասին:

— Ե՛րբ, — կը հարցնեա յուզուած, — ե՛րբ տեսայ զայն առաջին անգամ: Չեմ գիտեր: Ամէնը կը խառնուին իրարու: Ան ամէն տեղ է:

— Երբ արտերը հետու չեն եւ ցորենները հասուն, մորթս կը փայլէր աբուէն եւ լոյսէն ու գեղեցիկ էի:

— Երթունքներու մե՛ղրը տեսաւ:

— Տեսա՛ւ ծիծերուս կրակը, բայց չեկա՛ւ, աչքերը կոյր էին...

Երկինքը կապոյս է. թեւերդ կը մըսին սակայն: Մատներդ սառած են անոր սրտին պէս: Ինչո՞ւ չեկաւ... Ինչո՞ւ:

Անպատար կը սկսի մեծնալ՝ երակներուդ կրակին պէս:

— Աստուած՝ իմ, ե՛րբ պիտի հասնին արցունքներս, — կ'ըսես թուառացած ձայնով, — պէտք է նորոգենք մեր ուժերը, վերականգնենք նոր աշխարհներ կառուցելու:

— Դադրէ՛ խօսելէ, — կը պոռաս, — արեւն ալ գարձուց երեսը: Փոշի կայ օդին մէջ, չե՞ս տեսներ, մրո՛ւր կայ:

Ոտքի կ'իլլես. առասպելական բան մը կը խաղայ միջոցին մէջ: Տնորքը կը շարժէ շիզերդ. սեղանին վրայի թուղթերը կը թռին: Պիտի պատուէ՞ս այդ էջերը: Բոլորը չեկան հիմա, արցունքն ալ չեկաւ. երկնքի կտոր մը, փչրուած, կուզայ զարնուելու շունչիդ: Տղայ մը միամեակ ներս կը մտնէ դուրսէն: Կը կարծես ան է, անօթի՛ ես, որքա՞ն անօթի: Ան չէ, կրկին ան չէ:



Վայրկեան՝ մըն ալ պիտի չունենամ սիրելու այս վայրագութիւնը, որ օր մը ասարաւ զիս արտառոց երազներու գիրկը, գեհնի մը ախտաւոր ափերուն: Վայրկեան՝ մըն ալ...:

— Կ'ատէի գեհնը:
— Կը սիրէի կրակը...

Սպասեակը անպատկառօրէն կը բերէ սուրճը. չես խմեր. կը թափես գրուած թուղթերուն վրայ. սեւը կը խառնուի ճերմակին...

Տեսիլքի մը պէս կատաղի՛ վայր-

կեանք կը ճզմէ կուրծքդ, թռչերդ կ'ուսին անոր անունով:

Ինչպէս կը համբոս ժամը, երբ ամէն բան կ'անցնի քովէդ...

— Պիտի չգայ, — կ'ըսես: Վերգդ կը ցաւի...

Միտքդ կու գան անոնք, որոնք թեզ սիրած էին օր մը... Եստ չեն անոնք...

Աստղերը չէին սպաննուած այն ատեն:

— Եստեր անցան ճամբէս... անոնց չրթունքները վէրքոտեցան անունովս: Անոնք հայհոյեցի՛ն, պղծեցի՛ն անունիս ասարեքը, բայց մարմնիս կրակը չունեցան. կուլ շտուին արեանս հեղուկային կարմրութիւնը, անխնային զիս, զժբարտաջա՞ն յաւիտեան, կորսուեցան, դացին, փոշիի պէս մտնր...

— Գոնէ հայրենիք մը ունենայիր, — կ'ըսէ փոքրիկ աղան, որ քովդ չէ:

Միջոցը կը պայծառանայ թիչ մը:

— Ան ալ օր մը արիւնեցաւ սրտիս նման, — կ'ըսես՝ թքնելով մոխրամանին մէջ: Կը բռնաս աչքերդ:

— Մի պաշտեր մէկը, — կ'ըսէ փոքրիկ աղան. չ'արժե՛ր, ամէն բան պարապ է: Տե՛ս, սա չորցած ծաղիկը...

— Չե՛մ պաշտեր... Ին՛նթ ես... Կրնա՞մ միսերուս հետ կուռիլ... կրնա՞մ քանդել թոքերուս բլիթները, ըսէ՛, կըրնա՞մ, կրնա՞մ... Տե՛ս, ջրդերս ճղճուած են արդէն անձրեւէն. երկրաշարժէն, ափերուս մէջ առած եմ հսկայ՛, ծանր բաներ... Չկրցայ այս աղուն սրտին հետ խաղալ. չկրցայ այս աղուն սի՛րտը ունենալ:

Ձայնը կը դողդղայ.
— Մի խաղար անոր սրտին հետ, — կ'ըսէ փոքրիկը, — մե՛ղք է. տկար է, կը շարշարուի...

Յշխարհները կը լլկեն զիրար. սխալ է ըսածը... Կը զայրանան, Ակնէ՛ս. այս փոքրիկը բան մը չի գիտեր...

— Առաջին րոպէին չցանկաց զիս. անարգեց աչքերուս բոցը, վզիս ճերմակութիւնը. պոռաց վրաս վայրենիի պէս: Բզկտեց դիչերներս... Գողցաւ բազմաթիւ ժամերու հեշտանքներս, ուրախութիւններս:

— Մի զխայնանա՛ր, — կ'ըսէ փոք-

ընկ աղան, — օր մը, օր մը կը հասկընայ, կու գայ, կը շոյէ մազերդ, ծածրահըդ, ուսերդ, կը սեղմէ բոպէներուդ շարանը, կը սեղմէ շրթունքներդ:

— Ձեկա՛ւ, — կ'ըսես՝ առանց լալու: Թոքերդ սահայն թաց են անոր անունով, — պիտի չգայ երբեք:

— Մազե՛րը, թափած լայն ճակտին վրայ: շրթունքները, այս ամէնը, ամէնը օր մը տեսայ, երբ ուրիշ տղաներ կ'ուզէին, կ'ըզձայի՛ն մարմինս, օրեր, շատ օրեր առաջ:

— Ինչո՞ւ չգացիր միւսներուն, — կ'ըսէ կրկին ծեր կինը, որ այս անգամ կը մտննայ քեզի հեւասպառ, խոշոր աչքերը բացած պարապին...

— Միւսնե՛րը, շուտով ծունկի կու գային ասիւս: ստրուկս կ'ըլային. ի՛նչ որ ուզէի՝ կ'ընէի անոնց հետ... Այս տղա՛ն...



Բոպէն չի պոռթկար: Կը լռէ: Երակներդ կը պարեն խելագարուած կուրծքիդ մէջ: ձեռք կը դնես սրտիդ կողմը: ստամոքսդ կը պատուռի: Տկար չեմ, այո՛, տկար չեմ, եւ չեմ եղած երբեք... Սակայն այս անգամ «ոչէրքը» կը ճզմէ սիրտս. մկաններս կը բզկտուին անհամար կծկումներով: Մատներուս մէջ կը զգամ անոր համբոյրը... Ե՛րբ պիտի ունենամ անոր շրթունքները... Ե՛րբ...

Պիտի համբո՛ւս գիշերուան աստղերը, ասուպնե՛րը, ստուերնե՛րը...

— Դեռ երկար պիտի սպասե՛ս, — կ'ըսէ փոքրիկը, — պիտի չգայ: մի՛ սպասեր: Վիթխարի լեռներ կը ծածկեն Նորիզոնը: Վայրահակ ճակատներ կը տողանցեն փողոցներու վրայ: Պատերազմները կը ճեղքեն մարգոց տարակուսող ուղեղները: Ալեկոծ բերաններ կը պոսան Աստուծոյ անունը: Մինչ ան չըկայ, չկայ: Ո՞վ կայ... Մարդկութիւնը ցեխախորտած է: «Ապրե՛լու» եւ «ըզձայի» տենչը միայն կրնայ փրկել զայն,

այրեկու տե՛նչը, մահը մոռնալո՛ւ տենչը...

Սփոփանքը խոշոր է, հետքերը՝ խեղճ:

— Ինչպէ՞ս գիտցար, որ պիտի չըգայ, — կ'ըսես վայրկեան մը ետք:

— Հոգիս անմեղ է: Անմեղները գիտեն զուշակել, զգա՛լ գիտեն...

— Ես ալ գիտէի, — կ'ըսես տխուր, շա՛տ տխուր:

— Հապա ինչո՞ւ սպասեցիր, — կ'ըսէ տղան ապշահար:

Կր խուսափիս ժանտէն, վէրքէն եւ դանակէն:

— Միւտ պիտի սպասեմ, — կ'ըսես յոգնած, շա՛տ յոգնած, — մինչեւ որ...

— Մինչեւ վերջնայ գիշերը...

Դիմացի կապոյտ ծառին տերեւները կ'իյնան: Տուներէն կ'ելլեն խոշոր մուխեր: Աղջիկ-տղաներ կը պարեն փողոցին մէջ: Ամէն ոք ուրախ է, կը խայտայ:

— Ուրախ են, — կ'ըսէ՝ մատներէդ բռնելով:

Կը քաշես մատներդ:

— Ինչո՞ւ, — կ'ըսես, եւ կը օրբօրիս. կը տխրի՛ս անոնց ուրախութիւններով: Եթէ եկա՞ծ ըլլար ան... Երունը կու գայ լիզելու մատներդ, արեւը: Որքա՛ն կը մտածես անոր մասին... Թե՛րեւս ան հիմա կը դուարճանայ պոռնիկի մը հետ, որուն ամբողջ էութիւնը չ'արժեք այս մէկ վայրկեանդ, որուն ընթացքին կրնաս յղանալ մտածում մը, կեանք մը, խոշոր վիշտ մը, ստեղծագործութիւն մը... Անկեղծ չես...:

Ժապաւէնը կը նուազէ. մտիկ կ'ընես.

Ի՛նչ է այս եղանակը... Քամիյ ՍԵՆՍԱՆԱՅԷՆ է. Աստուած իմ. ի՛նչ տխուր է:

Յանկարծ կը տեսնես ուրիշ աղայ մը, որ դանդաղօրէն ձեռքը կը դնէ ուսիդ: Ձեռքները դուրսդ: Կը զգաս միայն անոր հպումը, մեղմ, թեթեւ...

— Որո՞ւն կը սպասես, — կ'ըսէ շոյելով սեւ մազերդ: Ձե՛ս ցնցուիր. բնական է անոր հպումը. կարծես զրացած ըլլաս օրեր առաջ, շատ օրեր առաջ,

տեղ մը, շա՛տ հեռուոր երկրի մը մէջ։
— Տղու մը կը սպասեմ, — կ'ըսես
ժպտելով։

— Հե՛տս եկուր։ Ան պիտի չգայ, —
կ'ըսէ քեզի կամաց, շա՛տ կամաց, —
մոռցիր զայն. տե՛ս, տես աշխարհը.
տե՛ս տղաներու հիանալի բազուկները։
— Չեմ, չե՛մ կրնար, — անօթի՛
եմ իրմով...

— Ամէն բան ունիմ, — կը շարունա-
կէ տղան՝ սպասած ձայնով։ Օտար չէ
իր ձայնը։ Լուս՝ կը նային անոր խա-
զաղ աչքերուն. այս այն տղան է, որ
տարիներ շարունակ սիրած է քեզ. քան-
դած է ամէն բան քեզի համար, չքած
է ամէն բան, տառապած է քեզի համար,
ողասած է քեզի համար եւ դուն քալած
ես ուրիշ ճամբաներէ, ուրիշ քաղաքնե-
րու մէջ...

Ատղերուն շուքերը կը մեռնին ոտ-
քերուդ տակ. երկինքը կը սկսի մութ
գոյնիւր առնել։ Չեկաւ։ Պիտի չգայ...
Օդը կը սկսի նուաղիլ. թռքերդ կը մա-
րին։

— Եկուր հետս, — կ'ըսէ կրկին տը-
ղան, — եկուր, Եան զ'էլիզէ երթանք,
հոն ծառերը դեղին են, դետինները՝ կա-
նաչ, օդը՝ բարակ, երկինքը՝ կար-
միր, սիրած գոյնդ, եկու՛ր. ապրինք
կեանքը. մոռնանք գերեզմանն ու հոգե-
վարքները... պատերազմներն ու արիւ-
նը...

— Ես զայն կ'ուզեմ, — կ'ըսես պա-
տըտած ձայնով. կը շօշափես երակիդ
հուրը, — անոր շրթունքները կ'ուզեմ
զգալ մորթիս վրայ, ամբողջ մարմնիս
մորթին վրայ... Անոր շունչը կուլ տալ
կ'ուզեմ. կը հասկնաս, չէ՞, պիտի
հասկնաս երբեք։

— Ի՞նչ է անոր անունը, — կը հար-
ցնէ տղան քեզի. յանկարծ կը զգաս, որ
յորձանքի մը մէջն ես. կը սթափին. խո-
շոր կը բանաս աչքերդ։

— Չեմ գիտեր, չե՛մ գիտեր, — կ'ը-
սես ուժգին։ Կը լռես.

Ափերուդ մէջ վարդազոյն եւ քան-
դակուած բիծեր կը տեսնես...

— Ինչպէ՞ս կ'ըզմաս ազայ մը, ու-
րուն կը սպասես ժամեր եւ որ անուն

իսկ չունի քեզի համար, — կը հարցնէ
տղան վշտահար, քարկոծուածի երե-
սով...

— Տիեզերք է անոր անունը, —
կ'ըսես տանջուած ձայնով, — չե՛ս հաս-
կընար. Տիեզերք է։

Կաթիլ մը ցօղ կ'իջնայ աչքերուդ
վրայ։

— Այդքա՛ն անօթի ես, եկու՛ր,
ես կը սրբեմ երակներուդ դեղինը, կը
ջնջե՛մ ուղեղիդ աննդը. եկու՛ր, քայինք
հրտաբարակներէն, երթանք Սէն Միշէլ,
Սէն Ժերմէն տէ Փրէ. ո՛ւր որ ուզես,
երթանք. խմենք հորիզոնները, խմենք
դինի, արիւնի պէս գինի. պոռանք, կան-
չենք կապոյտները երկինքներու, հան-
դիպինք խենթութիւններու, խելագար-
ւինք անծանօթ ժայթքումներով, վրդո-
վիչ բաներ դոն ուռեցնելու մեր մար-
մինները. թմրեցուցիչ չառնենք, բայց
թմրինք մեր համբոյրներով, մեր զըզ-
ւանքներով, եկու՛ր, ես քու մարմնիդ
կարօտովը ապրեցայ...

Անոր կանաչ աչքերէն անառակ դը-
ժոխքներ կը հոսին։ Պիտի պառկիմ ա-
նոր թեւերուն մէջ, պիտի սրբեմ քրտին-
քը անոր մազոտ կուրծքին, սակայն պի-
տի չըզմամ զայն, պիտի չզգամ զայն։
Վայրագորէն դուրսդ կը դրկէ թեւե-
րուն մէջ...

— Որքա՛ն վճարեցիր երազիդ հա-
մար, — կ'ըսէ ան բարկացած ձայնով,
— ըսէ՛, չո՛ւտ, վերջացու՛ր զժոխքս...

— Դրամով չի դնուիր այս երազը։
Տառապած մատներդ կը դնես սեղանին
վրայ, կը հեռանաս իրձէ, կը պժշտաս
այս ամէնէն...

— Դեռ պիտի սպասե՛ս, — կ'ըսէ ըս-
պասեակը՝ անհամբեր նայելով թարթիլ-
ներուդ հրդեհին։

Կրունկին ճոխչը կը պրկէ սիրտս։

— Ապո՛ւշ, — կ'ըսես առանց ուզե-
լու, — ապո՛ւշ...։

Անպատը կը մեծնայ երազիդ պէս։
Կը մտածես։

— Պիտի գրեմ մինչեւ որ գայ, —
կ'ըսես խարուած ձայնով եւ կը ծռես զը-
լուխդ էջին վրայ։ Կը սկսին...

Ձմե՛ր տեսայ զայն առաջին անգամ,

— կը դրեա թուղթին վրայ, հուսկու
թեւերով կը դրկեա միջոցը, — կանուխ
չէ, Անոր շրթունքները կը շարժին ու
բիշ կնոջ մը որովայնին վրայ: Թեւերը
սեղմած են անոր պարարտ արզանդը:
Ձեռ լար, թող անցնի, թող անցնի՛ այս
բողոքն:

— Մի բռնեք ձեռքերէս, — կ'ըսես
գառնալով ծեղ կնոջ, — մի յուսահատե-
ցընեք զիս: Ատողերը ճղմուած են, գի-
շեր պիտի ըլլայ... Նամակս շատա՛ւ...
Գիտեմ, գիտեմ, առա՛ւ, սակայն պիտի
չզայ յիմա՛րը...

Անգամ մըն ալ պիտի շոշափե՞ս գե-
հէնի մը ստինքները...

— Ես քեզ պիտի տանիմ Աէն Միշէլ:
Պիտի երթանք Հիւշթի սրճարանները
փոշուած պէս պիտի սպրիկնք, ե-
կո՛ւր, — կ'ըսէ կրկին երիտասարդ աը-
դան, — մեր բերաններուն մէջ ցնծու-
թիւն պիտի ըլլայ, մեր ակունքներն պի-
տի ելլեն ըմբոստ կրակներ. առուօտ
պիտի չըլլայ մեղի համար. մեր հո-
գիները պիտի սիրեն այս բոլորը: Ե-
կո՛ւր, աղջի՛կ. գեղեցիկ ես, շա՛տ գե-
ղեցիկ: Քեզ պիտի տանիմ հայրենիքդ,
հո՛ն՝ ուր մարդիկ դեռ կը մեռնին, կը
սպաննուին անդադար: Գուն թու ըղձա-
ցած հողդ պիտի ունենաս: Պիտի քնա-
նաս այլեւս: Մղձաւանջդ վերջ պիտի
զանէ: Քեզ պիտի տանիմ նոր հողին...

— Թեքեւս ճիշդ կը խօսիս, — կ'ըսէ
ծեղ կինը կամաց ձայնով, — դե՛ս,
խենթ մի ըլլար, ի՛նչ կը սպասես տղու
մը, որ չի ճանչնար քեզ. չ'ուզեր ունե-
նալ անուանիդ գրեթէ իր կողերուն մէջ
միբճուած, կը ծիծաղի գեղեցիկ երա-
զիւ վրայ: Գնա՛, աղջիկ, դե՛ս, զը-
նա՛ այս տղուն հետ. այլեւս մի գար այս
հողին...

Ձուրը կը խաղայ սեղանին վրայ.
աստղը կախարդուած՝ կը մաքրէ գառ-
նութիւնները: Վ՛րձ ունիս հոս:

— Եթէ ուզե՛մ, — կ'ըսես՝ առանց
լայու, — եթէ ուզեմ, այլեւս կը վեր-
ջանայ այս ապրիլու նոզկանքը, այս ա-
մենի, անծայրածիբ նոզկանքը:

— Գնա՛, — կ'ըսէ կրկին
— դե՛ս...

— Մի՛ օտարեցիկ ցնորքներու ծի-
ւերը, — կ'ըսէ տղան, — մի լքեք զիս
մինակ. դերեղմանները մօտիկ են:

— Ես լացող տղաները չեմ սիրեր,
— կ'ըսես հանդարտ ձայնով, — ան ու-
ժով է, խրոխտ է, հպարտ է անոր
ձայնը կրճոտ է, շրթունքները՝ զուտ:

Աչքերուն ծովը կը զրգռուի ահարեկ:

— Ի՛նչ, երբ նոյնիսկ չես գիտեր ա-
նունին ասուերը, չես զգացած անոր
համբոյրը, չես խմած անոր լրճուեքը...

— Տիեզերք է ըսի անոր անունը,
չէ՞ս հասկնար, պիտի հարուածէ, կը
զգաս սպասկը...

— Անթի ես՝ կտոր մը հաց չի տար,
ծարաւ ես՝ շրթունքներդ չի թրջեր, մի-
նակ ես՝ չի գար մատներդ սեղմելու, —
կ'ըսէ կատաղի... Եունին աղաչող աշ-
քերը կը շոյնն հոգիդ:

— Ե՛ս ուղեցի այս ամէնը. միա՛յն
ես. տիեզերքս ամփոփուած է շրթայի մը
օղակին մէջ...

Կը ծռես գլուխդ. կը զգաս սուր
նայուածքը.

— Ի՛նչ է անոր անունը, ըսէ՛, խընդ-
բեմ...

— Անունը անոր, գիշերներուս ժա-
մերն են: Գրեթէ ուրիշ գրուած կեանքն
է: Անոր չեկող թիւերն են, որոնք կը
զրկեն անթի մէջըս, կը վերջացնեն
չունչիս անապական կրակը, կը ձգեն
զիս այն գեհեհին մէջ, որուն որովայն-
ներէն կը հոսին շարժարուած օղակները
շրթայիս, երկա՛ր շրթայիս. անհամար
օղակներով շրթայիս:

Տղան կը թարթէ աչքերը:

— Տե՛ս անոր դէմքը ջուրին մէջ.
չէ՞ս տեսներ, հոն, թու դէմքդ. լա՛ւ
նայէ. հայելիի պէս կը փայլի...

— Ձե՛մ ուզեր, չեմ ուզեր այդպէս
տեսնել զայն: Արեանս օտնոցը կը խեղ-
դէ սիրտս: Կ'ուզեմ անոր մկաններուն
մէջը ըլլալ: Զօրաւոր եմ, գիտեմ, սա-
կայն կ'ուզեմ շա՛տ տկար ըլլալ անոր
զրկին մէջ... սեղմուիլ պաղէն, ցուր-
տէն, մրրիկէն... խառնուիլ հետը:

Տե՛ս, հեռուն, պիտի դա՛յ արդեօք.
պիտի մեռնիմ իր մէջ, այն տղուն մէջ,
որուն մասներէն կախուեցայ օր մը, ճա-

կատարելի պէս ուժով օր մը, երբ աղէտը
հետու էր, Ժպիտները լեզուիս ներքեւ...

— Մի սպասեր, — կ'ըսէ տղան կար-
մըրած աչքերը թարթելով, — պիտի
յոգնե՛ս գիշերէն, երբ չի գար: Տե՛ս,
ճամբաները պիտի մթննան: Մտուերները
կը յատկանան պարելով: ցերեկը պի-
տի վերջանայ: Լոյս չկայ եւ օդը կը սեւ-
նայ: Իսկ քու դէմքդ կը ստանայ ճղնա-
ժամային ստուերներու պատմուճաններ:

— Սրտիս լոյսը կը տեսնեմ միայն:
Չո՛ւրն իսկ կը փափոսայ անոր անունը:
Տերեւները չի՛նկան, իսկ մասնեքս կը
զգան բարբարոս հետանքներ:

— Ըսիր անուն չունի, — կ'ըսէ ծեր
կիկը արհամարհուս, — կը փրփրիս ցա-
ւազարի նոպայով:

— Այդպէս անարգանքով մի խօսիք:
չե՛ս տեսներ որքան անօթի եմ իրձով...
Որքա՛ն երակներէս կը պակիի հեղուկը,
որքա՛ն թուքս կը կլլեմ ցաւելով: Ձէ՛ք
տեսներ զալարիլը հարուածահար մարմ-
նիս:

— Ինչո՞ւ չես լար, — կ'ըսէ փոք-
րիկ տղան մօտենալով, եւ ազտօտ ափե-
րը կը դնէ այտերուդ վրայ:

Ձեւ գուերի աղտէն:

— Պիտի բղձամ գայն, — կ'ըսես՝
բռունցքդ սեղմած:

Կը քալես անապատէն. ալիկոծ ճա-
կատով, լլարծուն բերնով, մոլորած ու-
զեղով. չես յոգնիր:

— Ինչո՞ւ երազդ կ'ուզես մեռցնել,
— կ'ըսէ ծեր կիկը խոպտո ձայնով, —
չսպասեցիր զարնան. ծովերու շարժու-
մին, ջարդուած ալիքներու նուաղումին:
Օր մը, ազլիկ մը նշմարեցիր անոր
կուրծքին վրայ պսակած՝ ազլիկը կը յօ-
րանջէր: Ցնո՛րբ: Ամէնը խարուած են:
Ան բանաստեղծ է, գիտէ: Մի ըղձար այդ
աղուն մարմինը:

— Ի՞նչ, — կ'ըսես ճմլուած ձայ-
նով. — Ի՞նչ կը փնտոէ այս ամբոխին
մէջէն, կը տեսնեմ անոր սեւ աչքերը.
Թարթիչներուն փնտառուքը. պիտի խն-
թանամ...

— Կը փնտոէ վիրաւոր հորիզոնին
հանդիսոր...

— Ինչո՞ւ մահուանդ չես սպասեր,

— կ'ըսէ փոքրիկ տղան վախցած ձայնով:
Անոր վտիտ կունակը կը ծոփ. ոտ-
քերը կը մտին բիրտ հոսանքէն...

— Մահ չկայ, — կ'ըսես Ժպտելով...
Սպասեակը խանդաղատանքով կը
նայի բիբերուդ. կարեկցութենէ աւելի՛
զուժ կայ անոր նայուածքին մէջ. պի-
տի սպաննես այս բոլորը... Ինչ որ
զուժ կայ, բոլորը... Վե՛ս, ե՛ս պիտի
դթամ անոնց ամէնուն վրայ. ե՛ս պիտի
չվարնամ խաւարներէն եւ անդունդնե-
րէն...

Խենթութիւնդ կը սեղմէ մարմինդ:
Գուն կաս:

— Գիտէիր, որ պիտի չգար...

— Որո՞նք վրայ պիտի արգահատիս:

— Ինչո՞ւ տխուր ես ուրեմն, — կ'ը-
սէ տղան քաղցած Ժպտելով եւ կը բռնէ
սիրահար ձեռքերէդ:

— Օր մը միայն ուզեցի գրկել սի-
րելու վայրագութիւնը:

Օր մը միայն... Չուզեց... Գնաց...
Մազերը ծոփուն՝ հեռացաւ: Ետեւէն չը-
կանչեցի. անօթի եմ իրձով: Հողիս շափ
կը փնտոեմ գայն: Կը կանչեմ իրեն:

Ծեր կիկը կը սկսի, փոխուած.

— Մի ձգեր, որ գիշերը տանի քեզ.
զնա՛, փնտոէ գայն. մի ձգեր, որ անձ-
կութիւնը փաթթուի եւ կառչի, կառչի
ջիղերուդ, պլլուի գոյութեանդ, աւազ
ըլլայ, անէանայ այդպէս, անէացնէ քեզ:

Ուքի կ'ելլես՝ պոռալով.

— Գնա՛, — կ'ըսես, թեւէն բռնելով,

— գնա՛, մի ազտոտեր երազս. ես կը սի-
րեմ այս վայրկեաններուն հնչիւնները,
բողբոջներուն ամեհի զօղանջը.

Մի ըսեր այլեւս անկարելի բա-
նեք. բաւերը անօգուտ են...

— Արեւդ ուշացաւ, — կ'ըսէ տղան՝
կրկին փէշերէդ բռնելով, — միայն սաս-
ղըդ կը բաւէ՞ քեզի...

— Արեւս պիտի ծնի անոր անունով,
— կը պատասխանես՝ շունիդ ահանջները
չոյնելով...

— Ըսէ՛, ըսէ՛ անունը անոր, հեղ մը,
հե՛ղ մը միայն. պիտի գտնեմ գայն. բե-
րեմ մօտդ:

Մուռը ազօթքի պէս կը ծածկէ բո-
լորը:

— Շրթունքներդ ճեղքուած են, ո՞ր աղջիկը քեզ այդպէս վայրագօրէն համբուրեց, — կ'ըսես կանաչ աչքերով տըղուն՝ չրթներուն վրայ դնելով սառած մատներդ...

Կ'ուրախանայ. այտերը կը կարմրին տենդով:

— Զիս համբուրեց այն կինը, որմէ օր մը զաւակ մը ունեցած էի: Մեռած... Գուն ալ չեկար...

Սպասեցի, օրեր սպասեցի. նամակ ալ չէի դրեր:

— Ան կաշկանդած էր սիրտս:

— Անկախ՞ն, ճակատագրակա՞ն կին. չես գիտեր կեանքս: Գերեզմաններուն մէջ քեզ կը կանչէի, եւ դուն ուրիշ տղայ մը կ'երագէիր... Անգութ աղջիկ ինչպէս ես տանջուեցայ, դուն ալ, դո՛ւն ալ, քու կարգիդ, պիտի տանջուիս ուրիշ տղայէ մը, որ պիտի նըւաստացնէ՞ քեզ... պիտի թքնէ՞ վրագ...

— Գուն չես ճաննար զայն... ես մտած եմ իր մէջ, օրե՛ր եւ դարեր առաջ... Անոր հոգին գիտեմ... որտի՛ն մկանները համբած եմ. գիւրագրգիռ ջիղերուն սարսուռը տեսած եմ... բանաստեղծ է ան:

— Ինչպէ՛ս: Անունն իսկ չէիր գիտեր... կը ստե՛ս... ինչպէ՞ս կրնաս ըզմալ մէկը, զոր շատ քիչ ճանչցած ես:

— Առ մարմինս եթէ կ'ուզես, — կ'ըսես վերջապէս յոգնած, — բայց բան մը պիտի չգրամ. կը հաւատա՞ս, ո՛չ մէկ բան: Ես տիեզերքը ուղեցի միայն, զոր շատ քիչ ճանչցած էի:

— Այդպէս չեմ ընդունիր. ես կ'ուզեմ կուլ տալ թոքերուդ կարմիրը, լիզել արիւրուդ արիւնը, տե՛ս, Ակնէս, տե՛ս, ճամբադ կ'երկարի. չղթան չի՛ ճեղքուիս սակայն. կ'առնեմ շղթադ. եկո՛ւր ինծի չետ, եկո՛ւր, մնացի՛ր չետը...

— Ինծի սպասողներ կան, չեմ կըրնար:

— Ես կը ճգմեմ բուրբը. շղթա՛ն ալ, միւսներն ալ:

— Շղթաս չ'ելի՛ր, պիտի չելլէ. չըղթաս կը կրէ անոր հոգին. կ'սած է ինծի, մարմին առած է ինծի չետ, ձուլուած է չետս. Տիեզերքս է...

— Կը կ'քիս անոր ծանրութեան տակ, Տիեզերքին տակ, իղձերուդ տակ:

— Գիտի սպասեմ վախճանին. երկա՛ր պիտի քալեմ. պիտի ճեղքեմ անպատները. պիտի քալեմ, թափառիմ, հողեր փնտռեմ...

— Ճամբան երկար է, երկինքները՝ խիստ, մթնոլորտը՝ անբարոյ, մարդիկը՝ հիւանդ...

— Պիտի հասնիմ հո՛ն՝ ուր ան ալ պիտի ըլլայ. աստղս կը կրեմ արիւրուս վրան... աստղս չի սխալիր:

— Մի սպասեր, խե՛նթ աղջիկ, կեանքը կարճ է. եկո՛ւր երթանք:

— Իմ կեանքս պիտի երկնայ շատ կարճ ժամանակի մը մէջ: Կեանքս, կը լսե՞ս, պիտի երկնայ... երկնայ... ըռպէններու շափ, ակնթարթի մը չափ...

Գուն, Ակնէս, պիտի չսպասես այլեւս. ոտքի կ'ելլես. շունդ մտայլ՝ կը հասկընայ. արիւր կը լիզէ. կը վճարես ըստ պատեակին... կ'ելլես:

Թուղթերը կը մնան սեղանին վրայ: Կը լսես փոքրիկ տղուն ձայնը, որ ետեւէդ կը պոռայ:

— Գիտե՞ս, Ակնէ՛ս, ես գիտե՛մ ա՛նոր անունը, սակայն պիտի չըսեմ, երբե՛ք պիտի չլսես անոր անունը... երբե՛ք... որովհետեւ ան շատ քիչ ճանչցաւ քեզ, շա՛տ քիչ...

Ա. Ն. ՉԱՐԻՈՒՏԵԱՆ

Կ Ո Ր Ի Ի Ն Շ Ա Հ Ի Ն Ե Ա Ն

ԵՍ՝ ԾՈՎՈՒՄ ՄԷՋ

Արգ

ճերմին ջուրեր քաց կը լիզեմ
ցամաք ջուրի պապակով
ես ջրամոյճ կ'ուզեմ որսալ հուսկ փշուրներն շպարի
միակտուր ճոյլ ջուրի բզիկ-բզիկ կարօտով

Այսպէս գիտեմ ես կը ծփամ ջուրերու մակերեսին անտարբեր
սուզումներու հեշտանքին
կորիզներու միութեան
շնչող անմահ ջրախեղդի անդր... գոյնի աշխարհին

Բացուիմ հասնիմ խոր ճուլուիմ
իբար հունիմ
ջուրս ցամաք ու անտի եւ քարն անհուն արտաքին

Գունտ մը գանգուած՝ ես եմ այդ
լեցնել օ գիծն երկարող
մարթիս ամէն բիշէն
դէպի միջուկ տեսլական
լեցնել գիծն իմ քեւերով
արտադրիծն յար հասուող
անթիւ ուրիշ իմ գիծերով
նայն միջուկին միշտ ձգտող



Միջուկ

օ ծնելով

մշտափոխով ձգտումով

ՈՍԿԻ ԶԿԵԿԸ ԿՐՐՍԱՄ:

ՄԵՂԱՊԱՐ՝Տ , ԹԷ...

Թոյլ կողերու մամուռ շունչը ձեր քելով,
կը պարէ՛ք դուք ուրաւականներ
հմայական,
եզկնի,
բարի.

ու դոպ պատճառող...
 Բայց եւ ինչո՞ւ չեմ կրնար
 միանալ ձեր հանդէսին,
 կամ իմ սրտին հաշիշամու մեղկ աչքերէն
 աւելի, քաղի՛ն ոսկեփռոշին... չե՞մ կրնար...
 Ձեր ոսկերիզ պատմութեանն ոսկի փռոշին,
 գոր ի՛նչ անգոյ, բայց մակնիշուած
 խօզովակներէ կը շնչեմ,
 եւ երբեմն դգայներով դուրս տալ
 կ'ուզեմ... կրնա՞մ արդեօք...
 Հոգ կը բուրէք, կը ստեղծէք
 հասած չարացած գարշ արեան տեսիլքն՝ հասօզ
 Բարբառիչներու տեղներուն քառակույնը :
 Իրարու մէջ սօսայն կապած, լաթիւրիկնոս լեզուներով
 արնու սերմեր ցոյց կու տամ մթնանմայ մասերուս՝
 կը խենթանամ ցաւագար :
 Ձիս կ'արձակէք իմ առօրեայ հեւերէս,
 Բանձրախառ ու մածուցիկ բայրերու
 Էգ լինին մէջ կը երէք գիս :

Սիրաներուած եմք երբեւէ, բաժնուած՝
 կորստական ու մահահոտ անդունդներով,
 որոնց խուլ ու աննուան միջոցին վրայ, միջոցին մէջ դոպացող
 համբոյրներով օղային՝
 մեք երբեմն կը հազորդուինք...
 Մենք սէ՞ր կ'ապրինք, թէ կարօտ
 ոչ-օղային համբոյրներու՝
 մետաղ-ուկոր շօտափող,
 չծաղկող՝ անդունդներու տեսիլքն հետ,
 տեսիլքն մէջ փրփուրի՛ պէս չգիրցող
 սէ՞ր կ'ապրինք մեք, թէ սիրոյ շուք կը լիզենք...

Ձեր անկենդան տեղերուն
 պարերովը խօլական
 շունչ կը փչէք դուք ինձի, հեռուէ հեռու,
 եւ պարերուն ձեր խօլական եւ շունչ կու տամ :

Ձիրար պուտ-պուտ կը համտեսենք, իրարու շունչ կը կտցենք,
 Ձիրար աչքայէս բջիթ-բջիթ կը սպաննենք...
 Այդ ե՞ս եմ ձեզ կը հալածեմ, թէ դուք գիս...

Կ. ՇԱՀԻՆՅԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

(Վ Է Պ)

Հերձուածող Մաթիկը, հիմա լաւ չեմ յիշեր, 1900ին քանի տարեկան կրնար ըլլալ: Հասունութիւնը, դէմքին դիմերուն փաստը, չողնութիւնը կ'ընէին սակայն զգալի, թէ երիտասարդութեան առջի կրակները իջած էին քիչ մը: Երեսունին ժօտիկ, կամ քիչ մը անդին: Մտոյզ էր սակայն, որ Անգեր էր սանձաձոր շորս տարի առաջ, ինչ որ դէպքերու լեզուով կը նշանակէ Մաթիկ մը, հայոց աշխարհին վրայ, 96ի Վարդերէն անձիջապէս ետք, երբ հրդեհուած գիւղերն ու քաղաքները դեռ չէին գտած իրենց կերպարանքը ու մեր ժողովուրդը սկիզբը բրած էր իր պատմութեան ամէնէն սեւ արհաւիրքներէն մէկը, ցայցալոյս անունով յորջորջուած: Մաթիկ Մելիքիսանեանը սակայն անբաւական կը նկատեմ լրիւ խորհրդանշելու համար մարդերը, որոնք մեռան Այաշի բանտէն դուրս, Տիգրանակերտի ճամբուն վըրայ: Ներկայ վէպը (ՎՄնացորդացի Դժոխքը) պիտի գտնէ այդ մարդերը իրենց նահատակութեան իրարանին, շղթայակապ, մահուան հսկումէն առաջ, դատելու իրենք գիրենք, իրենց ժողովուրդը, որուն ճակատագիրը Քերեւ ինայունցաւ իրենց մահապարտի վերջին բողբոջներուն, թէեւ ուրիշ տեղեր թուրքերը մահէն առաջ այդ անպատում վայելքն ալ պարտադրեցին զոհերուն, անոնց պատկերելով ընդարձակութիւնը կատարուածին: Ու պէտք է քաշել:

Հերձուածող Մաթիկը իր սերունդէն — յեղափոխական — կը զատուէր ուրեմն ուրիշ ալ մասնաւորութեամբ մը ու եթէ շատ չէք գտներ բառը՝ վրիպանքով մը: Անիկա ՏԱՌԱՊԱՆՔԻՆ ղէմ ծանր իր խաչակրութիւնն էր: Այսքան յստակ չէին իր բառերը, այդ հողեվիճակը ինծի թելադրելու համար: Բայց որոշապէս ես կը զգայի, թէ իր պահանջն էր ազատագրուիլ, բարձրանալ ազգային տառապանքին, գտնելու համար ամբողջական տառապանքը ու... զոհաբերուելու ճիշդ այդ ճամբուն վրայ: Կը մտածեմ, թէ ընկեր Մաթիկը կը հաւատար, որ թուրքին եւթաղանին տակ իր աչքերը զոցող հայ մտաւորականը կարելի էր երջանիկ նկատել, քան միւսը, որ հեռու Արեւելքի սանձակառոյց ամայքներուն մէջ, ամէն բողբոջ կը նահատակէր իր հողին, ցարական քոտիկաններուն նախատինքին ներքեւ: Գրեթէ դուշակեցի այդ երանութեան զգացումը, երբ ներկայացուց անիկա հայ հարսնուկը մորթուած թուրքէն, անշուշտ աւելի բախտաւոր, քան միւսը, ան ալ տարեկից կին մը, Մոսկուայի «խաւար որջերում», հոգեկան ու մարմնական իր անպարագիծ գեղեցկութիւնը ըրեր էր ապրանք վաճառքի,

ամէն օր, ուզուած դինով, ուզուած անգամով, բզկտելու համար անտես
 եւթադաններուն ներքեւ գիւտովին ու ախտաւորին, ոճրագործին ու դազա-
 նին, մեռնիլ չկրնալու ալ դժբախտութեամբ մը: Մաթիկ միշտ կը հաւա-
 տար, թէ թուրքին ձեռքով մարդներու մէջ խարանուած ծերունին նուազ
 արժանի էր արցունքի, քան այն միւսը, որ միշտ նոյն «Մոսկուայում»
 (Ռուսաստանը այն քաղաքն էր անոր մէջ ու յիշեց ալ Տոսթոյեփսիին ար-
 համարհանքը Պետրոսի քաղաքին վրայ), «Աի սաւառ անկիւնում» ոտտին
 խկ կ'անգիտանար, սպասումին մէջը փշուր մը աւելցուքին, որ դէմի շքեղ
 րնքարանէն լման օր մը ճամբայ կը դնէր գալու համար իրեն, երբ, իր
 նուազ աշքերուն առջին, շուքերու պէս, հազարներ կը ժանէին, խմելէ,
 ուտելէ, կշտանալէ ետք, կ'ելլէին դուրս, իրար քաշքշիւով, թեւ թեւի,
 մուշտակին, բոյրին, ձայնին, նուագներուն ու մերկութենները այլապէս
 հոտաւէտ սրունքները դէպի: Մուրացկանը, ծեր ու անկար, Մաթիկին
 բերնին մէջ քննա մըն էր, թէնև որոշ յոյզով մը: Կար, միշտ այդ բերնին
 մէջ, աւելի մեծը, — թշուառութի՛նը գործաւորին, որ նեարդ-նեարդ կը
 հանէր հացը իր գաւակներուն, սեփական իր մարմինէն, չմանկելով մեր
 բանուորին, որ հողէն կը գտնէր իր գոհողութեան մէջ որոշ բարիք: Գոնէ՞
 ապա օդ: Աղուոր ջո՛ւր: Քիչ մեղք: Իր ըսածներուն օ՛չ միայն ետեւն էր
 անիկա, այլև ներսը, լման, «խորատոյզ» կ'ըսեն մեր գիրքերը: Համոզու-
 մին ջերմութի՛նը, որ վարակիչ էր շափագանց ու կ'անցնէր իմ ալ դիւրայոյզ
 խոտնուածքին, քանի որ աշխարհին այդ անհուն զրկանքը ես ունէի իմ բո-
 ջիջներուս ներքը, մեծ բառով մը՝ ազամանդի պէս ընդելոյզ: Գաղաքի
 բանուորներ էինք մենք, տունով, հայրս, հողերուն վրայ ուրիշին: Մայրս,
 ես՝ մետաքսին վրայ: Ու ահաւոր, այնքան մօտիկ այդ անցեալը դեռ փա-
 մանակ չէր գտած մեղմանալու, պաղելու՝ քաղաքէն գիւղերը դարձէս ետք:
 Գիտէ՞ք որքան քիչ էր գեղջկականը այդ գիւղերուն մէջ: Ատկէ՞ թերեւս
 իմ արամադրութի՛նը ամբողջ մարդկութեան երկաթագրուած սա տառապան-
 քը զիմուորելու կրկնապատիկ ուժգնութեամբ: Նրիտասարդ էի ու տառա-
 պանքը կար իմ ամէն մէկ մասիս մէջ: Տառապանքը, զոր տասը զլիտազիր
 անկարող են սեւեռել թուղթին: Ու կը զգայի, թէ իմ մանկութի՛նը, պա-
 տանութի՛նը այնքան սեւ, այնքան արցունքով թաց, խաղ ու հարսնիք էին
 մօտիկը գրուած սա ընդարձակ ողբերգութեան: Մաթիկ կը խօսէր բան-
 տերներուն անթութենէն ու իմ մտքին կը շինուէին, կայծակնային արա-
 գութեամբ տարիները իմ մանկութեան: Անթի՛: էի անշուշտ, օրով, եր-
 բեմն չարաթով, երբեմն լման ամոռով: Բայց չէր ուշանար պահը, երբ կը
 բացուէին սահանքները առատութեան, սօնի մը, հարսնիքի մը, կնունքի
 մը, մեռելի՛ մը նոյնիսկ ու երբեմն ալ հանիդարձի ձեւերուն տակ: Կը յար-
 դարուէին մեծ տուններու կրեք-չորս յարկերուն վրայ հարիւրներու անդ
 տուող երկար սեղանները ու սկիզբ կ'անէր կոշուէքը, տէրտէրով, երբեմն
 վարդապետով: Օղի: Գինի: Պար, Զուռնա: Թմբուկ: «Է՛», առատութեանդ
 մեռնիմ, ողորմած թագաւոր», կ'ըսէին ծերերը ու կը խմէին: «Աստուած
 ընդունակ ընէ», կը պոռային աղաքը ու կ'ուտէին: Ու ես մէկն էի անոնցմէ,
 որոնք կը կոխէին իրենց ստամոքսը, աղիքները, փորին լման խորշերը առ-
 նըւազն շարթուան մը կ'ըտումին համար: Գուք ծպիտով կամ դառնութեամբ
 կը կարդաք ռա տողերը... Մաթիկ չէր տեսած այդ հանդիսանքները, ու-
 բոնք 1900ին արդէն պատմութեան կը պատկանէին, մեր ժողովուրդին են-
 թարկուած մեծ կորուստներուն պատճառով: Թուրքին ա՛հը: Թերեւս պի-
 տի փութաք հարցնելու: Ան ալ կը յոգնէր ինքնիրմէ: Մաթիկ ինծի կը բե-
 րէր, զարմանալի ուժգնութեամբ, անյատակ կակիծը, որ ռուս հողին ըս-

տորաշխարհը կը յօրինէր: Դուրեան սրբազան ինծի տուած էր «Մահուամ տունի մը յիշատակները», երկու ժամ ետքը առնելու համար: Գիրքին առնունք միայն մնացեր էր մտքիս: Աւելի յետոյ, տասնամ ժը, ես պիտի հասկընայի, թէ ինչու այդպէս էր գործեր իմ ուսուցիչը:

Իմ ցաւերը բա՛ւ սակայն, առանց գիրքերէ թունաւորման պէտքին, որպէսզի Աստուծոյ անուշիկ արեւը, թերթ մը մենաւոր ծաղիկ, ազատ, ոտականէ, թուրքէ շահուած, շծանրացած ջրի ակ ժը, ժպտիլ կընար մը, տանիքի մը տակ, Հոգերուդ հետ գլուխ գլխի հաշուուիլ մը, առնուադն կուշտ անցած որ կլէկին արժէքի: Ընկեր Մաթիկը, տյնքան յորդ՝ սա կարուածներուն պարագրկուեմը փորձած ատեն, այնքան իրաւ, մեղածու, կը դառնար հետու, մշտային, մախիկ, երբ կը շարչարուէր՝ տեսեղու համար պատկերը առա յեղափոխականին, գիծէ դուրս մարդեր, ահաւոր անցանկէ մը այդպէս մզուած դէպի իր օրերը, մոտաւորապէս դար մը զոհի խուշ ճշուամոյր: Շատ աւելի վերջերը պիտի տեսնէի դիրենք, կեանքի ամէն սանձուխներուն, իրենց հայրենիքէն վտարական, գոհարակուս մեղքերով, երբ լաթ կը լուսային, կամ անհասարակի գրաւութեամբ իրենց աչքերը կը գործածէին՝ փողոցէն անցնողներուն ծաղիկ ծախելու: Մարդեր, Պոլիս կամ Փահլիւք, Աթէնք կամ Փարիզ: Տարօրէն խոր: Հիմնովին տարբեր Արեւելիքին բնատնի բոլոր ցեղերէն: Ու հիմա կը խորհիմ՝ այնքան ալ հաշտ ընկեր Մաթիկին զգայութեան: Գիրք մը շի բաւեր այսօր, ինծի, այդ մարդոց ներքին, ինչպէս արտաքին դիմերը վերլուծելու: Սեւն ու մերմակը, անկարելի բնականութեամբ մը ոչ թէ զով զովի, այլ նոյն մակարդակի: Ու շատ աւելի մեծ, խոր, իրաւ, զրկանքը հանդուրժելու, կեանքը բաշխելու, աստուայանքը հաղնելու ու վայելքը ոսկեգոծելու տրարքներուն մէջ, զոհողութեան, Հոգեկան այլայլման աղբիւրներէն, քան ինչ որ յաշտած է սալու ետամեծ Տոսթոյեւիչին, իր վէպերով: Մաթիկ հաղորդ էր այս ամէնուն: Չեմ հարցնիր հիմա, թէ ինչու այնքան կը մեծցնէր անիկա հարստութեան ու աղքատութեան սա տեսարանները մերօրեայ մեծագոյն կրօնքին: Կը զգայիր, որ անոնց իր աչկերտութիւնը տեսարաններուն մէջ ունէր ծանր հաճոյք: Ձրլային իր մօրութիւնը, լեզուին արագ ու բնական վազքը, պիտի մղուէի թերեւս մեր ժամուն պատկերներէն մէկէն փախած առաքեալ մը ընդունելու դիմքը, քանի որ կու տար այդ մարդերը, խորունկ երկիւղածութեամբ, աչքերը գրեթէ փակ, անչափանդիր ու բաղձադերձ յեղումով: Չափազանցութիւն: - կար անշուշտ: Այդ պատմումին մէջ անիկա կը վարագորէր անոնց արտաքին charpente, աւելի պոյծառ ցայտեցնելու համար հոգեկանը, ինչպէս կ'ընեն միջին դարու մեր միամիտ նկարիչները՝ մարմնեղէն այլանդակութիւնները լուծելով լոյսին կամ կրակին ամպէ մշուշին մէջ, աւելի պոյծառ արտափայլելու համար աչքերուն, աւելի ճիշդը՝ նայուածքին անժուտելի գեղեցկութիւնը, զրաւչութիւնը: Սա չափազանցումը կ'անդրադատուար սակայն պատկերացումին, դայն ընելով տարտամ, անբաւական: Մաթիկին բառերուն հեղեղը, զգայութիւններուն գրեթէ կազային նկարագիրն էր նոյնքան մը պտուհառ սա անբաւականութեան: Իր վազքին մէջ, ինչպէ՞ս ճարեր անիկա ատեն ճշդելու, չափելու, մասնաւորելու՝ իր զգայութիւնները, հաւանաբար մեղքօփն ալ աճապարտ իր ջիղերուն, որ ընք ուրիշներուն գիմագիծերը կրցեր էին կրել իրենց ուղեղացանցէն, բայց չէին կրցած իւրացնել անոնց իմաստը: Աս էր պատճառը, որ իր վարպետները, հայը՝ ինչպէս ուսուց, միշտ այդ Մոսկուայէն, մնային դէմքեր, այլայլուն, եղծանկար, քիչ մը գոնդող նոյնիսկ, ամէն անգամ որ Մաթիկ ըլլար ստիպուած դաննք տեղականացնելու, ու դառնային խորհրդանիշ սըր-

թուփին, երբ վերցուէին հողեկան անուստաղացքին, այսինքն՝ ուժերու այն կրկէսին, ուր գործող ժողովները, զիկզակող ուղղութիւնները մարմինէն դուրս ուրիշ կեդրոններէ կը թուինք տանել, երբ գրեթէ խելագար, մեր մտասեւեռման փիտոսններուն ձեռքը կը սկսինք դառնալ ու դառնալ, մինչեւ... մեր քայքայումը: Ան էր, որ իրեն վիճակով ինկած թուղթը կարողայէ ետք, անաղմուկ, անբառ կը քաշուի կամացուկ իր անակը, առէնը, կը պագնէ քնացող օրանի տղան ու յացող կինը ու կ'անապարէ դառնալ հասցէազրուած վայրը, գործադրելու համար կամքը թուղթի տղ կտորին, մահը տալու համար առ ու ան իշխանաւորին, մատնիչին, անիկա սեւեռելի մէկը չէ մեր պայմաններով:

Ի՞նչ խանդավառութեամբ Մաթիկ կը խոշորցնէր ոմբածիլ աղաքը, որոնք կարող էին մահն իսկ ենթարկել տեղորի, եթէ նման հրաման մը գար իրենց ու այդ մահն ալ սանկ մեւ մը դատնար: Բայց բան մըն ալ սասոյգ էր իմ մէջը.— աս՝ ղիտակցութիւնը որոշ անբուարարութեան մը տա մարդերը արձակելու, անոնց իրական անձնաւորութիւնները վերլուծելու, աւելի պարզ բացատրութեամբ մը՝ փակելու: Ու ասիկա հակառակ Մաթիկին ապահով հետադարձութեան ու ականատեսի անհերքելի ոլորտին, որմէ կ'աղաքաւին մեր պատկերները, ապրուածը այնքան այլայլուն ջոյց տալով, երբ մտացածինը չի առաւարտ իր ուրուայնութենէն: Ու դարձեալ անբաւական, այդ ընկեր Մաթիկը, այդ մարդերը արձակելու, այսինքն՝ համալրական ձեւերու տակ փայլեցնելու իմ աչքերուն: Արդա՛ր էր նման պահանջ մը իրմէ: Այն տանն հարցականը բանաձեւուեցաւ շրթներուս, բայց չեկաւ դուրս (հիմա ղիտեմ, թէ այդ մեւ գործօնութիւն մը իմ մաքին հիմնական յատկութիւններէն մէկն էր, ու ատով՝ բոլորովին անձնական: Ի՞նչքերն ու ղէպքերը պարտաւոր էին փոխն ի փոխ մանրուիլ ու համադրուիլ, ինծի մատչելի ըլլալու համար, ինչպէս սերիչներու ծօտ անոնք այս զոյգ գործողութեանց միայն շուքը կը ներեն իրենց):

Երեսուն տարի ետքը, երբ կը պարտադրեմ ինքզինքս ծանր ճիգեր իմ պատահութեան ու իր սերունդին իրենց ղիմագծութիւնը տալու, կը ասուսպիմ իմ ալ զոհելու պարտաւորուած այնքան ծանր գեղեցկութեանց հաշտոյն, Կեանքին ղժբախտութիւնն է իր անհունութիւնը: Այնքանքն Ակոյի քարայրը: Այո՛: Բայց մանաւանդ Մաթիկին «Մոսկուան», արեւելահայ վէպին մէջ ընդհանրացած մեծ յատկանիչներով դժաշիբ, լուսաւոր, ճշգրտուած:

— Արթնանաւորք քաղա՛քը, որ ծանր էր, նման յերուն մը՝ սուզուած ջուրին տակ, ինչպէս խարակ մը՝ դուրսէն ղիտելի: Անոր ընդերքին էր, որ ետ ու եփ կու գար, մարդկութեան նոր կրօնքին զոլորչին, այն՝ որ հաստատապէս կանչուած էր, կը հաւատար ատոր, աշխարհը նորոգելու, ցտիին հարցը լուծելով գրապաշտ վարդապետութեամբ մը, զայն յայտարարելով ստամոքսի տագնապ մը, ամէն բանէ առաջ, որով եւ հարթելի՛ երբ ստամոքսները բարեկարգենք, այսինքն՝ տանք անոնց անհրաժեշտը: Ու կը հաւատար տակաւին ներքին կարելի խաղաղութեան, ասիկա խանդարող դերագոյն աղղակը — վայելքին, հանոյքին, արուեստին ու երազին մեծատիրութիւնը կորզելով մեծ պալատներէն, դրամին տանարներէն ու շահաստանին յղփութիւններէն, զանոնք այդ միջոցները ընդմիջաւ կրօնանելով ու այդ ամէնը տանելով հիւղակներուն... կայտութեան: Այսպէս պարզուած ու այսպէս տարազուած, նոր այդ վարդապետութիւնը, Մաթիկին մտքին մէջ հետու էր կրկնութիւնը ըլլալէ ուրիշի մը, որ փորձուած էր մեր թուականութեան սկսման կէսերուն, երբ անընդի, մտայլ, բայց հոգեպէս հզօր թելադրանքով հողերու վրայ, մարդիկ, բոպիկ ու պարզ

ձկնորսներու խօսքերուն հմայքին տակ, կը ձգէին իրենց աշխարհիկ հեշտութիւնները ու կը տարուէին, իրարու միացնելու իրենց պղտիկ ցաւերուն բռնութիւնը, որպէսզի օտ անցաւոր կեանքին անցնէին անձկութիւնները ու շահէին անանցին անճառելի կայսրութիւնը... Կ'արժէր լսել Մաթիկին բերանէն նոր կրօնքին հսկայ գինովութիւնը: Սխալ՝ անոր առաքեալները բազմաթիւ բոլոր հրեաներուն, — բոլորն ալ կատաղի տեսարաններ աւելի քան կատաղի ուխտաւորներ վայելիքն, որոնք այդ վայելքը, օտ աշխարհին մէջ նուաճելէ յուսահատ, կերպը գտնել կարծեցին յաջողութեան, զայն, միշտ այդ վայելքը փոխադրելով... երկինքներուն խորը: Մաթիկ երկիւնքն արժայութեամ նուիրագործուած տարազը չհեղեց, բայց անոր ծիր ու զօտի (zone) յայտարարեց Մովսէս: Հսած էի սուրբ այդ Բաղաքէն, բոլոր սրբավայրերուն հմայքովը լուսապսակ: Կարգացած էի իր մեծ ողբերգութիւնը, 1812ին ու նորանորոգ ամբարձումը ժողովներէն: Բայց իմ ընթերցումները նոր անոր փողոցներուն մէջ կը խօսէին բարբաւէն, որ միտքին ժանգն էր մեր յօրինումներուն վրայ, արտակարգ շուայտութենէն, որ կայսրութեանց ամէնէն նուրբ հոսումներուն, ծծումներուն կերպարանքը կ'առնէ՝ կրկնելու հեշտանքներուն վերլուծումը կանխելով, զանոնք, այդ կրկնելը վերածելով անասարգելի առարկաներու: Կար տակաւին վստկամ, որ 1850ի սուս վէպին մէջ տեսակ մը կախարդական էքսքուր, կ'ընէր անհուն Ռուսիոյ տատապանքը աւելի քան խեղճ ու մարդկային: Ուրի՛շ: Անլու՛ւշտ: Բոլոր իմ դիրքերը, սուս վէպին շուրջը կը պատմէին պառ զգայնութեան, իրենց երկրին ոչէս անտարազելի, բայց ահաւոր շափով մը իրաւ, որ անոնց կրկնելուն ժոյնքը կ'ընէր այնքան տարբեր, կեդրոնական, մանաւանդ Արեւմտեան Եւրոպայի դիմային կերպարանքէն, ըլլալով նոյն ատեն թանձրագոյն հեշտանքի սուտայն, ինչպէս նրբագոյն երազի շղարշ մը, մատաղ աղջիկները հանդերձելով լէպի հզօր տարփանքները, ու մանկամարդ կրկնելը տանելով հողին քաղցր պարզութեան: Իզպան, որ իր կարգին խորան մըն էր թշուառութեան ու ամէնէն սրտայոյզ պարկեշտութեան, ժուկկալութեան ու տապանա՛կ շարքալ համակրանքի: Ու հոգեկան փաղաղիլ դեղեցկութիւնները, զգայնութեան անհասարակի հարստութիւնը, սիրտի մեծ զեղումները, որոնք սուս վէպը կ'ընեն այնքան տարբեր, տարաշխարհիկ, թո՛ւնգ՝ աւելի զգլխիչ, քան Արեւմտեանքին բոլոր բուրումները իրասին: Անցեր են երեսունէ աւելի տարիներ այդ օրերու Վստկուայէնը: Ռուս հոռ, գին ի՛նչ դժոխքներ ստիպուեցաւ կոխկոտել ու որքա՛ն արիւնն ես տեսայ, որ կ'աւելնար Նովուերգական օտ հոգեկարին վրայ: Այդ ժողովուրդը, որ Եւրոպան ազատեր էր թուրքէն, կարծես վարձատրուելու համար այդ բարեպաշտութեան հաշտին, դրեթէ դարուկէս հալածուեցաւ Արեւմտեանքէն: Եղան տարիներ, ուր իր բունակները, հալածական, հալեցան իրենք իրենց մէջ: Ճափոնական պարտութիւն: 1914ի պատերազմին հաշուեկշիռը: 1941ի ազէտը... Յարերը, որոնք կը փչուէին: Ռուս ժողովուրդը, որ ահա նոր աշխարհի առաջին ճարտարապետը: 1900ին ատոնք պատանիի մը մտքին վրայ արձակելի փայլակներ չէին անշուշտ: Բայց ծանօթ էի 1825ին սկիզբ առնող հսկայ ալ շարժումին, որ պիտի յանգէր իր յրումին... 1917ին:

Մաթիկ Մելիքիանեանց սուս յեղափոխական դպրոցին մէջ յօրինուած մէկն էր: Անիկա, այդ մկրտութիւնը պատմեց մանրամասն: Կը գոհանամ հիմնական գիծերով: Այդ Մոսկուային մէջ ան ինքզինքը վարձակալ ըրաւ դասական մանարդին, որմէ յանախուած էր մատաղ անոր երեւակայութիւնը դեռ թիֆլիսէն, իբրեւ արժանաւոր հիացող մը Ռասքոլնիկովի: Զէի ճանչնար այդ անունը: Ու իմ ազիտութիւնը փառաւոր հաճոյք մը արժեց

բժշկական ստուսնստին, Բայց պէտք է քայլել... Կը զպիմ, ինչպէս երբեմն կ'ընենք մատի ծայրով, բոցի մը որային, Մաթիկին ահաւոր հողեկան տագնապին, որ անոր բառերով պարուրուած պայծառ խորոյկ մըն էր, նման մորենիին, որ բոց է ամբողջ, բայց կայծ է նաև, նեարդ ու հիւսք, հրդեհին մէջ իսկ իր բարախումբը, իր շէնքը պահող: Անորանուրբ, համբուրելի տառապանքով մը, որ նոր էր ինծի, քանի որ մեր լացը միայն մեր դժբախտութիւնը ունէր աղբիւր ու նպատակ: Մաթիկ մեծցուց աստուծան ցաւը, աւելի խորունկ, աւելի ահաւոր, նոր բառով մը՝ համամարդկային: Հիացումով ես կը հետեւէի այդ պզտիկ մարդուն բերանէն փրթած հակայական տեսիլքին, աշխարհի մը մէջ, ուրկէ հալած, շքացած էին շարքէին բոլոր աղջր, աշխը, սոսայիսը: Մաթիկ մարդկային տառապանքին մեծ ծովը կը զնէր ուստ արեւին աշուրներուն ու հիփոսոսացած, խենթացած կ'ողբէր շքամբիլը այդ ծովուն: Անհասարելի մարդե՛ր, այդ յեզափոխականները, աստուածներու շափ ընդարձակ սիրտով, որպէսզի ծովերէն հանուած մրուրը ցաւին ըլլային ընդունակ իւրացնելու: 1900ին, մարդկութիւնը փրկադործելու նոր այդ միտախօս շէր գտած մեր օրերու յտակ իր շէնքը, ուր վայելքին բաշխումը կը մնայ տիրական կնիք, ցաւին համար յատուկ կնիքով մը: 1900ին, վայելքն առաջ, ցաւին շքացումն էր հիմնական օրակարգը: Ու Մաթիկին կիսաստուածները պատրաստ էին ամէն բան զոհելու, հերիք է, որ այդ ողջակէզը սպահովէր պուտիկ մը երկրաւոր երջանկութիւն, զանգուածներուն մոռլլ, գրեթէ անասնացած անտարբերութիւնը վիրաւորող...:

Ընկեր Մաթիկին ես չանդիպեցայ անկէ ետքը, փաղանդին մէկը այն բոլոր խոսողներուն, որոնք նիւթ ունէին այդ երկրաւոր դրախտին ճարտարագիտութիւնը երկու պատերազմներէն ետքն ալ: Գօսքի ուժ, մտածումը զոգտաւորելու մէջ փայլ, ինչպէս ճաշակ, ընկեր Մաթիկը կ'ընէին ո՛չ միայն ուշագրաւ, այլև տարօրէն տպաւորիչ: Հիմա կը խորհիմ, թէ գրեթէ վարակիչ սա տաքութեան մէջ քաղցրութիւնը, ու կերքին հետ գեղեցկութիւնը փաստեր էին անոր տպաւորութեանց խորքէն եւ ուժէն: Յետոյ, խանդավառութիւնը ձրի տարազ մը չէ: Չայն ուրիշներու վրայով փնտռելը՝ բան մը կ'ապացուցանէ: Ու նոյն ճամբով զայն անվրէպ գտնելը զարձեռի խանուածքի մը վկայութիւն է: Ու թէև ինծի շարունակաւ այն ատեն զանազանութիւնը դործն ու կրաւոր խանուածքներու, հիմա կ'ընամ ճշգրտել, որ Մաթիկը առաջին մարդն էր ինծի ներշնչող խալ գիտակցութիւնը մթին արէնքի մը, որուն համեմատ, ուրիշներուն գեղեցկութիւնը քնարական սա հեշտանքով փառաբանող մը դիրքաւ կը պահանջէ նուազ իմաստուն, նըւազ խանդավառ, բայց աւելի կորովի միտքերու հետ շփման միջոցին: Մոսկուայէն մինչև իմ գեղը անիկա որտորդ մըն էր տպաւորութիւններու: Տրպաւորութեանց ետեւէն սա արշաւը թերեւս խուլ, թաքուն ազգա՛կը՝ զայն մեր կողմերը ուղղող: Տպաւորութեանց սա անյազ ծարաւը, որ քայքայեր էր անոր ուսանողի ասպարէզը, որուն համար իր մայրը զարկեր էր հագար դուռ, սանկ քառորդ ոտնիկի մը պէս բան մը ապահովելու իր ճիւղաւորութիւնը: Մոսկուայ, սարափով տրոփուն համախորհմաներու մէջ անիկա սկանջ ու սիրտ էր տուած կրակոտ խօսքերու: Անոնցմէ ազգուած էր, որ լքեց բժշկական փառալուստի ասամնարուժական սեկցիայում իր ուսանողի տեղը, դրուելու համար գինուոր նոր-Տաճարականներուն: Մեծ քնարականութեամբ ու «Հողեկոյց» պատրաստակամութեամբ լեցուն նամակով մը անիկա անարգեց իր մեկնաստին կտրուկ հրահանգը, իր ուսումը շարունակելու, ազգը փրկելու գերթ թողլով ուրիշներու, որոնք անուազն ասոր համար

օժտուած էին... բազուկներով, քանի որ նմաններուն խելքը անբաւական էր, որքան անպէտ՝ իր ճմարաննիւտնէն: Նաւթի զաղաքին մեծ ու խելացի վաճառականը, քանի ժը պատիկ միլիոնատէր իր հրահանգը զրկէր էր Մաթիկին, շատ հաւանաբար նկատի անելով անոր ճղճիմ մարմինը, համակ կրակ սա անձնաւորութեան համար այնքան զանախոփականն, անկարելի նոյնիսկ: Ապահով իր բնազդովը գործի մարդու, նաւթի իշխանը այդ մարմինը անընդունակ կը յայտարարէր զգործն ծառայութեանն, թրքահայ զեմկատունն, ուր տիրող նոր պայմաններու, զորս վարող հակամարտութեանց մասին ունէր լայն ծանօթութիւն, հիւպատոսական խոզովակներով իրեն հասնող: Գործի մարդոց վաղածանօթ հոտառութիւնը, հասկացողութիւնը իրենց սաղարէզէն զուրս հարցերու մասին: Նաւթի վաճառականը իր ժողովուրդին հարազատ զաւակը, անոր հին, աւանդական առաջինութեանց հաւատացող, սիրտէն, ձեռքէն, միտքէն բո՛ւթ՝ բոլոր դիմողները շփոթելու ակարութեամբ ժը, մանաւանդ 1880ի մարդոց մոլեռանդ իմաստութեամբը զրահուող, որ մեր Զարթօնքը եւ վաճառականութեան սակեղարը ճարտարագիտեց Գոլիս թէ Քիֆլիս, մինչեւ 1878ի բախտորոշ թրւակահանը: Նաւթի վաճառականը կը զգա՞ր, կը հեռզգա՞ր վտանգը, որ կը հանդերձուէր զայ ժողովուրդի գլխունն, 95ի զէպքերէն ետք...: Մաթիկ Մելիքիանեանց աննդուս, երկար զրութեամբ ժը Եփոզի իշխանաւորն կը հրահարէր իր պարտապարտութեամբ ճէլի շարունակելու», աշխատասերները քրտինքին մէջ բոյժի դրամ իր անյաղ տիրութիւնները: Ժողովուրդի դատը՝ ժողովուրդի դատը՝ ժողովուրդի դատը՝ կորովովը, կորովովը: Նաւթի իշխանը զընց շարաշար իր հրահանգին համար, փոքրահասակ տիրութեան այսպէս լայն ինքնարաւութեամբ, ամբարտաւանութեամբ ստանալով իր պարտ ու պատշաճ պատասխանը եւ մանկութեան տրցակը, զոր իր երեսին կը շարտէր (քանի որ անիկա զոտած էր կերպը իր թիշ մարմինը ճէժանս ապրեցնելու, մաս չերկարելով վաճառականէն առատատիրոս բաշխուած կենսաթոշակին, գիշերային սպասարկութեամբ ժը իր հացը ճարելով ճաշարանի ժը մէջ, որուն սեփականատէրը կ'ախորժէր իրմէ, զայն Բավայիլեր յայտարարելով իր աղջկան, — պատուակալ կատելեր, արտիստներու եւ գրողներու սեղաններուն ընկեր ու համեմ, եւ որ կը համարէր յաճախ ճամառուս տրբերունը, զաշքելով անոր «հասակաւոր» մօրուքը եւ կամքելով պատանիի այտերը, ինչպէս կ'ընէին արտիստները իրենց ընկերացող ընկերներուն) անկէ կոպէկ ժը անզամ շխորած: Ամէն մարդ՝ իր բանին: Միլիոնատէրը՝ իր փողաբարանին (իրն է բաւող), ինտելիգենտն ալ՝ իր ժողովուրդին: Ծամբա՞ն:

— Պարզ էր այն օրերուն:

Երիտասարդութիւնը, զոր 96ի զէպքերը ըրած էին աւելի քան զգայուն, ազգային ճակատի վրայ, ընկերային խժորումները համազգային մարդին մէջ, հմայքին տակն էին քանի ժը շատ զօրաւոր անհատականութիւններու: Դէպի երկիր, դէպի հայ ժողովուրդը, — բնաբան ու գրօջակ բոլոր անոնց, որոնք կը ծնին տարբեր, տարօրինակ աստղի տակ, նեղ կը գտնեն աշխարհը իրենց շունչին ու փոփոխուելու ասիպողութեան ժը տակ, կը նետուին անծանօթին, վտանգին, արկածին, յազեցնելու համար զիրենք տրորող ընդոծին սոմանթիզմը: Այս դարուն սկիզբը այդ լեարգահար, թոքածէս տղաքը իրենց հիւանդութիւնները շարկած պիտի իյնան Աւստրալիա, հարաւային Ափրիկէ, հոն ճարտարագիտելու համար... կայսրութիւններ (Մէսիլ Ռոտս): Հնդկաստա՞ն: Անշուշտ, գտնելու համար խուլ Արեւելքին զանխուլ հեղանջները...: Կովկասէ՞ն:

Գիրք ժը անբաւական է ընդգրկելու ապրումները բոլոր ճեմարանա-

կաններուն, որոնք հոգեւոր կրթութեան պատրուակը այնքան արտաուշ արբութեամբ մը շահագործեցին իրենց ժողովուրդին սպասին: Այդ սերունդը անշուշտ տուաւ ականաւոր դէմքեր Հայաստանեայց եկեղեցւոյ ծուռութեան, բայց ինքզինքը արժեւորեց ազգային սպասագրութեան կրկնով: Ոչ միայն գրողը, ուսուցանողը, խօսողը: Այլ մանաւանդ յեղափոխականը, որուն ընդարձակ է սահմանը ձեր ենթադրածէն աւելի: Թորսպէս արտաուշ: Ուսանող, տառուցիչ, գրող, հողագործ, բժիշկ, ճարտարագետ, մեծ մասով անցած երկրորդական կրթութեան տիւիփիլինէն, բայց բոլորն ալ այսցրած՝ իրենց ընդերքէն, զղրդուած իրենց ջիւղերուն կեդրոններէն, բզկտրուած իրենց ճաղիքներէն, դէպի տառապանքը աստիճանայ եղբայրներուն: Այս խաչակրութիւնը յուզիչ էր, որքան դժնակ, անձէ անձ, հոմաձայն զգայնութեանց հակազդեցութիւններուն: Այդ աղոց ամէն մէկուն մէջ, մարդկային պատահար մը կրնաս ընդունիլ, այսօր, երբեմն ահաւոր զեղեցկութեամբ, որ կը շլացնէ քու դասելու գործարարները, երբ կը զաննա ինքզինքդ անոր դէմ, տարիներով փողոց պտուկած պատանի, բայց չես գիտեր ո՞ր հրաշքին ուշաքովը ինքզինքը արձակած դէպի օղբակէզը իր ժողովուրդին, իր միտքը բաց ընելով իր ցեղին գերագոյն խորհուրդին...: Լազեքանակամ տրամա՞, որ դիրքի բառ մըն է գժբախտարար սա տողերուն վրայ, քանի որ արարքը, ինքն իր մէջ, կը յորդի բոլոր դիրքերէն, որոնք շուքեր են շատ յաճախ, երբ կը բռնուին կեանքին դիմաց: Հիմա նորութիւն՝ այդ տղաքը ո՛չ միայն նախատել, տարիներով գիրենք ծաղիլէ ետք, այլևս պատասխանատու նկատել մեր աղէտներուն: Հիմա, Սփիւռքը իր իմաստութիւնը փաստարկելու պատրուակ կ'որոնէ ու կը գտնէ մեր աղէտները հասկնալու իր ապարժան իմաստասիրութիւնը վերծանելով դաւանանքի: Որքան շատ են իմ ընկիւնները այդ գետին վրայ: Կ'անցնիմ:

Մաթիկին ողիսականը, մինչև սահմանադրուի: Երկար է անիկա: Ու շիչ մը մութ, թերեւս շուքերուն պատճառով, որոնք մեր ամէնէն անանձն, վեհմ որոշումներուն, արարքներուն կը հսկեն, անողք ու անմերժելի: Մաթիկի Մելիքիանեանց համառօտութեան պաշտպան փաստարան մըն էր հոն՝ ուր կեանքին անհրաժեշտ ազդեցութիւնները կու գային առաջին փլանի: Ու երկայնութեան, երկարարանութեան ասպետ, երբ զազափարներու լեռնաշղթաներ կը հաւատար, թէ կը խուզարկէր: Անոր բաժանումը իր ընկերներէն, որոնք ճեմարանական կամ ոչ, անշուշտ նուազ կ'արժէին, քան ինքը, քանի որ անկարող էին իրենց անձէն հրաժարելու: Այդ ընկերները նուազ հաւատաւոր՝ երբ իրենց հանգիստը շխանաբերու, այլևս պաշտպանելու անձնուիւր պարապումը, կը սիրէին քաղաքականութիւն ալ ծախել, մեծ պետութիւններու զիւանագիտական հաշիւները հասկնալ ու մեր դասին անվերադարձ կորուստը վճռել: Իր ընկերները անշուշտ նուազ կտրին էին, ինչպէս կը խոսէին յայտնի հոգեբանութեամբ, ամէն մէկը առնուակն մէկուկէս անգամը Մաթիկին, երբ իրենց մեծ բառուցքներուն մէջ կը սեղմէին անոր զոյգ ձեռքերը, մեծազգակ ճիշի հանելով անոր մասները:

— Երթար բարո՞վ...

Յետո՞յ:

Հեզմութիւնը չէր քաշիւր առաջ, վերադարձի ճամբուն: Երիտասարդներ էին ու գիտէին, թէ որքան թի՛չ էր թիւը ետ զարձողներուն:

— Երթար բարո՞վ:

Ու լըջութիւն: Ու պզտիկ խոնամալ մը աչքերու: Տրամութիւն ու լուսութիւն է՛. խեղճ արարածներ էին իրենք: Բայց ոչ այնչափ բիճացած, ինչպէս թերեւս պիտի ուզէր եզրակացնել ասուտեմա Մաթիկը: Իրենք ալ

պիտի շարունակէին ծառայել շատ շտապեց լղրճուած իր ժողովուրդիմ, իրենց դրասենականերուն ապահովութենէն ու իրենց սոճիկներէն կամ շահերէն: «Ումն է դրամ իւր» : «Ումն է արիւն իւր» : Այսպէս չէ տարագած անշուշտ մեղքէն իր սարսափը մեր Նարեկացիմ: Բայց Մաթիկին ընկերները, մեծ ժառով ճեմարանական, Նարեկացիին նորոյթը Հեշտագին կը սիրէին արժեւորել:

Մինչեւ սահմանազրո՞ւի:

— Բայց քաջարի մարտիկը Հոն տոաջնորդելէ առաջ, պէտք է Հոն յարդել անոր կամքը, կանգ տանելու համար անոր ճեղքու խորքում լայն, մեծ, չարեւափառ արժեւորուած օրուան, ուր անիկա ընդունեց իր սրբազան մկրտութիւնը, դառնալով, պաշտօնապէս, մեծ կուսակցութեան մը կնունքի աւազանին մէջ վտանգաւոր, բայց այնքան անմեղքի մողուութեամբ տողորուած յեղափոխականը, — կազմուած՝ մեր ժողովուրդին ցրիւ ուժերը Հոն համարժեքու, ճկտոր-կտոր, բաժան-բաժան սիրտերը միանուլիլու, ու այսպէս հանդերձուած, դրահուոր, «պողպատահիւս» կուրծքերով միանական ինքելու կրկէս, մեր դարաւոր ստիին դէմ: Անիկա էս նմանցուցի Փրանական վէպերուն մէջ այնքան խռովիչ էջերու ծընունդ աուող աւազիմ հաղորդութեան: Մաթիկին տարի՞քը: Հաւանաբար վեր քսանէն:

Այնքան մկրտի քարայրին մէջ, այդ խոտակցութիւնը խտուութեամբ, անդութեամբ ըննադատող, զայն մեր ցեղին ամէնէն վատագի թշնամի յարատարող Մելքիսանեանը ինքզինքը հակասութեան մէջ չղնելու համար բազմաթիւ դրուագներ պատմեց ինծի, բոլորին մէջ ալ մարդոց ծանրածանր տկարութիւնները «համաճուլիլով» իր ընկերներուն վրայ, առանց անշուշտ բաւարար վերլուծումի, որպէսզի իր կորանքը, ստացած վիրաւորանքները, ենթարկուած ծաղրը, հալածանքը ըլլային հասկնալի: Կը տառապէր, մինչեւ իսկ այնքան մկրտի քարայրին մէջ, որ մարտիկները զինքը շան-թերամ կը կուէին ու չէր անդրադատնար, որ բացուող այդ բնրանը մարդիկ պարտաւոր էն բունդ գոցել, այնքան քիչ սորված էր լուել: Կը տառապէր, որ կուսակցական ժողովներուն մէջ իր բոլոր առաջարկները կը մերժուէին ուշադրաւ միանայնութեամբ մը: Իր պաշտպանողականները կ'ընդհատուէին հասարակաց ծաղրին մէջ ու իր հասակը միշտ խոտոր համեմատութեան մէջ կը գտնէին իր մօրուքին, մա՛նաւանդ լեզուին հետ: Էջեր շին բաւեր այս ամբաստանութիւնները գումարելու:

Ընկեր Մաթիկ չէր անդրադատնար, որ քանի մը ժամ առաջ, այդ ջախջախիչ պարսաւանքէն, խոսած էր նոյն այդ կուսակցութեան հասցէին, իր կնուեմի օրուան պատմութիւնը տալու ատեն, խոր, անկեղծ, հաւատաւոր հիացումով մը: «Թիֆլիսից» մի վերնատուն: Համեստ: Գիչ կարասիներով: Վիպասան ծնած՝ անիկա իր տեսածները կը վերակազմէր մեծ հարգատուութեամբ: «Մի վերնատուն», ուր «հաւաքում» էին գլուխները Ս. Գործին: Հանգիստութիւնը Մոսկուայի մանսերտներուն կամ տօպիքրճաներուն, որ անոր զգայարանները կ'ընդարձակէր դէպի ապրուած զգայութիւններուն փաստերը:

«Նոյն կուղպ փնդկերը, այդ վերնատունին մէջ, Լոյսէ նոյն վախն ու փախուստը, քանի որ յեղափոխութիւնն ալ մօր մը նման արգանդի մէջ կը պատուարէր իր զաւակները: Ու այդ վերնատան մէկ դրասեղանը, հաւարակ սեղան, որ հրաշքով կը գտնար խորհրդատուներու կանանչ, դիւանադիտական գաւառը, վրան գիրքերու մարտկոցներով ու քարտէսներու արտեբով: Նոյն աթոռները, միշտ փոշոտ, գունատ, երաժիշտ (յեղափոխականը

Թերեւս պիտի շատած է հանդատաւէտ պայմաններու, որոնք սովորական մարդոց երկրային, բայց անհրաժեշտ բարիքները կը դառնան տարիներու կրկնումովը: Պատերուս՝ լուսանկարներ, կրկնադիմակ, որոնք աս ու ան լոյսին տակ կ'ըլլային ուրիշ: Իր օրուան առիթով, այդ լուսանկարները առուած էին իրենց սկզբնական կերպարանքներուն: Անոնց մէկ մասին վրայ հրազէնները, ամէն տեսակի, քանի որ կուսակցութիւնը իր պահեստը ունէր երկու-երեք պետութիւններու հողերուն վրայ: Կործքեր, որոնք փածփուշտով հիւաւած էին, տառացի հարգատուութեամբ մը: Երիտասարդներուն մէջը կը դօտեպնդուէր անոնց կապերովը: Ուրիշներ՝ ոսկոր առ ոսկոր, որոնք մէկտեղուած ըլլան մորթի մը տակ: Բայց որոնց աչքերը այրէին սեւ խորքին վրայ թուղթէ այդ դերեզմանին: Անհուն, անհամար, անմոռանալի աչքերը, ուր մեր ժողովուրդին անհուն, անմար, անմոռանալի տառապանքը կը բխէր ու կը բխէր, դարձեալ անսպառ քաղցրութեամբ մը: Ուրուր տարազները, որոնք անհաւատալի քաղաքակրթութիւններէ վկայութիւն կը դառնան: Կովկասը ցեղերու խառնարան, զգեստներու կենդանի թանգարան մըն էր եւ է: Ու այդ մարդերը, այդ զննքերուն ու անդերձանքներուն մէջ, պատերու վրայ արձանագրուած աշխարհ մը խոսովքի, կարծր լեռնալիթայ զրկանքներու, ու ծով-ծով արիւն: Մաթիկ նմանցուց լուսանկարը սեւ թերթ մը այրուած մետաղի, որ մեր գործերուն ու անունին հարազատ տապանաբար մըն է, քան մարմար:

Վերնատունի ներքին, աչքէ անյայտ խորշի մը մէջ ճախնը ծղրիթին, որ տպագրական պզտիկ մամուլը կը փոխադրէր Մաթիկի բերնին: Ընկեր Մաթիկը շէր զիջաներ անսնել արտաքին աշխարհը, եթէ անմիջական կամ հեռուոր, անխուսափելի, անուազն կարելի օգնու մը շնորհաբեր զայն շահագրգիռ, — արեւելահայ օգտապաշտութեան հետ հուսաար ներկայացուցիչ: Բայց ահա աւելին: Արտաքին աշխարհին հանդէպ սա շահագրգիռ կեցւածքը անբաւական էր մնացած՝ հակաիշուրու ներքին աշխարհին համար անոր անհուն արամագրութիւնը: Կոպրէր տնայարանքին տակը ներքին իր անձնաւորութեան որ ստատիկ իրերէն, իրողութիւններէն իր խորշանքը, սարսփ կը սիրէր տարածել տնայարազիմ, շունհնայու շափ որեւէ նայուածք, թէկուզ փափուկ, գեղեցիկ, բայց ոչ-օգտաւէտ քաներու վրայ: Ի՞րը: — Տիմաւիք աշխարհն էր իմաստին, զոր կը հաւատար օր մը իրագործուելիք դրութեան մը յաղթանակին: Տարբերուն աշխարհին մէջ բան չէր կրնար կորսուիլ: Մաթիկին համար փառաւոր այդ տարազը, ուր կար փոխուած բառ մը սակայն: Իմաստները անձան են անշուշտ... Պատանէն ի վեր: Ուրեմն ամէն ինչ յազազս իմաստին, երբեք ինքը՝ իրեն համար: Երբըն նախ յելու իր ոչ-գիշուած էր պատճառ, որ լման աշխարհ մը իր աչքերէն ըլլար վրիպած: Որ իր վերնատունները, դիւզերը, քաղաքները, մարդերը ըլլային տփդոյն, հարկադիր տփդունութեամբ մը: Այդ խեղճուկ շրջանակին մէջ, Մաթիկ Մեյքիսանեանց զրաւ քանի մը մարդեր, որոնց հանդէպ սրտառուչ էր իր ճիգը ժուժկալ մնայու, մանաւանդ հիմա, երբ կը պայքարէր անոնց հիմնած իմաստի դրութեան դէմ: Ձգալի էր, որ նուաճուած էր այդ մարդոց սկզբնայարդար հրապոյրէն, ինք շրտաւ՝ մեծութենէն: Անունները, զորս տուաւ, այսօր այդ կուսակցութեան պանթէոնը պատկառելի ընող սրբութիւնները կը դաւանուին: Ապագան կրնար դատել, դատապարտել այդ թիւնները կը դաւանուին: Ապագան կրնար դատել, դատապարտել այդ մարդերը, քանզի անոնց հեքիաթը, բայց պիտի ըլլայ զգածեալ հողերիստմարդերուն մը մէջ ամէն անգամ, որ անցեալը տեսնելու իր փափաքը պահէ նութեան մը մէջ ամէն անգամ, որ անցեալը տեսնելու իր փափաքը պահէ զերծ ներկայի ամէն թեւադրանքէ: Այդ զնով միայն մենք արտօնուած ենք շամշնալ մեր անցեալէն: Որքան շա՛տ՝ գրուելի՛քը, երբ տունը զայն իրաւ

վերադնակառուծին, ըլլան լուսն դասն ցուհրը, յարգարուսած՝ մեր հոգե-
 դաշար անհուն սուգերու հանդէս մը ընող արդի մեր հակամարտութիւննե-
 րը, քանի որ Հայրենիքին սիրոյն վրայ մենք դեռ կոտորելու շափ անարա-
 մարան տեսանողներ գուրս եկանք...: Նոր եկեղեցի մը պիտի շփարանէր
 զանոնք սրբացնելու, ինչպէս եղած է ճակատագիրը ուրիշներու, ասոնք ալ
 ասարբեր ժողովուրդներու մէջ նոր օրերու, կարգերու, երազներու ժարգա-
 րէներ, որոնց անունը յաւերժացած է ո՛չ միայն մազադաթներու, այլև
 մարմարներու, երկաթներու վրայ: Ես կը լսեմ Մաթիկին կուռքերը, յա-
 տուկ անուններէ զգացած երկիւզիս հոգառակ: Ինչ որ քառասն ասրիներ
 եւքը յառակ է իմ հողիին, — ասիկա պատկառանքն էր, որով պարուրուած
 էին անոր ո՛չ միայն բառերը, այլև շարժումները, երբ կ'ըսէր զանոնք:

Հիմա, երբ կը գրեմ այս տողերը, սրբան բեկո՛ւմ կը գզամ թէ կը
 ծանրանայ իմ բառերուն իւրաքանչիւրին ներքը: Տխո՛ւր: Դուք դռնք բա-
 ուր: Ոչ մէկ հիացում ու ոչ մէկ պատարանք չեն բանասիրտ այդ ազոց ներքը, ո-
 րոնց յանձնուած են մեր տաղանակներու բարձուժը, մեր երազներուն անուցու-
 ժը: Աւելի՛ն. կան խումբեր, որոնք սա անասուածութիւնը փառքի, նորոգ-
 ման, յաղթութեան կարգախօսի կը վերածեն: Անոնք չեն զիջանիր նայելու ի-
 բնեց հողեյառակին, ուր ոչ մէկ քաղցր լուսն կը յածի, ոչ մէկ ջիւղ հաւատար-
 սերմ կը հանդի, բացի որուան արձագանգներէն: Մաթիկի օրերուն, փը-
 կրելիք Հայրենիքին հզօր միասիւնէն, ձգողութենէն դաս, փրկագործութիւն
 աշխատանքն ալ զօրուար պատգամ մըն էր՝ դիրքու սիրտ հասնող:

Անոնք, որ Մաթիկին պէս, անկէ կանուխ ու անկէ ետք սանձանք
 անցան, ճշդիւ չէին գիտեր, թէ որոնց սիրոյն կը հնազանդէին. այդ հակա-
 յական մարդոց Հմայքի՛ն, թէ մեր Հայրենիքին աւելի երևակայական ող-
 բերդութեան: Որքան քիչ կ'ըսեն երբեմն մեր բառերը: Որքան ծանր է
 Հայոց պատմութիւնը, իր բոլոր դարերուն, բայց սրբան անժուժելի՛՛ այդ
 պատմութիւնը, որուն վերջին օղակը մեր երեք քառորդ դարը կազմեց: Այս
 տողերը կարդացողներուն մէջ գտնուին գուցէ ցանցառ վերապրողներ, ո-
 րոնք իրենց կեանքը ազատելու համար ընդունեցին դերագոյն նախատին-
 քը... տանկընալու, բայց եղան անկարող համոզելու իրենց Հայրը, մայ-
 րը, որոնք իրենք գիտենք խոսնեցին կարուանին ու դացին մահուան: Գնաց
 այդ մայրը ու ձղեց իրմէ վերջին իր նայուածքը հողիին մէջ տղուն, անժառ
 կտոր մը կրակի նման ո՛ղջ մինչև այսօր: Մնացողներուն ճակատագի՛րը:
 Բայց սրբան ընդարձակ է այդ ողբերգութիւնը: Ու մի գտնէք ասարօրինակ,
 երբ դուք մեզ գիտէք լրիւ դրասուած այդ անդունդէն: Ո՛ր կողմէն որ քալենք,
 ո՛ւր որ ալ ըլլանք, վիշտի թէ վայելքի մէջ, մեր հետն է այդ նայուածքը,
 — խորհրդանիշ խորան:



ՀԱՆՐԻՒ ՊԵՅԼ

Մեծան: Այդ էր, որ Այֆրեա Նոզէյ, իր մըք-
ցանակով՝ հ'ուզեր վարձատրել:

Հանրիկ Պեյլ ծնած է 21 Հոկտեմբեր 1817-
ին, Քոլոնիեր: Ութերորդ դասակը հիանալի և ևս չի
ստան թանկակալութիւնը Վեյլի Պեյլի: 1837ին,
իւր Պարտիան ստանալէ ետք, Պեյլ իբրև զա-
նաւոր իշխանի գրասենտի մը մէջ, հե-
տագնորդով ետն ստան իր ուսումը: 1839էն մին-
չև 1845, կը մնայ զինուորական ծառայութեան
մէջ, կուսելով արեւելեան թէ արեւմտեան ճա-
կաններուն վրայ: Կը վերադարձի թաղամար-
տակներ: Գերի կ'իշխայ ամերիկացիներուն
մէջը եւ, վերադարձին, կը սկսի աշխատել իր
կորորդ կուսակցութիւնի մէջ, միաժամա-
նակ շարունակելով իր ուսումը եւ որսորդութե-
ան ու հանգչաններուն մէջ հրատարակելով
կարճ պատմութիւններ ու նորովիներ: Յաջորդա-
բար կը ստանայ շարք մը գրական մրցանակ-
ներ, կ'ընտրուի սնդակ զերմանական սկզբնա-
խային, ու նախագահ՝ միջազգային ֆենս սկում-
բին:

Հանրիկ Պեյլի ստալին հասարակ լոյս տեսաւ
1848ին, շնորհակալը իստաւ Ֆիլշ ճամուռն: Այ-
նուհետեւ, լոյս տես ընդմիջումներով, տարին մէկ
զերք հրատարակեց ան, զանից անից հասարակ-
ներ, որոնցմէ շատերը թարգմանուեցան շուրջ
զոտ լիզուններու եւ հրատարակուեցան թաղա-
կապ սրինակներով: Միայն Խորհրդային
Միութեան մէջ, Պեյլի գործերէն ոմանք լոյս
տեսան մէկ միլիոնը սնցնող տարաբանակով: Ա-
նոր կարգ մը պատմութիւնները թարգմանուե-
ցան նաեւ հայերէնի, է Հայաստան:

Պեյլի գրականութեան ամբողջ մթնոլորտը
կազմուած է թանկարժեք եւ թանկարժե-
քեան հետեւեղով ստալեցան սղէտներով,
փորձութիւններով, փորձաութիւններով, յու-
սակաւական տարազանութիւնով ու նաեւ միջ

Նախական քրտութիւններուն, բնութիւն-
ներուն, արեւմտահայութիւններուն, արեւմտե-
րուն, մզած թուր մտիքներուն զատութիւննե-
րը նաշակած ու մարդկայնական կեանքի մը բուն
կարտներուն մէջ նկարագիր կազմած աշխատեց
անհասակահանութեան է Պեյլ, որուն յայտնութիւ-
նը, զերմանացի շարք մը ուրիշ գեղեցիկ հետ՝
ուզողի հրաշք մը համարուեցաւ, այնքան ծանր
տառապանքներէ ետք աշխարհի մատարական
կեանքին սեփական գրովով բերած իրենց նը-
պատներուն համար:

Անտարկիւով այդ հանգամանքներուն ու մեկ-
նարանելով նապէչկան մրցանակին սիրտնուր
Հանրիկ Պեյլի հայթայթան պատեանները, զեր-
մանացի զննագաւ մը կը գրէր:

«Ետքը, այս պարագային, կը վերաբերի վե-
րածնունդի մը, առաջացած՝ իրական սնգոյու-
րնիկ մը, դատապարտուած՝ ոչնչացման, եւ որ
կրկին ծիւտուաւ, ծագիցեաւ եւ բնծայեց իր պը-
տուղները է բարոյութիւն եւ արախութիւն ա-

յոյսով, որ յամառոյնն կը պլույտ շատա-
բաւ ժողովն վերջ:

Անոր դրականութեան ժառնգն հետեւած ֆը-
րանսացի քննադատ ժը կը գրէ:

Վաղերի Պէոյի համար գրականութիւնը
պայժար մըն է: Գրագի մը գիրը, ուրեմն — Ի՞նչ
այ ըլլալ անոր վճարուած գինը — պէտք է ըլ-
լալ արգիլել անհեղձներու, որ քմերի մէջ չմը-
նան:

Այդպէս սպեցու, սահմանադրեց, կ'ապրի
ու կը սահմանադրե՞ն Հանրի Պէոյը, որ սե-
ւասիկ երեսուն տարիներէ ի վեր իր հասակը կը
ցցէ հան՝ ուր բազմաշարքար ու նովին բանիւ
բրտութեանց զէժ նստածալու պատրաստ ժա-
ւորականի իր խղճածածը կող կ'ընէ իրեն, ժարգ
հակէն խուսած մեծագոյն պարզեւը, ազատու-
թիւնը կրկին անոր վերադարձնելու սաղնապէ
ժը իմանուած:

Վերջին պատերազմէն ետք դրական ուղեոր-
ւին մէջ յայտնուած եւ գրական իրենց սաղնադ-
ներուն հետ նաեւ սահմանութեան պայքարով
հայտնուած մեծ զէժներուն՝ Սոյսիցիներէ եւ
Իսնիկոյի պէս վարք ժը ցուցարեւեց Պէոյը եւ,
մէկ կողմ ձգած թուր նկատումները՝ ուժգն-
բէն յատնեց իր ընդգումը դրոշմներն ու արուես-
տապէսները իրաւաբանի իր երկրի եւ հետա-
ւոր երկիրներու կարգաւարդներուն զէժ, միշտ
հաւատարմով բանին զորութեան, պահանջնով
զանհրաժեշտութիւնը բրտութեան, բայց ոչ՝
բառեցի, այլ բառերու, բռնի, որոնց ընթաց-
քը ոչ ոք կրնայ կեցնել, յաւատարմի՛չ բռնի, որ
որով կրնան քաղաքացի գառազններէն, պե-
տութիւններու սահմաններէն ու տուններու
պտտաւարներէն:

Այդպէս էր, որ Հանրի Պէոյը եղբայրացաւ
բուր հայտնածներուն, բանտարկեալներուն
ու արազրուածներուն հետ, դարձաւ միմիա-
բական ճիշդէն մէկը դողաւոր բազմութիւննե-
րուն: Պայքարի նոյն ճամբաներուն վրայ էր
դարձաւ, որ բարեի, փորձառութեան, ժարգ-
կայնական ուրուներու եւ հետանկարային տե-
ղերու հանդիսութեան բերումով հարազատ ըլ-
լաց ինքզինք մեր պարու մեծագոյն անհեղձնէ՛
Սոյսիցիներէ հետ եւ մայրակցեցաւ անոր պար-
զարին: Ակնարկելով իրենց վիճակուած դժեղակ
կացութիւններուն, ան անը ժը կ'ընէ:

«Սոյսիցիներէն վիճակուեցաւ ստայիմեան պա-
րը, ինձի՛ հիբլերակումութիւնը: Բայց ինչ որ աս-
կի յարապէս մեզ իրարու կը միացնէ, բռնի
լայնագոյն առումով՝ հասարակաց ա՛յն մտնե-
ցումն է, զոր կարելի է կրօնական կամ բնագո-
ցական կոչել: Բայց պարագաներուն, մեր հա-
սարակաց փորձառութիւնները կամը կ'առնեն
նամբարներու սեմինս:

Սոյսիցիներէ հերոսներուն պէս ետեւ Հան-
րի են ընդհանրապէս, հայտնուած բանտարկե-
րը կամայականութիւններու եւ Թարգուած ժար-
գի են ընդհանրապէս, հայտնուած, բանտար-
ւած, մահուան ժառն անցած ժարգի, որոնց ար-
բերը, բանկալութեան վախճանէն ետք ու կեն-
քը վերանուածելու ճամբաներուն վրայ զարձալ
լի եղան դժուարութիւններով ու սակունցեցողի
յանտարներով:

Տառապած ժարգաց անդէպ համարանքով
յորդոց ու քաղաքական, սահմանական եւ կրօ-
նական այլատերած բարբերով ժարգ կակը իր բո-
վանգակութենէն պարզու դրութիւններուն զէժ
անհաշտ՝ Հանրի Պէոյը նախակիթիւրան քաղ-
քներութեան, հիթիւրան դժտնութեան եւ յետ-
հիթիւրան լրջաններուն ապրած երեք սերունդի
կենքը պատկերացուցած ըլլալու վրէժ ժը կը
վախէ՛ն անհուրեք, ժարգոց ինչը՞ն ժարգելու
ապրուած հրամայականի ժը Թելագրանքով գրէ՛լ
լարժոց դրագէտի ժը փառքը:

Հետագայ էջերուն կու տանք Պէոյի մէկ
պատմուածքը, որ Թարգմանուած է գերմաներէն
ընադէն, Ս. Չուէնի կողմէ:

Մեր արամագրութեան ասի ունինց նաեւ
ճեմիկարո լիբերերձի հետ ունեցած Պէոյի խեղա-
շահական մէկ դրոյցը, զոր անելի ուշ պիտի
յանձնենք ընթերցողին ուշադրութեան:

ԲԱՆ ՍԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՀԻ

Հայացուց՝
Ս. ԶԱԻՆՆ

Կեանքիս ամէնէն յիշատակելի շրջանը բոլորած եմ Ալֆրէտ Վունսֆալդի դործաբանին մէջ: Ի ծնէ խորհրդածող ու աշխատանքէ իրաշող մէկն եմ, սակայն ստեն-ստեն տնտեսական երկարատեւ տաղնապները կը մղեն զիս պաշտօն մը ձեռք ձգելու, քանի որ խորհրդածելն ու անդործ շրջիլը փոք շնն կշտացրներ:

Անգամ մըն ալ նիւթական անձուկ գիճակի մէջ գտնուելով՝ դործ հայթայթող կեզդրոնին դիմում կատարեցի եւ ուրիշ եօթը բախտակիցներու հետ Վունսֆալդի գործարանը ընդունուեցայ, ուր պէտք է մուտքի քննութեան ենթարկուէինք:

Գործարանին տեսքն իսկ կտակած արթնցուց մէջս. անիկա ապակեայ տղիւններով կառուցուած էր, ու փայլուն շէնքերու եւ փայլուն վայրերու հանդէպ ունեցած հակակրանքս ալ՝ աշխատանքի հանդէպ ունեցած հակակրանքիս չափ՝ զօրաւոր է: Կատակածը ալ աւելի զօրացաւ մէջս, երբ մեզ փայլուն, զուարթ գոյներով ներկուած ըմպելարանը մրտցրնելով՝ իսկոյն նախաճաշ հրամցուցին: Սիրուն հիւրընկալուհիներ մեզի հաւկիթ, սուրճ ու կարմրցուած հացի շերտերն, Բաց-կանաչ ապակիէ անօթին մէջ լողացող ոսկեմկնիկները՝ ատեն-ատեն իրենց դուխր ապակիին փակցնելով՝ հետաքրքրութեամբ մեզ կը դիտէին:

Հիւրընկալուհիները կարծես իրենց ուրախութենէն պիտի պայթէին, միայն զօրաւոր կամփի շնորհիւ — ինծի անանկ քուեցաւ — կը գգուշանային պայթելէ. անդայաք կը գեղգեղէին, ամենք զեռ շերտուած երգերով լեցուած էին, նման այն հուերուն, որոնք ձուերով լեցուած են:

Ես իսկոյն կուսեցի, թէ այս նախաճաշն ալ քննութեան մաս կը կազմէր. մեծ ախորժակով ծամեցի, կատարեալ գիտակցութեամբ մարդու մը, որ որոշ կերպով զէտէր, թէ մարմնոյն մէջ սը-նընդարար նիւթեր կը ներմուծէր. բան մը ըրի, զոր ոչ մէկ երկրային ուժ կըրնար պարտադրել ինծի, — անօթի փորանց նարնջահիթ խմեցի, սուրճի դաւաթին ձեռք չգպուցի, հաւկիթը եղած տեղը մնաց, ինչպէս նաեւ՝ կարմրցուած հացի շերտերուն մեծ մասը: Ոտքի ելայ եւ, գործի համար կազմ ու պատրաստ՝ սկսայ ճեմել ըմպելարանին մէջ:

Առաջին անգամ զիս մտցուցին ջըն-նալայրը, ուր զեղեցիկ սեղաններու վըրայ դրուած էին հարցաթերթերը: Պատերը կանաչ ներկուած էին եւ այնքան ճաշակաւոր, որ նրբաճաշակները հիացումով «աքանչիլի» կրնային բացազանչել: Մարդ չէր տեսնուեր, սակայն ես վստահ էի, որ կը դիտուէի: Ժամ առաջ գործի սկսելու փութկոտութեամբ շուտ մը պատրաստուեցայ, անանկ կարծել տալով, թէ չէի դիտուեր. իսկոյն ինքնահոս գրիչս քաշեցի գրպանէս, ա-

մենամտիկ զրատեղանին առջեւ նստեցայ ու խթանուած հաշուապահի մը պէս հարցաթերթ մը իմ կողմս քաշեցի:

Առաջին հարցում.

— Մարգ Հակին երկու թեւ, երկու սրունք, երկու աչք ու երկու ականջ ունենալը բաւարար կը գտնէ՞ք:

Առաջին անգամ ըլլալով խորհրդածելու կարողութեան արդիւնքը քաղեցի ու աննականջ զրեցի. «Նոյնիսկ չորս թեւեր, սրունքներ, աչքեր, ականջներ իմ գործունէութեանս եռանդին զոհացում չեն կրնար սալ: Մարգ Հակին մարմնական շանդերմանքը իսկապէ՛ս որ խղճալի է»:

Երկրորդ հարցում.

— Նոյն ատեն քանի՞ հեռաձայն կրնաք գործածել:

Ասոր ալ պատասխանը առաջին աստիճանի հաւաստութեան մը լուծումին չափ դէրին էր: Գրեցի. «Ո՞րք հեռաձայնով պիտի չբաւարարուէի, այլ անհամբեր պիտի ուզէի ինը հասր միտսն գործածել»:

Երրորդ հարցում.

— Հանգստեան ժամերուդ ի՞նչ կ'ընեն:

Պատասխան. «Ես հանգստեան ժամին ըսել է չեմ գիտեր — իմ ծննդեանս տասնըփոքրորդ աստիճանին որքան եմ զայն բառարանէս, որովհետեւ ի ըսկըրանէ էր աշխատանքը»:

Գործը ինձի յանձնուեցաւ: Նոյնիսկ ինը հեռաձայն գործածելու ատեն, կը զգայի, թէ դեռ կատարելապէս հանդերձրած չեմ: Ընկալուչներու խեփորին մէջ կը գոչէի. «Ժսկոյն գործի սկսեցէք», կամ՝ «Բան մը ըրէք» — «Պէտք է բան մը պատահի» — «Բան մը պիտի պատահի» — «Բան մը պատահած է» — «Բան մը պատահելու էր»: Սակայն, առաւելաբար միջնորդին պահանջին համաձայն՝ հրամայական եղանակը կը գործածէի:

Կէսօրուան դադարը մեր ամենաշատ քրքրական պահն էր, երբ կենսանիւթով հարուստ կերակուրներ կ'ուտէինք զուարթ միջնորդի մը մէջ: Վունսիտը ի գործարարանին մէջ կը վիտային մար-

գիկ, որոնք մեծ հոծոյթով կը պատմէին իրենց անցեալէն, նման ձեռներէց անձնաւորութիւններու, որոնք մեծ հպարտութեամբ կը գրեն իրենց յուշերը: Անոնց համար ներկայ կեանքէն շատ աւելի կարեւոր էր անցեալը, անանկ որ՝ որոշ կոնակի մը վրայ կոխածիդ պէս՝ կը սկսէին հպարտութեամբ քարքաշել:

Վունսիտը ի փոխանորդ իր ատենին որոշ համբաւի տիրացած Պրոէքտ անունով մարդ մըն էր, որ դեռ ուսանող՝ գիշերային աշխատանքով ապրեցուցած էր եօթը զաւակներ ու կազ կէն մը, միեւնոյն ատեն ստանձնած նաեւ առեւտրական չորս ընկերութիւններու գործակալութիւնը, զոր յաջողութեամբ վարած էր եւ երկու տարուան մէջ ալ՝ պետական երկու քննութիւններ փայլուն յաջողութեամբ անցուցած: Երբ լրագրողները իրեն հարցուցած են. «Պարոն Պրոէքտ, մ'ըր կը թնայնք դուք», պատասխանած է. «Բնանալը մե՛ղք է»:

Վունսիտը Քարտուղարուէին ասեղնազորութեամբ ապրեցուցած էր կաղամուսին մը եւ չորս զաւակներ, միաժամանակ ինքնաշխատութեամբ հոգեբանութեան ու հայրենագիտութեան վարչապետութեան օւտիճանին տիրացած, հոգուական շունքը բուծանած ու կապելայի համբաւուր երգչուհի մը դարձած էր՝ «Վաւրի 7» անունով:

Ինչը՞ Վունսիտըն ալ, մէկն էր այն մարդերէն, որ ատուները հազիւ արթնցած՝ վճռած են գործել. «Պէտք է գործեմ», կը մտածեն անոնք, իրենց լողանքի ցամքոցին գօտին ամրացնելու ատեն: «Պէտք է գործեմ», կը մտածեն անոնք, երբ կ'ածիլուին, ու յաջթապանծ նայուածք մը կ'ուղղեն իրենց ժօրուքի սափրուած մազերուն, զորս օճառի պրոպրիաներուն հետ մաքրելու համար օճիկին ցուրին: Եսակ կը բռնեն, ու մազերու այս մնացորդները իրենց եռանդուն գործունէութեան առաջին զոհերը կը դառնան: Նոյնիսկ ամէնէն պզտիկ գործերուն կատարումը աշխատանքի զոհացում կը պատճառէ սասնկ մարդոց: Զուրի ծորակին բանալը, թուզթ գործածելը, հայ ուտելը, հակիթին գլուխը կոտ-

րեւը: Այն՛, ասոնք բաներ են, որոնք պէտք է պատահին...

Վուստիտըի համար ամէնէն թեթեւ շարժումն իսկ դորձ կը համարուի. օրինակի համար՝ զլիսարկ հանելը, — իր անդիմադրելի արիւնին շարժիլը — վերարկուն կոճկելը. իր կնոջ տուած համարոյրը: Ասոնք, բոլորն ալ, իրեն համար աշխատանք են:

Գրասենեակ մտնելու տտեն, քարտուղարուհիին բարեւի փոխարէն կը դռնէր:

— Անպատճառ բան մը պիտի պատահի:

Ու այս վերջինն ալ, իր կարգին, ուրախութեամբ կը ձայնէր:

— Բան մը պիտի պատահի:

Ամբ, գործարանին իւրաքանչիւր բաժանմունքը մտնելով՝ Վուստիտը ուրախ արամադրութեամբ կ'արտասանէր իր ամէնօրեայ յանկերգը. «Անպատճառ բան մը պիտի պատահի», ու բոլորն ալ կը պատասխանէին. «Բան մը պիտի պատահի», ու երբ ի՞մ սենեակս մտնէր՝ ես ալ ճառագայթարձակ դէմքով կը դռնէի:

— Բան մը պիտի պատահի:

Առաջին շաբթուան ընթացքին գործածած հեռաձայններս տասնըճէկի բարձրացոյցի, երկրորդ շաբթուան ընթացքին՝ տասներեքի, ու առաւելները հանրակատարին մէջ հրամայական եղանակով արտասանելիք նոր նախադասութիւններ կը կազմէի, երկու օր անընդհատ կրկնեցի նոյն նախադասութիւնը, որ ինձի գեղեցիկ կը թուէր:

«Պէ՛տք էր անպատճառ բան մը պատահէր», երկու օր ետք, ուրիշ նախադասութիւն մը կազմելով՝ ըսի:

— Ասիկա պէտք չէ որ պատահէր:

Ինզինքս իսկապէս թեթեւցած զգացի, երբ իսկապէս բան մը պատահեցաւ:

Ձորեղջարթի առտու մը — սակաւին տեղս լաւ մը չանդաւորուած — Վուստիտը սենեակս նետուելով սկսաւ իր յանկերգը. «Պէ՛տք է բան մը պատահի», սակայն անոր դէմքին վրայ նշմարեցի անանկ արտասովոր ու անբացատրելի բան մը, որ սովորականին պէս ու-

րտի արտայայտութեամբ ճիշտ մը պիտի պատահէր ըսելու արդէլք հանդիսացաւ:

Բաւական երկար տտեն ատտածանցայ, անանկ որ՝ Վուստիտը, որ պոռալու սովորութիւն չունէր, մէկէն զլիսուս պոռայ:

— Շո՛ւտ պատասխանեցէք, շո՛ւտ պատասխանեցէք, ինչպէս որ ձեզի հրահանուած է:

Ու ես, սկսածայ, մեղմ ձայնով պատասխանեցի, նման մանչուկի մը, որուն կը պարտադրուի ըսել. «Ես չար մտնչուկ մըն եմ»:

Ուրեմն՝ մեծ դժուարութեամբ կըրցայ արտասանել. «Բան մը պիտի պատահի»:

Ու հազիւ թէ նախադասութիւնը լըրացուցած էի, իսկապէս բան մը պատահեցաւ. Վուստիտը մէկէն գեպին փրանցաւ. իյնալու տտեն՝ մէկ կողմին վըրայ դարձաւ ու բաց դրան լայնքին երկարեցաւ: Երբ մատնեքուս վրայ կոխելով սեղանին շուրջը դարձայ ու գնտնահարին կողմը գացի, իսկայն ստուգեցի, թէ ան մեռած էր:

Գլուխս երեքցնելով՝ անցայ Վուստիտըի վրայէն, մտախօս ու դանդաղ ճայնելով յառաջացայ մըքանցէն ու կանգ առի Պրոշէֆի սենեակին առջեւ ու, առանց դուռը մտնանալու, մէկէն ներս խոյացայ: Պրոշէֆ երկու ձեռքերուն մէջ մէյ-մէկ ընկալուչ բռնած՝ նստած էր գրասեղանին առջեւ. բերանին մէջ բռնած էր ինքնահոս գրիչը, որուն շնորհիւ թուղթի մը վրայ կը նոթագրէր. մերկ օրունքովն ալ կ'աշխատցնէր հիւսելու մեքենայ մը, որ գրասեղանին տակ կը կենար: Ասանկով իր ընտանիքի անդամներուն հագուստներուն հարկ եղած դրամին բացը կը գոցէր:

— Բան մը պատահեցաւ, — ըսի մեզմ ձայնով:

Պրոշէֆ բերանին ինքնահոս գրիչը դուրս հանեց. երկու ընկալուչները մէկ կողմ դրաւ, ու հիւսելու մեքենային վըրայէն ալ վար առաւ. ալիսայն գործի լծուած օդ ճար:

— Ի՞նչ պատահեցաւ, — հարցուց:

A.R.A.R.@

— Հեռ Վուսիտը մեռա՛ւ, — ըսի:
 — Ո՛չ, — ըսաւ Պրոշէֆ:
 — Իրա՛ւ կ'ըսեմ, եկե՛ք տեսե՛ք:
 — Ո՛չ, — ըսաւ Պրոշէֆ, — անկա-
 ռելի՛ք է, — սակայն հազաթափները ոտ-
 քը անցուց ու նրբանցեմ քայնք հտեւէս:
 — Ո՛չ, — ըսաւ նորէն, երբ միասին
 կեցած էինք Վուսիտըլի դիակին առ-
 ջեւ, — ո՛չ, ո՛չ:

Իրեն չհակաճանաչելի, այլ Վուսի-
 տըլը կանակին վրայ դարձուցի զգուշու-
 թեամբ ու լուրջ նայուածքով մը սկսայ
 գայն դիտել: Գրեթէ մեզգայ իրեն ու
 առաջին անգամ ըլլալով գիտակցեցայ,
 թէ ես զինքը երբեք տատած չէի: Դէմքին
 վրայ նշմարելի էր բան մը, զոր ցոյց
 կու տան այն մանուկները, քրոնք յա-
 մառօրէն կը դժկամակին հրաժարիլ կա-
 ղանդ Պապուկի մասին կազմած իրենց
 հաւատքէն, հակառակ յապրելիքներուն
 քերած համոզիչ փաստերուն:

— Ո՛չ, — ըսաւ Պրոշէֆ, — ո՛չ:
 — Անպատճառ պէտք է բան մը պատ-
 տահի, — ըսի Պրոշէֆին մեղմ ձայնով:
 — Այո՛, — ըսաւ Պրոշէֆ, — ա՛ն-
 պատճառ պէտք է բան մը պատահի:

Ու բան մը պատահեցաւ: Վուսիտըլը
 թաղուեցաւ, անոր դազադին հանէն
 արուեստական վարդերուն պսակը կրե-
 լու պաշտօնը ինծի վստահուեցաւ, քանի
 որ ես ո՛չ միայն մտածելու ու գործ մը
 չընելու յարմարութեամբ օժտուած մէկն
 էի, այլեւ կազմուածքով ու զէմքով ա-
 նանկ մէկը, որուն սեւ զգեստ հագնելը
 շատ լաւ կը վայելէր: Արուեստական
 վարդերու պսակը ձեռքիս՝ Վուսիտըլի
 դազադին տխրազէմ հետեւիս բոլորին
 ալ ուղարկութիւնը գրաւած էր:

Շքեղ թաղումներ կատարող ընկե-
 րութեան մը կողմէ՛ իբրեւ կոչումով
 յուղարկուող, պաշտօնի կանչուեցայ:
 Հաստատութեան վարիչը ըսաւ.
 — Դուք ծնեալ յուղարկուորն էք:

Ձեր զգեստները իսկոյն պիտի ստանաք,
 իսկապէս որ մահահարսը զէմք մը ու-
 նիք:


Թաղմանական արարողութիւնէն ետք,
 Պրոշէֆի հազորդեցի հրաժարականս՝
 ա՛յն պատճառարանութեամբ, թէ ինչ-
 դինքս հանդիստ չէի զգար, ու իրենց քով
 կարողութիւններս բաժնելու ստիպուած
 էի: Կոչումիս յարմարող առաջին յու-
 ղարկաւորութիւնէն ետք, ըսի ինքնիրե-
 նրա. զՔու տեղդ հոս է, քեզի համար
 սահմանուած ամէնէն յարմար պաշտօնը
 գտար վերջապէս:

Գերեզմանատան մատուռին մէջ մը-
 տած կոտ զէմքով կը կենամ ննջեցեալին
 դազադին հետեւ, ձեռքիս՝ ծաղիկներու
 պարզ փունջ մը, մինչ չէնտըլի «Լարկան»
 կը նուազուի, հրաժշտական կտոր մը,
 որուն շատ քիչ կարեւորութիւն կը տըր-
 ւի: Գերեզմանատան արճարանը, գլխա-
 տըր կայանս զարճաւ, ուր ինծի վստահ-
 ւած պաշտօնը կատարելէս ետք, միշտ
 կը հանդուտանամ:

Սակայն երբեմն ալ գրպանիս դրա-
 մով կոկիկ ծաղկեփունջ մը գնած, ան-
 տէք ձեռեայի մը դազադին հետեւէն զա-
 ցող բարեսիրական ընկերութեան մը մէկ
 պաշտօնեային կ'ընկերանամ անպաշտօն
 կերպով:

Երբեմն կ'այցելեմ նաեւ Վուսիտը-
 լի գերեզմանը, որովհետեւ վերջապէս
 անոր կը պարտիմ իմ իսկական կոչումիս
 յարմարող այսօրուան պաշտօնս, պաշ-
 տօն մը, զոր իսկապէս կատարելու հա-
 մար մտածողութեան եւ մարմնական
 յարմարութեան պէտք կայ ու, զորք մը
 չընելն ալ արդէն իմ պարտականութիւնս
 Այսքան ուշ միտքս ինկաւ յիշելու
 Վուսիտըլի գործարանին արտադրու-
 թիւնը: Օճա՛ու:

ՀԱՆՐԻՍ ՊԷՕԸԼ



ԽՕՍՔ՝ ՅԱՐԳԱՆՔԻ

Հիւսիսային Ամերիկայի Առլանտանի օֆերուս գործող ժալուսթային մեր երիտասարդ միութիւնները հաւաքաբար ու, զա՛րձեալ աշխոյժ մթնոլորտի մը մէջ՝ անցեալ տարուան Դեկտեմբերին տանջին Միկա Քէլտոյանի ժալուսթային գործունէութեան ջոռանամտայ յորելեանը:

Ուսուցիչ, հրապարակագիր, իմրաչիր, գրականութեան պատմիչ՝ Միկա Քէլտոյան մեր ժառանգութեան լաթօրէն հազարը ու նաեւ բազմաթիւ կեդրոններու մէջ տարազիր մեր բազմութիւններուն սուղակիօրէն ծանօթ ժառանգական՝ բարոյական իր լաթն գործունէութիւնը ծաւալեց նաեւ աշխարհագրականօրէն լաթն տարածութիւններու վրայ, Պոլսէն մինչև Պուլ-կարիա, Հայէզլէն մինչև Եգիպտոս, Պէյրութ ու Ամերիկա, ամէնուրեք յայտնաբերելով աշխատանքի անպատու եռանդ, հանրային մեծ շահագրգռութիւն, ու հետեւողական բնախնդրութիւն մը՝ լեզուական, գրական, ազգային ու հանրային բոլոր բնագաւառներուն մէջ:

Իր ժառանգները, դիտողութիւնները, արժեքափերը անշուշտ անստորկէլի լեզան միշտ, ինչպէս իրեն համար անստորկէլի լեզան ուրիշներու կեցուածքներն ու արժեքափերը, բայց փոստը աթի է, որ մեր իրականութեան եւ յատկապէս հրապարակագրութեան մարզէն ներս ան նշուած ամէնէն բայ միտքերէն մէկը, որ իր խօսքը ջրու արագ, անմիջական, առանց բառերը ծածծելու, նեղեցումներու, իր անմին զալիչ հարուածներէն կամ փայփայանքներէն բոլորովին անկախ ժողովներով:

Բազմուսանդ իր բնատրութեամբ, հաւաքով, մեր լեզուին, շէրին, ցեղային անհատականութեան հանգէպ ունեցած խոր պաշտամունքներուն թելազրանքներով խօսելու, դժ-րելու, գործելու կիրքը շարունակ բորբոջ պահած անձ՝ Քէլտոյան եղաւ գործան ներկայութիւն մը բազմաարիւր աշակերտներու ու բազմաճառք ընթերցողներու մէջ, բազմաթիւ երկիրներու սակ: Աշխատանքի հերոս մը: Օրինակ մը:

Քէլտոյանի ընծայուած յարգանքին ժանակցող ճեղքիցի այս խօսքը հետո է մասնաւոր կողմեր ընդգծելու մտքին, այտուանդերմ, կարելի է ժալուսթային այս գործիչին հրատարակած գործերուն մէջէն շահաւէլ ճեղք մը գրականութիւնն անուն գոյր հատորները ու չկրկնէլ մեր յարգանքը անոնց անսակաւ կշիռուն ու յատկապէս Պորկրգային Հայաստանի գրականութեան նուիրուած բաժինին հանդէպ, որ կը մնայ չերկրորդուած աշխատանք մը թէ՛ իրեն ծանօթութեան զուժար եւ թէ՛ իրեն մեկնաբանական փորձ:

Յաջորդ էջերուն կու տանք անոր գործը անելի լաթն լափերու վրայ զնահատող Յ. Կարապետեանի գրութիւնը:

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

ՍԵՒ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Մեզ՝ Հայրերիս մօտ, ազգային Հոգեբանական որոշ ազդակների պատճառով — ոչ բոլորն էլ դրական — մի տեսակ սովորոյթ ու աւանդութիւն է դարձել մեր մտքի մշակներից ունէ մէկին մեծարելիս նրա արժանիքներն ու վաստակը վերադրել Հայ ժողովրդին, նրա մեծութեանն ու մշակութային դարաւոր ժառանգութեանը: Բոլորիս ծանօթ է՝ «ժողովրդից ստացածը ժողովրդին է յանձնել» դարձուածքը, որը տեղի ու անտեղի գործ է անուած Հայաստանից սկըսած մինչև Սփիւռքի ծայրագոյն գաղթօճարները: Այս մասամբ ճիշդ է Հայրերիս դէպքում: Այս մասամբ ճիշդ է բոլոր ժողովուրդների դէպքում: Որովհետև վերջին հաշուով, անհասը արտացոլում է իր պատկան ազգի բնախօսական ու Հոգեբարոյական մասնալուծութիւնները: Ասկայն նոյնքան ճիշդ է մտացման դատապարտուած ա՛յն վարկածը, թէ՛ յանախ անհատ մեծութիւններն են, որ իրենց կեանքով ու դործով Համաշխարհային բնժ ու պատուանդան են բարձրացնում իրենց ժողովրդին: Առանց Միլթընի ու Շէյքսպիրի ազգասպիտի լինէր Անգլիան: Առանց Պուշկինի, Տոլստոյի ու Դոստոյեւիչու աշխարհին թէ՛ ծանօթ պիտի լինէր ոռու ժողովուրդը: Ռարինթրանադ Թադորը աւելի լոյս սփռեց Հնդկաստանի վրայ, քան Ռիդ-Վեզան ու Ռուսինիադը: Այլ խօսքով՝ արուեստադէտը, մտքի մշակը, դիտնականն ու քաղաքական դէ՛մքն է, որ յանախ մարմնաւորում է մի ամբողջ ժողովուրդ: Այսօր աշխարհին ծանօթ է Հայութիւնը աւելի իր աստղա-Փիզիկոս Վիկտոր Համբարձումեանով, քան իր Մաշտոցներով, Նարեկացիներով, Ծնոր-

Հայիներով եւ մտքի բազում այլ առաքեալներով:

Գիտեմ, որ վէճ ու տարաձայնութեան դուռ բացեցի: Այդ լաւ է: Թող այդպէս լինի: Ասկայն այսօր իմ նպատակը պարզելն է, որ Մինաս Թէօլէօրեանը աւելի տալիք ունի Հայ ժողովրդին, քան ստանալիք, որ նա աւելին է տուել, քան ստացել, եւ որ մեծարանքի նման Հանդէսներ կազմակերպելով Հանդերձ, մեր ժողովուրդը չզիտէ իրապէս գնահատել իր որակեալ զաւակներին:

Նախ եւ առաջ ծուռ նօտենք, շիտակ խօսենք: Երբեմն, ինձ թւում է, որ մեր ժողովուրդը սիրում է մշակոյթի մասին ճառել ու իրեն մշակութասէր ձեռագրենել, երբ իրականում մշակութասէր չէ, գոնէ սփիւռքեան տարածութիւններում:

Դպրոց ենք բացում, աշակերտ չունենք:

Գիրք ենք գրում, ընթերցող չունենք:

Թերթ ենք հրատարակում, բաժանորդ չունենք:

Մշակութային Հանդէս ենք կազմակերպում, Հանդիսական չունենք:

Մինաս Թէօլէօրեանը գրեթէ կէս դար է, ինչ Հայ գրին ու գրականութեան է ծառայում, սակայն նոր ենք անդրադատնում իր Հոգեմտաւոր վաստակին, երբ իր օտարազգի գրչակիցները, ամէնու՛ր, ամէն օր, արժանանում են Հարկ եղած բարոյական ու անմիջական գնահատանքին: Ասելիքս այն է, որ Թէօլէօրեանն ու Թէօլէօրեանները աւելին են տալիս, քան ստանում, եւ որ իրենց կեանքով ու դործով աւելի են Հարստացրել մեր ժողովրդի իմացական ա-

5

ՄԵՏԱՐԱՆՔԻ ԲԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐՈՒՍՏ
ԲԱԶՄԱՆԱՍԻԱԿ ԳՐԱԳԷՆ, ՈՒՍՈՒՅԻՉ
ԲՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ, ԲԵՂԻՆԱԿ, ԽՄԲԱԳԻՐ

ԻՐԱՆԱ ԻԽՈՒԹԵԼՆԵՆԻ

ՆԱԿԱԶԵՐՆՈՒԹԵԱՄԲ
ՆԻԻ ԵՈՐՔԻ • ՆԻԻ ՃՐՋԻԻ • ՊՈՍԹՐԵՆԻ
ՏԻԹՐՈՅԹԻ • ՄՈՆԹՐԵԱԼԻ • ԹՈՐՈՆԹՈՅԻ
ԲԱՅ ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԲԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ



ձուն, երբ այդ անուն յանախ անհոգու-
թեան է ձառնուած: Այս կէտում թերեւ
ովանք ինձ հետ համակարծիք չլինեն:
Ինքը՝ Թէօֆօլեա՛նը նոյնիսկ տարբեր
ձօանցում ունի իր մշակութային ճիգերի
նկատմամբ: Ահա թէ ինչ է գրել ինձ
այդ ձօարն իր անձնական մի նամակում.

«Ձեմ գիտեր, քէ ինչ չափով արժա-
նի եմ այդ յարգանքին, որովհետեւ գը-
րականութեան, հրատարակագրութեան
եւ կրթական ծառայութեան մէջ ի վերջոյ
կաշումն է հիմնականը: Եթէ այդ կաշու-
մին Յամբով էրտինք ու վաստակ է իր-
գործուած՝ երախտապարտ պէտք է ըլլալ

անոնց, որոնք այդ կրակը գրած են իմ մէջ կամ ճամբայ հարթած են իմ ընծայումին՝ մտքի աշխատանքում: Մէկ բան յստակ է ու հաւատք է իմ մէջ, — սէր ու հաճոյք միայն ունեցած եմ իմ մտքի ու գրի հանդէպ եւ այդ մտքումս հաւար շունչով տպաւորութիւնը գոհազուրիւն բրած ըլլալու: Կը մզուիմ, ընդհակառակն, ենթադրելու, թէ շունչովս յարաբերուած զգացում մը կայ ամէն աշխատանքի մէջ, երբ մտքը իր կոչումին կ'ընդատայէ ու հաճոյքի եւ սիրոյ իր ներքին պահանջին մամրով կը յոգնի...»:

Իր այս յայտարարութեամբ Թէօօլեանը զովիս ու սուս շուր է լեցնում իմ մինչ այս զարգացրած վարկածի վրայ: Ուրեմն, գործ ունենք ոչ թէ մտքի պահանջատէր մի մշակի հետ, այլ մշակոյթի ուսուցչութիւնը հոգեկան հաճոյքի ու սիրոյ բազմիկ վերածած մի արուեստագէտի հետ — նախատեսները իրու արուեստագէտի: Իսկ թէ ինչո՞ւ է արուեստագէտ Թէօօլեանը իր քնարի հետ զուգընթաց, երբեմն ի վնաս իր քնարի, տաննեակ տարիներ շարունակ ծառայել հայ դպրոցին, հայ մամուլին ու գրապատմութեան, այդ արդէն արդիւնքն է սփիւռքահայ վերջին վաթսուամեակի հայապահպանման մասսէւեռումով յազեցած իրականութեան:

Թէօօլեանը լաւագոյն ներկայացուցիչն է սփիւռքահայ այն սերունդի, որը զբեթէ գերմարդկային ճիգերով ազգային ոգի ու շունչ, ձեւ ու կերպարանք տուեց աշխարհի տարբեր ափերում ցրուած արմատախիլ մեր երբեմնի խնկներին: Այդ սերունդը մոխիրների միջից ստեղծեց փիւնիկը: Պէտք էր սկսել սկիզբից: Իպրոջ էր պէտք, ուսուցիչ ու զասագիրք: Նկարագի՛ր էր պէտք, մշակոյթ ու ազգային գիտակցութիւն: Մամուլ էր պէտք, կենդանի խօսք ու հոգեկան հաւաքականութիւն: Եւ ամէնից կարեւորը՝ յարատեւութիւն ու հաւատք: Թէօօլեանը եղաւ թէ՛ ուսուցիչ, թէ՛ տեսուչ, թէ՛ խմբագիր, թէ՛ հրապարակագիր եւ, միաժամանակ, թէ՛ բանաստեղծ ու գրապատմարան:

Դժուար է ու նաեւ անարդար մարդ-

կային փոթորկայոյց կեանքը չոր ու անանձնական տուեալների մէջ ամփոփելը: Շատ յաճախ կենսագրական զծերը որեւէ ստորնշունքի շունչն անհատի ներքին այսպէս ասած հոգեգրութեան հետ: Սակայն քանի որ հայը շատ լաւ է հասկանում բաների խորհրդապաշտական, սիմվոլիկ իմաստը, ապա պիտի փորձենք խտացուած ձեւով ներկայացնել հայ մտքի մի մշակի կեանքը:

Մինա Թէօօլեանը ծնուել է 1913 թուի Նոյեմբեր 24ին, Պարտիզակում:

Նախակրթութիւնը ստացել է Պուր Օրթոգրաֆիկ Սրբոց Թարգմանչաց վարժարանում (1921-1927), իսկ միջնակարգ ու հայագիտական բարձրագոյն ուսումը՝ Վիեննայի Մխիթարեանների մօտ (1927-1932):

1932-1935 պաշտօնավարել է Վիեննայի Մխիթարեանների Պուրոյ լիսէում, իրրեւ հայ լեզուի եւ գրականութեան ուսուցիչ:

1935-1936ի վերջը գինուորական պարտականութիւն է կատարել Թրքական բանակում:

1936-1956 թիւը, քսան տարի, ուսուցչական պաշտօն եւ տնօրէնութիւն է վարել Սոֆիայի «Գէորգ Մեսրոպ» ճեմարանի, Գոթթանցայի ազգային վարժարանի եւ Հայէպի Գարէն Եփփէ ճեմարանի, վարելով նաեւ տնօրէնութեան պաշտօնը Գարէն Եփփէում:

1932-1936 թիւը Պուրում, ինչպէս նաեւ 1936-1956 քսանամեայ տեւողութեան, կանոնադրարար աշխատակցել կամ պատասխանատու խմբագրութիւնն է վարել «Ազգարար»ի (Պուրում), «Արեւիկ»ի (Հայէպ), «Յառաջ»ի (Փարիզ), «Յուսարեր»ի (Գահիրէ), «Ազգակ»ի (Բէյրութ), եւ «Հայրենիք»ի (Բոստոն):

Թէօօլեանի առաջին գրութիւնը Հըրանտ Ասատուրի մահուան առթիւ լոյս է տեսել 1928 թուին, Պուրոյ «Նար Լար» օրաթերթում, իսկ իր առաջին խմբագրական գործը ունեցել է Պուրոյ «Արեւիկ» եւ «Ազգարար» օրաթերթերում՝ 1932 եւ 33 թուականներին: Ուրեմն, 42 տարիներից ի վեր է, ինչ ծառայում է հայ մամուլին:

Յիշեալ թերթերին աշխատակցել է 1936 թուից սկսեալ:

1956 թուին, Վահան Նաւասարդեանի մահունից յետոյ վարում է «Յաւաքար» խմբագրութիւնը: Քաղաքական դէպքերի հետեւանքով, 1957 թուից յետոյ մեկնում է Եղիպտոսից եւ հաստատում Լիբանան՝ իրրեւ տնօրէն Բէյրութի Սուրբ Նշան բարձրագոյն վարժարանի: 1960 թուականին, հեռանալով Լիբանանից՝ հաստատում է Միացեալ Նահանգներ, ուր 14 տարիներից ի վեր է, ինչ խմբագիրն է «Լալլեմիք» օրաթերթի:

Փրակահնութիւնը, մանաւանդ գրապատմական ու քննադատական ճիւղերը եղել են իր նախասիրութիւնները՝ դասախօսի պաշտօնին զուգահեռ: Հրապարակազրոյթեան մէջ կրանուած լինելով հանդերձ, Թէօլէօլեանը հրատարակել է իր հետեւեալ գործերը:

— 1933 թուին, «Վախճան Թլէֆեան» խորագրով վերլուծական գրքոյի՝ նւերուած քերթողի գործին:

— 1937ին, Սոփիայում հրատարակել է իր արձակների ու քերթուածների մի հատոր՝ «Նախիրգանէ» անունով:

— 1945 թուին, Հալէպում հրատարակել է «Մթնայրաթ» վերնագրով քաղաքականութիւնների մի հատորիկ:

— 1952ին, Նոյնպէս Հալէպում, Ուսումնական Խորհուրդի որոշումով հեղինակել է «Արեւմտահայ լեզուի քերականութիւն» անունով երկու դասագիրք:

— 1956ին, Փահիրէում լոյս է տեսել Թէօլէօլեանի «Խար սը գրականութիւն» երկհատոր գործը, որպէս գրականութեան պատմութեան դասագիրք բարձրագոյն վարժարանների համար: Ընդգրկուած է հայոց գրականութիւնը 1850-1950: Այս գործը սպառուած լինելով՝ հեղինակը ծրագրում է վերհրատարակել այն անհրաժեշտ յաւելումներով ու փոփոխութիւններով: 1950ական թուականներին Հայաստանից գիրք ու ազդէր ստանալու դժուարութիւնների հետեւանքով «Խար սը գրականութիւն» գործի երկրորդ հատորում Հայաստանի վերաբերեալ մասը, ըստ հեղինակի, չի ստացել

է, թերի եւ անգոհացուցիչ: Թէօլէօլեանի ցանկութիւնն է հիմնական փոփոխման եւ լրացումի. ենթարկել այդ մասը:

— 1965ին հրատարակել է «Ազգային Ստեմամադրութիւնը եւ Հայկական Արտասահմանը» խորագրով գրքոյիկը:

— Հրատարակելի գործեր են՝ «Միջնադարեան տաղերգութիւնը» (11-18րդ դար):

Ինչպէս նաեւ «Աղմարիցի» եւ «Բեգրուներ» վախր անունի մէջ գործերը:

Կենսագրական յիշեալ տուեանները նշելուց յետոյ փաստօրէն աւարտուած պիտի լինէր մեր խօսքը, եթէ գործ չունենայինք բազմազան հետաքրքրութիւնների եւ անխոնջ հոտնդի տէր մի մտաւորականի հետ: Յետոյ կայ մարդը, ունի, հասարակագէտը, գրապատմական ու գրապատմաբանը, որոնք բոլորն էլ միմեանց բերումը՝ համադրումն են հանդիսանում արդէ հրապարակազրոյթի տիրուած: Եթէ մի կողմ թողնենք նրա հասարակական անցեալ գործունէութիւնը եւ կենտրոնանանք միմիայն վերջին 14 տարիների իր աշխատանքի վրայ, ապա կը տեսնենք, որ շնորհիւ Միւսա Թէօլէօլեանի, «Լալլեմիք» օրաթերթը ո՛չ միայն պահել է իր կոշումը, այլև համընթաց քայլերով արդէ բնկերային, հասարակական, քաղաքական ու մշակութային զարգացումների ու փոփոխութիւնների հետ՝ արապոյել է այդ իրականութիւնը, վերլուծել միջազգային խրատութիւնները եւ արթուն պահակի պէս մասնանշել հայ կեանքի բոլոր բընագաւառներին վերաբերող մտահոգութիւնները: Եւ այդ բոլորը՝ մտաւորական խիղիւրութեամբ՝ միշտ ելնելով հայ ժողովրդի գերադոյն շահերից: Կարելի է տարակարծիք լինել Թէօլէօլեանի հետ այս կամ այն խնդրում: Կարելի է գաղափարայնօրէն շեշտել իր տեսակէտը, սակայն վստահ կարող էք լինել իր անկեղծութեան վրայ՝ իր համոզուածութեան ու անսակարկութեան: Եւ որքան տրամաբանական են իր խմբագրականները, կուս ու փաստերով յազնցած, նոյնքան այժմէական ու կրթիչ են իր ամէնօրեայ սփռակները՝ մեծ մասամբ

հայ մշակույթին ու մշակութային գէտ-
քերին նուիրուած :

Եթէ հրապարակագրութիւնն ու ու-
սուցչութիւնը ազգային պարտականու-
թիւն է եղել Մինաս Թէօջօլեանի մօտ,
ապա գրականութիւնը իր կողումն է,
մասնաւորապէս գրապատմութիւնն ու
գրաքննադատութիւնը: Խորապէս ծանօթ
լինելով հայ ստեղծագործ մտքի պատ-
մութեան, եւ օժտուած՝ պատմական
դէպքերն ու դէմքերը առարկայօրէն վեր-
լուծելու կարողութեամբ, նա իր քաղցած
յօդուածներով, գրական սիւնակներով
եւ Վարք մը գրականութիւն» գործով
հայ գանդուածներին մտաշնչի է դարձրել
մեր թէ՛ Ոսկեդարը, թէ՛ Միջնադարը եւ
թէ Չարթօնքը: Սփիւռքահայ հրատապ
պայմանների բերումով Վարք մը գրա-
կանութիւնը պատրաստելիս Թէօջօր-
եանը ծրագրուած տոսարդրանքով ի
նկատի է ունեցել բարձրագոյն դպրոց-
ների ուսանողութեան եւ հայ միջին մը-
տաւորականութեան պահանջը, հնարա-
ւորին չափ պարզ ու սեղծ գծերով ներ-
կայացնելու Հայոց գրականութեան վեր-
ջին գրեթէ հարիւրամեակի զարգացման
փուլերը: Ինչ խօսք, որ եթէ նա լծուած
չլինէր կրթական ու հրապարակագրա-
կան անորոշող հետեւեւ վաղքին եւ իր
արածագրութեան տակ ունենար անհրա-
ժելու ժամանակն ու կենտրոնացումը,
ապա կարող էր աւելի լայն լուսարձա-
կի տակ դնել մեր վերջին հարիւրամեա-
կի գրական հորովոյթները, յատկապէս
խորհրդային գրականութեան պատկե-
րը, որը իր իսկ խոստովանութեամբ Թե-
րի է՝ ի հետեւեւս մինչեւ 1950ական թը-
ւականները ախրող Հայաստան-Սփիւռք
կողմացման, ուստի եւ անհրաժեշտ նիւ-
թերի ու աղբիւրների պակասի:

Արդէն նշեցինք իր մտաւորական խի-
զախութիւնը: Ուզում ենք կրկնել, որ
այդ խիզախութիւնը ակնբախ է իր ամէն
մի գրութեան մէջ, ամէն մի տողում,
թէկուց որչափ էլ բարձր լինեն ամէն
դոյնի ու ամէն տարողութեան տէր քուր-
մերի պատուանդանները: Գրապատմա-
կան ու քննադատական իր գործերում
Թէօջօլեանը միշտ յնձուած իրերն ու ե-

րկույթները դիտելու եւ վերլուծելու ու-
րոյն դատողութեան վրայ, յաճախ տա-
րակարծիք է մինչ այս, երբեմն կուրօրէն,
ընդունուած տեսութիւններին ու քարա-
ցած վճիռներին: Առում է խօսքը, քրա-
մարտնում եւ իր գնահատականը տա-
լիս: Թերեւս իր հզօրագոյն գէնքը հենց
իր այդ մտաւոր պարկեշտութիւնն է,
աւելի ճիշդ՝ պատմարանի անկողմա-
կալ համարձակութիւնը:

Եւ Թէօջօլեանը երբեք չըսնեց նա-
հանջի ճամբան, մ'չ որովհետեւ գիտակ
չէ Սփիւռքի ծովածաւալ խոչընդոտնե-
րին, այլ որովհետեւ հաւատք ունի հայ
ժողովուրդի ապագայի հանդէպ, հա-
ւատք՝ մեր ցեղի յարատեւութեան, ու
հաւատք՝ հայի ստեղծագործական կեն-
սունակութեան նկատմամբ:

Իր Վարք մը գրականութիւն» գործի
առաջին հատորի յառաջաբանում, ի մի-
ջէ այլոց, հետեւեալն է առում Մինաս
Թէօջօլեանը.

«Փնտտեցէ՛ք, տասնեւիմեց դարե-
րու մեր պատմութեան մէջ, Վիտր Ե-
ժուսի մեր որակը ինչպիսի ապրումին,
գաւթն ու արիւմին երակը, ու պիտի
հաստատէ՛ք՝ թէ մտնն ու կեանքը երե-
ւէ այնքան մօտ չեն եղած իրարու, որ-
քան հայութեան տարազնույնը, կատա-
րակումն ու արուքիւնը, ու նոյն հա-
յութեան իմացական վաստակի կենսառ-
նոց ուժը, կենդանութիւնը, իրաւութիւ-
նը: Փնտտեցէ՛ք որեւէ ժողովուրդ, որ,
անհատական թէ հաւաքական կեանքի
մե՛ր պայմաններում մէջ, շինած ըլլայ
իր Ոսկեդարը, իր Միջնադարը, իր Չար-
թօնքն ու վերջին հարիւր տարուան փառ-
քերը: Փա՛ռք՝ արովհետեւ ուրիշներ
ենդձաման եղած պիտի ըլլային կամ
ցամէէին, այդքան արինն ու թիւ տալէ
ետք, կամ՝ պիտի ստրկանային ձառ
իւմացապէս, այդքան երկար ատեն իրենց
սանձանոսփակ քանակը բաժնելէ ետք աշ-
խարհի չըսն անկիւններում, ու ազգովին
ենթարկուելէ ետք քաղաքական, տրե-
տեալամ ու բնկերային այն պայմաննե-
րում, որոնք ժողովուրդ մը կը վերածեն
տարաբոյս հաւաքականութեան եւ ան-
ենթաւոր դազումութիւններու: Չեղամք

ամբոխ, չեզանձ խուժան. անբաւական, սակայն չբաժնուեցանք. մեր տառապանքն ու վիշտը աւել զարձան մեզի. եւ ասոր համար ալ՝ միշտ ազնիւ ու բարձրորակ մտքի ստեղծագործութիւններ կամ հոգիի ճառագայթումներ եզան գրական մեր սեւեռումները:

«Ձեռք ստորագրեր յայտարարութիւն մը, որ պիտի յաւակնէր հռչակել, թէ հայ գրականութիւնը ամբողջական նշանումներ իրագործեց, — բառին ոչ մակերեսային իմաստով: Սակայն, կըրնամք ասորի հպարտութիւնը՝ անկարելի գոյութիւն մը յաւիտեանցուցած ըլլալու, — ինչ որ, կը կրկնենք, կենսունակութեան գիտական փաստ մըն է, եւ ոչ՝ ձրի յաւակնութիւն մը: Հպատակ, կթատ ու նուաստ ժողովուրդ մը՝ «գրականութիւն ընելու» նուագագոյն արժանիքն իսկ պիտի չկարծեսք վերածել գործի, ու ասով իսկ իր շրջափակ փաստը պիտի բնծայէր պատմութեան: Մեզ, հակադիր կեցուածքով մը, արժեքուցած ենք մեր մեծութիւնը: Պիտի ըսնմք. — հերքած ենք պատմութիւնը՝ մեր համնայն ու կենսունակութիւնը մեր համնայն ու չարքի ու մահուան աւագանին մէջ»:

Ահա այս աշխարհաշայտեցող է թէ՛ օլէօլեանը ժտեհում կեանքին, զրահանութեան, պատմութեան ու սփիւռքահայ մեր ժառանգութեան: Իրապաշտ ու տեղապաշտ մի առողջ համարութիւն: Նախապայմանը իրաւ արուեստագետի: Նախապայմանը անբասիր զրապատմարանի, եւ ինչո՞ւ չէ, նախապայմանը հայ լինելու:

Այն ինչ կը ցանկանայինք լինել՝ գաղափարապաշտութիւն է:

Այն ինչ ենք՝ իրապաշտութիւն: Առաջինը ոգին է, երկրորդը՝ մարմինը:

Մէկը առանց միւսի անկատար է: Առանց անցեալի, կորած ենք: Առանց ներկայի գիտակցութեան՝ դատապարտուած կորուստի:

Կամբընէ պէտք է մեր պատմութեան բեւեռները:

Թէ՛ օլէօլեանը այդ դժուարին ու սա-

կայն հոյաթեւ կամուրջի մի տոկուն կամարն է:

Պօսել ո՞նի մասին, ասել է խօսել մարդու մասին:

Յորդանան գետ է թէ՛ օլէօլեանը՝ վարարուն ու բարձրաբաշ: Սակայն յուզել հետ կայ շարք, խոյանքի հետ շարունակ առկայ է արամաբանութեան նմարը: Իր պերճանքը ձկնիկօ չէ, ոչ էլ խնայարդային, այլ արդիւնքը ներքին ժշակոյթի, մտքի սլացիկ յարատեւ փայլատակութեան: Այդ իսկ պատճառով է՝ զազափարնների առատահոս, սակայն գուռայ յարդականութիւնը՝ յատակ, ճկուն ու անմիջական: Իր մօտ իշխողը մտքի, ապրումի ու խօսքի բացարձակ դաշն է՝ միանգամայն բնական, այն աստիճան, որ վարակիչ է: Ես փորձում եմ իր ոճը տեղատեղի մեր վերջին հարիւրամեակի դրական շարժումներից որեւէ մէկում, սակայն այդ ինձ չի յաջողում, քանզի, ըստ իս, թէ՛ օլէօլեանը անհասականութիւն է՝ ինքնատիպ իր ոճով ու զրական նկարագրով: Ինձ հետ-յոյր թէ՛ օլէօլեանի մօտ, ինչպէս նշեցի նախապէս, իր շարքի ու կշիռի մշտութեան ներկայութիւնն է, որը ձեւ ու իմաստ է տալիս խօսքին՝ արամաբանական հունի մէջ դնելով իր բարբառն խնթութիւնը: Ճիշդն ասած, ես յոգնել եմ սփիւռքահայ մեր վերջին շրջանի գրական այսպէս ասած յատաշայտ շարժումների մարգանքներից, ուր ձգտումը սեռային երանգներ ու մակերեսային արդարութիւն ստեղծելն է՝ գուրկ նիւթից ու բովանդակութիւնից: Զուրկ՝ հարդականութիւնից: Նքեղ բառերի կուտակումից գրականութիւն չի ստեղծուում: Անորոշութիւնը ինքնին գրականութիւն չէ, եթէ գրականութիւնը չի արտացոլում արդի մարդու հոգեկան անորոշութիւնը:

Գրապատմարանի ու հրապարակագրի հետ մէկտեղ թէ՛ օլէօլեանի մէջ շարունակ ներկայ է բանաստեղծն ու գեղագէտը: Իր ամէնից անանձնական ու առօրեայ գրութիւնների մէջ անգամ ներկայ է քերթողը, որը եթէ ոչ բանաստեղծօրէն, այլ բանաստեղծական խորքով փոխանցում է

զաղափարը: Այլ խօսքով, մշակոյթ է իր լեզուն, արուեստ՝ իր ոճը, եւ գիտութիւն՝ իր քննադատութիւնը:

Որ փնտոածը ճշգրիտ խօսքն է: Ի վերջոյ Բա՛նն է կեանքի իմաստը: Պօքո՛վ է սկսուել աշխարհը:

Թէօլէօլեանի խօսքը հայ դարաւոր պատմութեան քուբայից անցած հայացած խօսքն է՝ իր արեամբ ու շնչով, իր ներքին ու արտաքին կազմութեամբ: Նըրա խօսքի յղուածութեան խորքում կայ մեր թէ՛ Միջնադարը եւ թէ՛ արդի հասարակութիւնը: Ծղրրիտ խօսքի վարպետ է Թէօլէօլեանը: Կարծեմ, այսպիսով խօսեցի նաեւ մարդ-Թէօլէօլեանի մասին:

Գործը մարդու նկարագիրն է: Ու մանք մի ամբողջ կեանք են ապրում նըկարագիր կերտելու համար: Թէօլէօլեանի նկարագրին ծանօթանալու համար պէտք է ծանօթանալ նրա գործին — ուսուցիչ, տեսուչ, դրոյ խմբագիր, բանաստեղծ, հրատարակագիր, դրասպասմարան ու քննադատ, եւ դեռ հասարակական գործիչ ու դասախօս: Գրեթէ մէկ տասնեակ կեանք մէկ կեանքում ամփոփ-

ւած: Գաղտնի՞քը: Նրա անսպառ եռանդըն է, քնատուր տաղանդը, խոր պատրաստութիւնը եւ անսակարկ նուիրումը: Իսկ եթէ հետաքրքրութիւնը մայրն է ստեղծագործութեան, ապա Թէօլէօլեանը, բոլոր ճշմարիտ մտածողների պէս, ամէն օր սկսում է նորից, մխրճուելով նոր հետաքրքրութիւնների բովո՛ւմ՝ սովորելու, ընդարձակուելու, հոգեւին լիցքաւորուելու եւ մատուցելու իր հոգեղէն արգասիքը:

Մեզ համար աւետիս է իր «Միջնադարեան տաղերգութիւն» գործը, որը հրատարակիչի ու հրատարակութեան է սպասում:

Փոխարեքական իմաստով կրկնում եմ Բակունցի մի գուհար պտտմուածքի խորագիրը՝ «Անե Յելերի սերմնացանը», որը լաւագոյնս արտացոլում է հայ մտքի սերմնացանի գործը եւ ծլարձակուած սեւ ցելերի հոգեղէն բերքը:

Թող մի՛շտ ապրի հայ սերմնացանը:

Թող աշխարհով մի ծփան հասուն հասկերը հայ սերմնացանի:

Յ. ԿԱՐԱՊԵՆՏ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՀԱՅՐԵՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Լիրանահայ ու լիրանացի գեղարուեստուհի Հասարակութիւնը Հայրենի գեղանկարչութեան եանօթացնելու առաջադրանքով, «Էրէրունի Հրատարակչութեան» կազմակերպութեամբ, «Գալլիի Մոտիւլարժի մէջ տեղի ունեցաւ Հաւաքական ցուցահանդէս մը, 1914ի վերջին շաբաթներուն:

Հակառակ այն իրողութեան, որ գեղարուեստական քննադատ Գրիգոր Տիշի կողմէ ընտրուած փոքր ու մեծ 70 պատասաններուն մօտեցուած էր որոշ գեղարուեստի ու բնանկարչութեամբ, ցուցահանդէսի կազմակերպիչները չէին ձերբազատուած անուն ու վարկ վայելող արուեստագէտներուն թոյլ պատասանները սպառելու շուկայիկ մօտեցումէն, բա՛ն մը, որուն մասնագէտներն են Պէլլուքի վաճառատուն-ցուցասրահները: Կատարուած էր ոճի փոփոխութիւն մը միայն, փնտռուած ստորաբնութեան մը փոխարէն՝ Շարթ, Ճերանեան, Տալի, Էւալլէ՝ ներկայացնելով հինգ տեսակ Արարատ (չորսը՝ Առաքելեանի վրձինով) եւ քաւկանաչափ... Հանդիսատես-յաճատարդին Հայրենասիրական զգացումները շոյող բնանկարներ: Թերեւս այս մօտեցումին պէտք է վերագրել զիմանկարներու, վերացական եւ այլ դպրոցներու պատկանող պատասաններուն բացակայութիւնը, ինչպէս՝ Երիտասարդ ու նորագոյն սերունդին (Ռ. Խաչատրեան, Ռ. Աղաբեան, Ա. Աւազեան, Էւալլէ) գրեթէ ներկայ-բացակայութիւնը:

Կարելի է անմիջապէս ըսել, թէ առհասարակ քօաներորդ դարու երրորդ տասնամեակէն ետք ծնած Երիտասարդներուն կատարած յանդգնութիւններուն եւ մարքսիստ տրամաբանութենէն եւ ընկերվարական ուղիքաբնկիւղամէն կատարուած «չեզոյմ»ներուն շնորհիւ, Հայրենի գեղանկարչութիւնը ձերբազատուեցաւ Հրահանգուած պահանջներուն ծայր Հանդիսանալու պարտաւորիչ պարտականութենէն եւ բացուեցաւ նոր Հորիզոններու:

Այդ նորայտ Երիտասարդներուն ճիգերուն իրր արդիւնք՝ Հայաստանեան գեղանկարչութիւնը արժատ Երկարեց բարեբար ենթահողի ծալքերն ի վար ու տքնալան որոնումներու մթնոլորտէն անանելով՝ Հարստացաւ ինքնադրոշմ պատասաններով:

10-28 Դեկտեմբեր տեւող այս ցուցահանդէսին իրենց մասնակցութիւնը բերած 12 արուեստագէտները կարելի է բաժնել գրեթէ նոյն բնաշխարհին պատկանող երկու խումբերու:

Առաջին՝ բնապաշտ դպրոցին Հաւատարիմ արուեստագէտներ, ինչպէս՝ Առաքել Առաքելեան, Արա Պէքարեան, Վիգէն Ռորէնեան, Մմբատ Մուրատեան, եւ իրենց ստեղծագործութիւնները իրապաշտութեամբ կամ սպաւորապաշտութեամբ բարեխառնող Գուրգէն Խանջեան եւ Յակոբ Յակոբեան:

Երկրորդ՝ աւանդական գեղանկարչութիւնէն խզուած արուեստագէտներ, որոնք նորութեան տենդէն թելադրուած կը բացուին վերացական օւ

Հոգեկան ոլորտներուն առաջնորդող ուղիներու, կամ մանուկներու թափանցիկ աշխարհին մերկ ու անպաճոյճ ջերմութեան, ուր արուեստի գերազոյն դործունէութիւնը կը դառնայ պեղումը ներքին իրականութեան, ուսումնասիրութիւնը՝ ժամանակի Հոլովոյթէն շարունակաբար մարդկային եսին:

Մարդկային բարդ ու մութ ներաշխարհին խորհրդաւոր ծալքերուն մէջ անընկալութեամբ մթին ու առոյգ ձայներու, գոյներու, բոյրերու եւ տրոփներու թանձրացման շնորհիւ, այս խումբին պատկանող արուեստագէտներուն դաստանները կը ստանան ինքնուրոյն նկարագիր, դրոշմ, պատասաղ պարբերաբար շրջանակէն դուրս մեկնող շնչառութիւն, որուն ի տես, հանդիսատեսին ու պատաստին միջև գոյութիւն ունեցող դատարկութիւնը կը լեցուի շարժումներէն բանաստեղծական հանդիսարարութեամբ ու թարմութեամբ: Այսպէսով՝ պատասառ ու հանդիսատես կը ժողովան իրարու եւ հանդիսատեսի ներաշխարհին մէջ կ'արձագանգեն արուեստագէտին ներքին ձայները: Մեր կարծիքով, այս խմբակին շարժումները ներկայացուցիչը Արուեստագէտներէն՝ Ռոպերտ Էլիքիլեանէ, Կարէն Սմբատեանէ, Քնարիկ Յովհաննիսեանէ, Մինաս Աւետիսեանէ եւ Զուլէյկա Բաժրեուկ-Մելիքեանէ:

Արդարեւ, ուշագրաւ ու շահեկան էին բնագաղտութեան ընկալիչ կազմաւորներէն ձերբազատուած եւ Արեւմուտքի մէջ երեւան եկած արդի ներկարչութեան Հոլովոյթին հետ քայլ պահող պատասանները, որոնցմէ ոմանք՝ ինչպէս Յունանեանի ստեղծագործութիւնները, գերիբապաշտօնաբարձրապաշտօնախորհրդապաշտ միացեալ յատկութիւններն ու ախորժակները կը ձուլեն հայրենի հուշերէն մը մէջ: Աւելին՝ կ'ընդելուզեն զանոնք եւ թելադրուած անհանդարտ արուեստագէտի ներքին զպանակէն՝ կը դառնան որոնման երթ, հայ մշակոյթի անդամներին թարմ ու նոր տարիներ շնորհող ընթացք:

Հայաստանեան նկարչութիւնէն ներս լայն տարածութիւններ գրաւած բնութենապաշտութեան շարունակութիւնն ու ժառանգորդը հանդիսանալ փորձող առաջին խմբակին հասարակ յայտարարը կարելի է նկատել շեշտուած տեսողականութիւնը: Տեսողական զգայարանքն է այս խմբակի անդամներուն միւս զգայարանները վարող զեկը, որ կը սկսի կատարել զիջումներ, երբ ստեղծագործողը կը կոչուի Աւետիսեան կամ Յակոբեան: Այս երկուքը յատուկ պարագաներ են: Ինչ որ կարելի է ըսել միւսներուն աղբյուրութեամբ, իբրև ընդհանուր խօսք, Պորէնեանի, Առաքելեանի կամ Պէքարեանի առիթով, նշմարելի է գոյներու թանձր գործածութիւնը, որոնք կը տարածուին խնդրոյ առարկայ պատասաններու տարածքին, հակառակ ժողովրդական փոքր տարբերութեան: Սակայն այս յատկութիւնը կը մնայ տկար ընդհանուր իրականութեան ու տպաւորութեան գիմաց, եւ մեր մէջ կը շեշտուի այն համոզմանը, թէ անոնք յաճախ իրարանման են, որուն պատճառով հանդիսատեսը կը մտնուի շփոթանքի, երբ կը փորձէ ճշդել նկարիչին ինքնութիւնը, մանաւանդ՝ երբ չի գիտեր ստորագրութեան:

Մենք կը կարծենք, թէ Ենիգիլիէն ո՛րքան ալ յաջող ձեւով կիրարկուած ըլլայ, ո՛րքան ալ արուեստագէտը ձեռք ձգած ըլլայ դոյն, տարածութիւն, ստուեր, լոյս, հաւասարակշռութիւն, ներդաշնակութիւն եւ այլ արժանիքներ, անոր արտագրութիւնը կը մնայ արհեստագործի մակարդակին վրայ, եթէ այդ թեքիչը շարժածուի ինքնատիպ դրոշմով մը՝ դրսևորելու համար եղակի անհատականութեան յատուկ ապրումները, տեսիլները, մտածումները, զգացումները:

Մեծ է 1926ին, Երևան: 1951ին ա-
ւարտած է Երևանի գեղարվեստա-քա-
ներական *ինստիտուտը*:

1955-ից սկսելով, հաւաստի է աւ-
հատական ցուցահանդէսներով, բազ-
միցս, հրապարակ եկած է արտասե-
ւանեան զանազան երկիրներու եւ Լու-
զաւանդու մէջ, ինչպէս՝ Ֆրանսա, Ա.
Մ. Նահանգներ, Չինաստան, Հիւսիս-
յիմ Ափրիկէ, Մեքսիկա, Օտեոս, Քիւն,
Պուտսվանդա, Լեհիստան, Մաւրիտ,
Վարչախա, Եւրոպ:


Ստեղծագործական կեանքին գու-
յրնքաց՝ հանգիստ կատարած է շարք
մը գիրքերու մեկտարման ու նկարա-
զարդման աշխատանքներ:



Գ. ԽՈՎՀԱՆՆԻԱՆ

Այս իրարանման կացութենէն որոշ շտիպով կ'անկատուի նաեւ Էրրորդ
արուեստագէտ մը՝ Գրիգոր Խանջեան, որ հաւատարիմ մնալով հանգերձ հայ-
կական աւանդական բնակարարութեան իրապաշտ մթնոլորտին, կը կատարէ
կարգ մը սրբագրութիւններ, կը քացուի իր յիշողութեան, ուրիշ կը քաղէ
հետաքրքրական նորութիւններ: Ասոր լուսադոյն ապացոյցը կարեւի է նկատել
խորհրդապաշտ արուեստի տարրերը ոգտագործած զթունուզեան քրիպիքիք
(triptique)» եռակտոր շարքը, ուր սպիտակի ու քաց կապոյտ ներբերանդնե-
րու տարածումով կը մեկտարուին անապատային քաղաքներու լուս պատկե-
րը, ճշիշ մթնոլորտը, որ կը թեթեւաց պահ մը ու կը լեցուի կեանքով, երբ
երկրորդ պատաստէն ներս մուտք կը գործեն երեք կիներ, որոնց փսփստ-
քը կը սկսի տարածուիլ աակաւ առ տակաւ, մարելու համար վերստին՝ վերջին
կտորին մէջ, ուր կը տիրէ սանձարձակ լուսութիւն, անխօս պտտեր, կեանքին
դիմաց փակուած փեղկեր, եւ այս բոլորը միացած կը կազմեն աւարտը շար-
քին՝ շեշտելով մեռեալ անդորրութիւնը թունուզեան շարքին, ուրիշ կու զայ
հտար մահուան, մահճետական գերեզմանոցներու զանապատ, սպիտակ շի-
րիճներուն եւ սպիտակ պատանքներուն մահահոտ ու ճշիշ մթնոլորտը: Յու-
զական եւ թախտոտ այս հոգեփիճակին վրայ եթէ քարդներ գոյնի նուրբ զգա-
ցողութիւնը, կ'ունենանք արտայայտապաշտութեան մօտենալու ձգտող
Խանջեանի պատաստները, որոնցմով կը փորձէ դիրքորոշուիլ կեանքի երե-
ւոյթներուն առջեւ՝ կատարելու համար իմացական, զգացական քնարերգակ
վերլուծումներ:

Թախտոտ ու զուարթութիւնը ինքնուրոյն մօտեցումով մը միաձուլող
Գ. Խանջեանի «Աշուն»ը գուրս կու զայ բնակարարութեան տեսողական կա-
ղապարէն, հակառակ այն ճշմարտութեան, որ անոր գլխաւոր գալարանքը
եւ տեսողական գալարանքն է, այլ խօսքով՝ խորհրդապաշտախառն տեսո-
ղականութիւն մը: Իր գոյները մեղմ են, հատուն, լուսաւոր ու բուրմուն-



Քունուզեան քրիստի

Գործ՝ Գ. ԵԱՆՁՆՆԻ

ւէտ: Տարբեր աշուն մըն է ասիկա, ուր շկան տէրեանական արտասուք ու ճիշդ, մահուան ծովը ուղղուող շոր տերեւներու սուր հոնդին, եւ խաւարի փոսն ի վար իջող կեանքի սարսափաշար իրարանցում: Ընդհակառակն, Պանջեանի «Աշուն»ը գինով է մրգահասի պարզութեամբ, կեանքի լուսերզութեամբ եւ ծիրունկին միամիտ ու հանդարտ աչքերէն բարձրացող անաղմուկ իմաստութեամբ: Իր գոյութեան արդարացման վկայադիրն է այս «Աշուն»ը, լինելութեան լուսարարատ հրճուանքն ու պտղաւորման պատարագը ապրող բնութեան ինքնագոհ խայտանքը:

Ներդուի ափերուն ծնած հայրենադարձ արուեստագէտ Յակոբ Յակոբեան ցուցադրած էր վեց կտոր բնանկար եւ մէկ «ճաքիւր մարթ»: Գէտք է ըսել, թէ մեռեալ բնութիւն մը գիտած ըլլալու տպաւորութիւնը շունեցանք մենք, այլ՝ ճիշդ հակառակը: Աթոռ մը, սեղան մը, անոր վրայ զետեղուած կաւէ ծաղկաման մը, մէկ հատիկ վարդ եւ դոյզ մը ձեռնոց: Ասոնք էին պատուր կազմող մեռեալ տարրերը: Բայց պէտք չէ մոռնալ, որ ձեռնոցներէն մէկը, եթէ իր թոյլ վիածկին մէջ կեանքի ջմայքներէն պարտեալ վայրկեանները կը նոթագրէր, ասոր կողքին՝ միւսը կը պրկուէր ինքն իր վրայ՝ մեր հողունն ու բանականութեան պատտաններուն վրայ միաժամանակ գոյն ու ձև տալով կեանքի ջմայքներուն դէմ ջղապրկուող տղամարդուն, ա՛յն բա-

Մծած է 1923իմ, Ազեմաճղրիտ:
Մամաղիտակամ կրթութիւնը ստացած է
Փահիրէի եւ Փարիզի գեղարուեստա-
կամ ակադեմիաներուն մէջ:

Ներգաղթած է Հայաստան 1962իմ:
Հաւաճական եւ աճեցողական ցու-
ցահանդէսներով երազարակ կկոծ է
Ձիտոյսովախոյ, Քանասայի, Հունգա-
րիոյ, Վիեննայի եւ Հայաստանի մէջ:



ՅԱԿՈՐ ՅԱԿՈՒԲՅԱՆ

ցական տղամարդուն, որուն խորհրդանիշը, այսինքն՝ Ղապիբեկ ձեռնոցը,
իր դալարուած միճակէն բխող շեշտ զիրքորոշումով կը դառնար կիզակէտան
ու լուսարձակը պատաստին, սիրելով իր շուրջի մեռեալ իրերուն վրայ պայ-
քարի լոյսը, ներարկելով կենարար աիւն, ալիքաւորող կշռոյթ եւ սառն ու
անտարբեր շրջապատը քանդող ըմբոստացման ջրհեղեղ:

Սակայն Յակոբեանի քնանկարները չեն ներկայացներ նոյն հոգեմիճա-
կը: Հոս տիրող տարրը անշարժութիւնն է: Մտերը քստներորդ դարու մե-
տադեան քաղաքակրթութեան ստեղծանիւթներէն ու ձուլարաններու տօթէն
օրըստօրէ կարծրացող, մետաղացող մարդը դրսեւորող անշարժ ու միայնակ
նշաններն են: Ընդհանրապէս մերկ ծառեր: Ամպոտ է երկինքը նաեւ՝ ինչ-
պէս ներաշխարհը՝ մեքենայացած մղձաւանջէն սարսափահար մերօրեայ մար-
դուն: Գոյները պակաս են ու մութ, ոչ մէկ հոփի անցք, նոյնիսկ ոչ մէկ գեփիւտի
խաղ չի շնչաւորեր սափաթիւն մէջ բանտարկուած, կայանաւորեալ չոր ու
անտերեւ կմախքները, որոնց արտասուքի (դալուկ տերեւներ) ակերն իսկ
ցամքած են վաղուց: Գոյնի թախծոտ օդայնութեամբ եւ դալուկ թափանցկու-
թեամբ կառուցուած արտայայտապաշտ քնարերգութիւններ են Յակոբեանի
քնանկարները, ուր քանի մը տարրեր, յանախ հողաշերտեր, լեռներ, ծառեր,
եղիկարական սիւներ միանալով իրարու՝ կ'առաջացնեն արուեստագէտ նկա-
րիչի մը հոգւոյն բանաստեղծական պարունակն ու տրոփները:

Դիտելէ ետք քնութեան լուսութիւնը ներկայացնող պատասանները, մեր
մէջ կը սկսի արմատանալ այն խոր համոզումը, թէ հակառակ իր գոյներու
թափանցիկ մորթը խոչընդոտող մատիտի գիծերուն նշմարելի ներկայու-
թեան, Յակոբեան այն արուեստագէտներէն է, որոնք գիտեն քնութիւնը հա-
րըստացնել նոր պարունակով, առարկայական իրականութենէն բարձրանա-
լով յոյզերու, հոգեղէն գգացումի մարդկայնացած ներաշխարհ մը՝ լի բա-
նաստեղծական ամբողջութեամբ:

Ծածկած գետի մը հունը նկարելը այն մղիչ ուժն է Յակոբեան արուես-
տագէտին մօտ, որուն զսպանակներէն առաջնորդելով, ան կը յաջողի ար-
տայայտել կեանքի տրամը: Հոս արդէն Յակոբեան կը ստեղծէ երկրորդ-ըս-



Գալտանկաթ

Գործ՝ Յ. ՅԱՎՈՐԵԱՆԻ

տեղծագործութիւնը՝ պատաստէն բխող ու մեզ վերացնող ենթաբեմաւը։ Հողի ու միտի, մահուան ու շոր տունկերու այս հարազատ հաւասարումը, որ տեսանելիին չափ բովանդակալից է, կու գայ հարստացնելու պատասաբ յաբաշարժ խորքով։

Արեւմտեան նկարչութեան արդի հոսանքներուն հետ հաշտ պատասաներ են երկրորդ խմբակին մաս կազմող նկարիչներուն գործերը՝ խորհրդապաշտ, արտայայտչապաշտ, գերբիրտպաշտ, խորանարդապաշտ, վերացապաշտ ու փոփ արուեստի յատկութիւններով պատուաստուած շեղումներ։

Այս խումբին ամէնէն դասական նորարարը Չուլէյկա Բաժբուկ-Մելիքեանն է։ Միջնադարեան արուեստի մութ ճշուշը թանձր յիշողութեան նրման նստած է անոր բոլոր պատաստներուն վրայ։ Յիշողութեան հեռաւոր կայաններուն իրենց աղօտ կերպարանքը դեռ քարշ տուող ուրուականներ բլրան կարծես իր հերոսները։ Մշուշոտ դիմաստուերներ, որոնք կ'ազօտին ուղղահայեաց անձրեւի համաշարութեան ետին։ Ան մանկութեան գունաթափ յիշատակարանի խոր յատակներէն կ'արտահանէ աղաւաղուած յուշեր, զորս կը կրտուցէ գոյն-կաթիլներու պղտոր գունահոսումով՝ արտայայտելու համար խաբկանք հոգեփիճակը։ Այս յատկութեամբ կը թարգմանէ իր առօրեային մաս չկազմող խաբկանք-յուշերուն ու իր միջեւ գոյութիւն ունեցող հեռաւորութիւնը։ Մտոցուած դէմք մըն է «Նաւագախումբ»ի իւրաքանչիւր անգամը։ Նոյն պարագաներով մեզի կը ներկայանան «Բնտանիք», «Պար հայկական լեռներուն վրայ» անուն պատաստներուն մէջ բռնուած անձերը, որոնք իր բանականութեան ու յիշողութեան ցանցերը կը ճմլին՝ ինչպէս հին, շատ հին յաճախանքներն ու երազները մանկութեան։ Այդ իսկ պատճառով «Բնտանիք» պատաստին ամէնէն յստակ դէմքը իր դիմաստուերն է, իսկ

լեռ ու երկինք կը խառնուին իրարու, հազիւ կ'ուրուագծուի պարը, եւ ուր-
ւակուններու պղտորութեամբ կը յաճախեն ճոռացութեան դատապարտուած
նուագախումբի անդամներուն սուսերային պատկերները, պարուհիներն ու
բուլբուլները:

Այսպէս չեն սակայն էլիբէկեանի հերոսները: Կրկէտի գերակատարներ
են անոնք, արագաչարժ, զուարթ ծաղրածուններ, բռնուած՝ կրկէտի կենսու-
րախ եւ յարաշարժ բուլբուլներն մէջ:

Քատերական են նաեւ իր հերոսներն ու մթնոլորտը, այսինքն՝ բեմա-
կան, ուր տիրականը կատակերգակ Քատրոնին համար ինքստ տնհրաժեշտ
չափազանցեալ շարժումն է, զուարթ գոյներու եւ առատ լոյսերու փռնի մը
մէջ որսացուած: Փառաստնային այս մթնոլորտը, որ յապեցուած է ժողո-
վըրդական բանաստեղծութեան թափանցիկ թևերով, հանդիսատեսին
մօտ կը ստեղծէ վերացական մեկնաբանութեան մը տպաւորութիւնը, բայց
եթէ հորիզոնական բնութեցումէ մը ետք պահ մը փորձենք կատարել ուղղա-
հայեաց ընթերցում մը, կը զգանք, թէ մեզի ներկայացուած պատաստներուն
ոճը վերացական խարկանք մըն է: Ի վերջոյ էլիբէկեանի աշխարհը բանաստե-
ղծական աշխարհը չէ, բանաստեղծութիւնն չէ, այլ՝ բանաստեղծականու-
թիւն, որովհետեւ իր տիպարները բեմական տիպարներ են, աւարկայական
ներկայութիւններ, մէկ պատաստէն միւսը տեղափոխուող զխարժակներ,
եւ հակառակ գունային ճոխ սարքին, հակառակ կրկնային կայստառու-
թեան, պատաստները կ'իյնան միօրինակութեան թակարդին մէջ, նոյնիսկ՝
եթէ այս շարքին նպատակը ըլլայ ներկայացնել աշխարհ մը՝ զիտուած դա-
նազան անկիւններէ: Թերեւս այս միօրինակութեան բերումով է, որ եւ ի-
լիբէկեանի, եւ Բաժրեալ-Մեյիքանի, եւ Յովհաննիսեանի նկարները մեզի
կը ներկայացնեն իւրայատուկ աշխարհի մը միօրինակ ու թերի նկարագիրը,
նոյնքան միօրինակ ոճով մը, որ կը մնայ իրենց ամէնէն խոցելի կէտը:

Գոյնի ներդաշնակ արտայայտչականութեամբ հանդիսատեսին մեկ-
նող վերոյիշեալ երբեակին ամէնէն յանդուգնը Քեարիկ Յովհաննիսեանն է, ո-
րուն ներկայացուցած չորս ճեպարի մտքներուն երկուքը՝ «Նաթիւր մարք»
խոզովուկներով» եւ «Նաթիւր մարք» անուն կտանները յագեցուած էին շնչա-

Մնած է 1928թ. Երևան: Մամու-
լիտական կրթութիւնը ստացած է Լե-
ռիճակաճի զեղարուեստական ուսուցիչ-
միայն մէջ:

1956թ. սկսեալ, եռամսկան ու ամ-
կատական ցուցանաչէտներով երազա-
րակ եկած է Երևանի, Ձեյնթրիմաճի եւ
Խորհրդային Միութեան բազմաթիւ
մէջ:



Ք. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



Յոյրածնի ճաթիւր մարք

Գործ՝ Գ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ուր տարածութեամբ ու խորանարդազաւտ կառոյցով, բան մը, որուն մէջ տարրով (խողովակներ) կառուցուած վերոյիշեալ պատտաւը Հայաստանցի արուեստագիտուհիի մը սուրբն է... Բրայիզմին: Մեր կարծիքով, 1974ին կարելի չէ ստորագրել արուեստի նման գործ մը:

Նոյնը կարելի չէ ըսել Յովհաննիսեանի միւս ճնաթիւր մարքին առնչութեամբ, Հակոբակ այն իրողութեան, որ այս պատտաւին մէջ եւս, Յովհաննիսեան կը մեկնէ անշարժ բնութիւն մը բաղկացնող ատաղձներէ՝ ծաղկաման, սեղան, պտուղ եւ ծաղկամանը զարդարող ծառի ճիւղեր: Սակայն, ինչ որ Հետաքրքրական եւ ուշագրաւ է այս պատտաւին մէջ, բանաստեղծական այն հանդիսաւորութիւնն է, որուն գոյութեան դիմաց մարդ կ'արձանանայ պահ մը, իր մէջ կ'առաջանայ զայն երկրորդ եւ երրորդ անգամ ընթերցման ենթարկելու տրամադրութիւն, որուն կը յաջորդէ տերեւներու միութեամբ յատկացած Հազիւ նշմարելի դիմաստուերին ամբողջացումը եւ, վերջապէս, պատտաւը կը լեցուի արեւելիցի տէրվիչի մը թախծոս ու տառապաւնաւոր էութիւնը թարգմանող դիմաստուերի ծաւալող բովանդակութեամբ:

Ծնած է 1832ին, Լեմնակամ: Գեղարուեստական կրթութիւնը ստացած է Երեւանի թերթիՎեղեմանի ոմանոս ուսումնարանի մէջ:

1859էն սկսեալ, հաւաքական ու անհատական ցուցանակներով երազարակ եկած է Երեւանի, Լայպցիցի, Պերկրատի, Լեհաստամի եւ այլ բազմաթիւ մէջ:

Ստեղծագործական կեանքին զուգընթաց՝ Սմբատեան կտարած է կարգ մը գիրքերու ձեւաորում ու ճկարագարում աշխատեցներ:

Ներկայիս, կը վարէ ժամկապատու նկան «Պիոներ» ամսագրին գեղարուեստական խմբագրի պաշտօնը:




Կ. ՍՄԲԱՏԵՅԱՆ

Փոփ արուեստի, վերացապաշտութեան եւ կառուցողապաշտութեան աւանդները օգտագործող պատասաններ էն Կարէն Սմբատեանի ստեղծագործութիւնները: Վրձիկի լայն հարուածներով՝ ան կը ջնջէ մանրամասնութիւնները, կը մերկացնէ ծառերը, տուները, բլուրներն ու շրջանակին մէջ բանտարկուած բնութեան մէկ պատկերը եւ մտտ ու ազտութեամբ զոյներու կուտակումով կը կառուցէ ընդհանուր կերպարանքը, որուն պատճառով կը մթալնի պատասուր, կը տիրէ անհաղորդակցութեան ճնշի: մթնոլորտը:

Մանկական մեկնարանութեամբ յղացուած Սմբատեանի պատասանները կը ձերբազատուին իրենց չափազանցեալ կերպարանքէն, երբ Սմբատեան կը յղկէ իր գիծերը, կը դառնայ ժուժկալ գոյներու գործածութեան զծով, եւ առաւել մօտ մանկական գծային ոճին: Այս յատկութիւններով իրագործուած «Մաղիկներ ու առագաստամուտեր» եւ «Միջնաբերդ» անուն գործերը կը թըւէին բլլալ իր լաւագոյն պատասանները: Հասունութեան եւ վրձիկի ժուժկալ հարուածներու տէր արուեստագէտի մը անսխիւնի ապացոյցներն են վերոյիշեալ զոյգ պատասանները:

Մինաս Աւետիսեան քաղաքակրթուած օրինակն է Սմբատեանի պատկանած արտայայտապաշտ դպրոցին: Աւետի՛ն. Աւետիսեան այն նկարիչն է, որ պիտէ իրերու արտայայտչականութիւնը օգտագործել եւ լծել զանոնք խորանարդապաշտ տարածութիւններու կենդանացման աշխատանքին:

Աւետիսեանի ցուցադրած 6 պատասանները կարելի էր բաժնել երկու խումբերու: Հաստատանեան բնակարարութեան վերամշակուած օրինակներն են առաջին խումբին պատկանող կտաները, որոնք կը կրեն «Լեմնակամեան բնակարար», «Գիւղիմ մէջ» եւ «Կամուրջը» անունները: Զուարթ ու վառ գոյներու ներգաշնակ գործածումով Աւետիսեան երկիւնքն ու բնութիւնը կ'ենթարկէ հաւասարեցման աշխատանքի: Այս աշխարհընկալման իբր արգիւնք «Լեմնակամեան բնակարար»ին մէջ ծառի մերկ կոճղերուն ետին երկինքը կը ստանայ տերեւներուն կանաչ գոյնը: Նոյնը տեղի կ'ունենայ «Գիւղիմ մէջ»



Միջնաբերդ

Գործ՝ Կ. ՍՄԻՍՅԱՆԻ

պատաստի տարածքին, երբ տնակներն ու երկինքները կը դրսևորուին վառ հողագոյն եւ նարնջագոյն երանգներով:

Երկրորդ խումբի պատաստները թիւով նոյնպէս երեք էին: «Արուեստագէտի մը արհեստանոցը», «Ազգամուզը» եւ «Նաթիւր-մարք» անուն այս նկարները ունէին տարբեր բնոյթ: Եթէ վերջինը ծնունդն է խորանարդապաշտական մթնոլորտի, միւս երկուքը շունին ո՛չ «Նաթիւր-մարք»ին խորանարդապաշտական դիմադիծը եւ ոչ ալ անոր զուարթ ու վառ բովանդակութիւնը:

Շարժի թեթեւ ազդեցութիւնը մտնող «Ազգամուզ»ն ու «Արուեստագէտի մը արհեստանոցը» թախծախառն քնարերգութիւններ են, ուր տիրող զոյնը հողագոյնն է առհասարակ, իսկ մարդիկը անշարժ ու կիսամութ գէժքեր են, որոնք կ'ապրին իրենց աղջամուզները:

Արտայայտչապաշտութիւնը Աւետիսեանի վրձինին տակ կը ստանայ կուս եւ յանդուզն կարողականութիւն, որուն յաջողագոյն նմոյշը «Ազգամուզ»ն էր: Ան գոյնեղէն սարսափող նկարիչ ժը շէ: Լուսաւող, արեւարդը

Ծնած է 1928ին, Հայաստանի Հա-
շուռ գիւղը: Յոճոխած է Երևանի գե-
ղարվեստական ուսումնարանը եւ եկե-
սեւած գեղարվեստա-բանկրական Բ-
նըստիտուտի դասընթացներում: 1960ին
ատարած է Լենինկրտսի ակադեմիան:


1960էն սկսեալ, եւաւրական ու ան-
հատական ցուցահանդէսներով երազա-
րակ եկած է Երևանի, Մոսկուայի,
Վիեննայի, Փարիզի եւ արտասահման-
ում շարք մը այլ երկիրներու մէջ,
իմպէտ- Ձեխոսլավաքիա, Հունգարիա,
Իրան, Գանատա, Եւայլն:

Ստեղծագործական ինքնին գու-
գընթաց՝ Անտիսեան կատարած է շարք
մը քանդակաւ գործերու մեւաւարման
աշխատանքներ:




Մ. ԱՆՏԻԱՆ

Եւ Հողի զգացողութեամբ յաղեցած պատտաներ են իր ստեղծագործութիւն-
ները, ժողովուրդին մատչելի պարզ քնարերգութիւններ:



Ազգամուղջ

Գործ՝ Մ. ԱՆՏԻԱՆ



Ա. ՅՈՒՆԱՆԵԱՆ

Ծնած է 1922ին, Հայաստանի Երզնկայեան գիւղը: 1950ին աւարտած է Երևանի գեղարվեստական ուսումնարանը, իսկ 1956ին՝ գեղարվեստ-քանդակագիտական ինստիտուտը:

1950էն սկսեալ, հաստատուած ու ամենատանկ ցուցահանդէսներով հրապարակ եկած է Երևանի, Վարշաւայի, Մանրեպի, Փրակայի, Պիլիբուտի, Պէյրուսի, Կանայի եւ այլ քաղաքներու մէջ:

Ստեղծագործական կեանքին զուգընթաց՝ Յունանեան կը դասաւանդէ Երևանի մանկավարժական ինստիտուտի Եկարչական բաժնին մէջ:


Յունանեանի ներաշխարհը հարուստ է միասին պարունակող: Բանաստեղծական այն ներաշխարհն է անիկա, որուն էջերն ի վար սուզուել ձգտող արուեստագէտին կը պահանջուի խոր անհատականութիւն, միշտ պրիււաւծ լիզեր, հմտութիւն եւ երեսակայութիւն:

Բնազանցական ու գոյապաշտ այս անջրպետին ներք Յունանեան մուտք կը գործէ յայտուն արուեստագէտի վճռակամութեամբ, որուն կայանները յաջորդաբար կը դրաւուին նկարչական թեքնիքներուն լաւագոյնս տիրապետած եզակի արուեստագէտին կողմէ:

Տանթէական ու նարեկացիական ներաշխարհն է ասիկա: Ի տես իր պատասաններուն, մեր մէջ կ'արմատանայ այն սպաւորութիւնը, թէ կը գտնուինք նոր աշխարհի մը դէմ յանդիման: Այլ խօսքով՝ ներատուզումի կամ անծանօթին բացերն ի վեր կատարուած թռիչքներ են իր ստեղծագործութիւնները, զնայուն ու տեսանելի վայրերու սահմաններուն մշուշներէն իսկ անդին գտնուող անտեսանելի, բայց գերագոյն ճշմարտութիւնը, այդ ճշմարտութեան առեղծուածները, անկէզ մորենիի նման անընդատ հրկիզուող, բայց չսպառող յաւիտենականութեան խորհուրդները: Արդէն, իր խորագիրներն ալ ասիկա կը թելադրեն՝ «Լ՛մ աշխարհը», «Բարի հրեշտակ», «Իրամ առջեւ», «Իրախտի ճամբան», «Փակ դուռը», «Տեսիլք», «Ներսը» եւ «Խաչելութիւն»: Իբր տեքնը օգտագործուած զարդախորագիրներ չեն Յունանեանի պատասանները պիտակող վերոյիշեալ անունները, այլ բնազանցական աշխարհի մը ծնունդ այս կամ այն պատասանն ողջ էութիւնը լուսաւորող ուղենիւններ, որոնք կը հարթեն հանդիսատեսին յառաջացման արդելք հանդիսացող տեսիլքներու պատնէշները:

Յունանեանի նկարները գոյներով կառուցուած բանաստեղծութիւններ են, բարձրորակ ու տարօրէն ինքնադրօշմ, թէ՛ իբրեւ խորք եւ թէ՛ իբրեւ ոճ:

Արդարեւ, զանազան դպրոցներու ոճերուն ընդելուզումը՝ հայկական ճարտարապետութեան եւ նարեկացիի համամարդկային ապրումներու հնօցին մէջ՝ կը կազմէ այն հայաբոյր կաւը, որով արուեստագէտը կը կառուցէ հայկական գեղանկարչութեան պատիւ բերող գործեր:



Խաչելութիւն

Գործ՝ Ա. ՅՈՒՆԱՆՅԱՆԻ

Փորձեր են անոնք, որոնցմէ իւրաքանչիւրը նոր գործ ըլլալով Կան-
դերձ, է՛ նաեւ իր զոյութիւնը արդարացնելու ձառող լինելութեան գրաւա-
կան: Յունանեան դերբիբապաշտ գեղանկարիչներուն պէս (Մարք Էրնէսթ,
Սալվատոր Տալի, եւ այլն) կը գործածէ Հեղուկի Յանձնութիւնը ունեցող
ներկը եւ թուղթը, բայց չնոր՛իւ ակադեմական թեքնիքներու կատարելապէս
տիրապետած ըլլալուն՝ կը սանձէ նկարչական լեզուն, այսինքն՝ Հեղուկ
դոյները, ճարտարօրէն կը ղեկավարէ անոնց տարածումը թուղթին վրայ, ո-

բուն իբր արգիւնք՝ թուղթը կը ծծէ ներկի երանդները, կը յառաջանան թափանցիկ հեռաւորութիւններ, հորիզոնական ու անլրպետային խաբկանք՝ համապատասխան ներքին աշխարհի մեծութեանը կը յայտնուին:

«Իմ աշխարհը» ընդհանուր խորագրով ներկայացող Յունանեանի կըտարները, եթէ զանց ընենք «Խաչիչալի» խորագրեալ պատարագը, կ'ունենանք Հայկական ոգեղինութեան հարազատ ու յաջող մէկ արտայայտութիւնը: Հեթանոս ու քրիստոնեայ կրկնակ պատկանելիութեան տարբերով, մշտնջուրներով, շուկաներով ու բոյրերով իրագործուած շարականներ են Յունանեանի կտակները: Լոյսը, բարին, խորհուրդն ու եռեւեփող կեանքը պաշտող հայ տղոջուրդի հոգւոյն համանուագին եզակի ձայներէն մէկը:

Աւելին. Յունանեանի աշխարհը հայ ոգեղինութեան հարազատ համանուագն է, անոր նկարագրային յատկութիւններով հասունցած հմայիչ անջըրպետ մը իր կարգին, միշտ կարօտ վերձանման, որովհետեւ անոր տեղծագործութիւնը որոնման գերագոյն ոճերէն մէկն է՝ բանաստեղծական ամբողջութիւն մը, զոր լուսագոյն կարելի է մեկնարանել Բրնէ Շարի հետեւեալ խօսքով՝ «Իրաւ բանաստեղծութիւն կը նշանակէ որոնումը աշխարհի մը, որ միշտ որոնումն կարօտ կը մնայ»:

Միշտ որոնման եւ բնութեցման կարօտ յարազարժ ու մշտանորոգ բանաստեղծութիւններ են «Իմ աշխարհը» անուան տակ մէկտեղուած եւ ցուցահանդէսին մեծագոյն անակնկալը Հանդիսացող Արտաշէս Յունանեանի շարական-պատարագները:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Ձ Ե Ա Ն

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՇԵՇՏԸ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Բ.

Թէեւ այսօր մենք կարող ենք որոշա-
կի պատկերացում կազմել նաեւ հելլէ-
նական ու հելլէնիստական ժամանակա-
շրջաններում ապրած փիլիսոփաների
կեանքի եւ ուսմունքների մասին, պէտք
է սկզբից եւեթ նկատի առնել, որ ստեղ-
ծրած հարուստ դրամականութեան բեկոր-
ներն են մնացել միայն: Մեծ մասամբ
այդ դրամականութիւնը կուլ է դնացել ժա-
մանակի ու պատահարների երախին: Եւ
մասնագէտները զանազան վկայութիւն-
ները ի մի բերելով է, որ կարողանում
են դիմապատկերներ կառուցել: Այդ պա-
րագան թէեւ ինչ-որ չափով «հեշտացը-
նում» է շարքային ընթերցասէրների
զործը, անչափ դժուարացնում է հետա-
զոտողների աշխատանքը:

Նոյնը վերաբերում է եւ էպիկուրեան
դպրոցի հիմնադիր էպիկուրին ու բոլոր
միւս՝ բարոյագիտական ուղղութեան փի-
լիսոփաներին: էպիկուրի մասին տեղե-
կութիւնների աղբիւր են ծառայում հը-
նադարեան հեղինակների՝ մա՛նաւանդ
Կրիկերոսի, Սենեկայի, Պլուտարքոսի եր-
կերում ցրուած վկայութիւնները, Լուկ-
րիցիուսի նշանաւոր «Իրերու բնութեան
մասին» պոեմը: Բայց ամէնից շատը
կարելի է գտնել Յրդ դարի հեղինակ Դիո-
գենես Լահրտացու «Նշանաւոր փիլիսո-
փաների կեանքը եւ ուսմունքները» երկի
10րդ գրքում:

Լահրտացին այդ գրքում շարադրում
է էպիկուրի բաւական մանրամասն
կենսագրութիւնը եւ ասլիս նրա դործի

բնութագրութիւնը: Միաժամանակ զե-
տեղում է էպիկուրի նամակներից երե-
քը եւ հիմնական ասոյթների մի փունջ:
էպիկուրը սովորութիւն է ունեցել իր
երկերի համառօտ ու մատչելի շարադ-
րանքը ուղարկել հետու տեղեր սպորդ
հետեւորդներին: Եւ Լահրտացին գի-
տակցարար ընտրել է այնպիսիները, ու-
րոնք ընդհանուր պատկերացում են տա-
լիս էպիկուրի ուսմունքի երեք հիմնական
բնագրատուների վերաբերեալ:

Լահրտացին վկայում է նաեւ, թէ
էպիկուրը բեզուն հեղինակ էր եւ գրել
է ժողովրդապէս 300 աշխատութիւն: Նա
յիշատակում է 40 դիւրաւ երկերի վեր-
նագրերը: Այստեղ արժէ նշել այնպիսի-
ները, որոնք ընթերցողին ինչ-որ բան
կարող են յուշել՝ «Բնութեան մասին»
(37 գիրք), «Հիւլիների եւ դասարկու-
թեան մասին», «Սիրոյ մասին», «Գրքե-
րի համառօտագրութիւն ընդդէմ բնա-
գէտների», «Ընդդէմ մեզարականների»,
«Կասկածներ», «Հիմնական ասոյթներ»,
«Ինչը պէտք է ընտրել եւ ինչից պէտք է
խուսապիլ», «Կեանքի նպատակը», «Զա-
փանիշի մասին կամ կանոն», «Աստուած-
ների մասին», «Աստուածավայութեան
մասին», «Ապրելակերպի մասին» (4
գիրք), «Արդար արարքի մասին», «Հիւ-
լի անկեան մասին», «Ճակատագրի մա-
սին», «Երեւակայութեան մասին», «Ե-
րածշտութեան մասին», «Արդարութեան
եւ այլ առաքիմութիւնների մասին»,
«Թագաւորութեան մասին»: Այսպէզ

յիշուած «գրքերը», ի հարկէ, չպէաք է հասկանալ այսօրուայ իմաստով ու ծաւալով: Հին ժամանակների «գրքերը» կարելի է համեմատել ամենաշատը այժմեան աշակերտական տետրակների ծաւալի հետ:

1647 թուին, Լիոնում լոյս տեսաւ Փարիզի Քաղաւորական Կոլէժի փիլիսոփայութեան դասախօս՝ արքա Պիէր Գառնդիի մեկնարանութիւնը Լաերոտացու 10րդ գրքի մասին, որի մէջ քննութեան էր առնուած Էպիկուրի ուսմունքը, միաժամանակ Էպիկուրի հիւլէապաշտութիւնը հակադրուած Իսկարտի բանապաշտութեանը: Այնուհետեւ Էպիկուրի նկատմամբ հետաքրքրութիւնն աճեց, ինչ որ զգալի է մա՛նաւանդ անգլիական փիլիսոփաների ու ժան-ժակ Ռուսոյի մօտ:

1709 թուին սկսուեցին վեզուվամերձ Հերկուլանուսի պեղումները: Եւ 1750-65 թուականներին բացուեց մի շքեղ ստանձնատուն, որը ենթադրաբար պատկանել է հարուստ ու ջերմեռանդ Էպիկուրեանի: Քանզի բազմաթիւ անդրինքի ու կիսանդրինքի շարքում, ինչ որում նաեւ Էպիկուրի, գտնուել է նաեւ Էպիկուրեան հեղինակների 1849 երկեր պարունակող գրադարան: Այդտեղ էր նաեւ Էպիկուրի նշանաւոր «Բընուքեան մտախն» երկը, բայց ամբայցած վիճակում: Մասնագէտները մեծ դժուարութեամբ կարողացան ստել որոշ բաներ մի կերպ վերձանել՝ այստեղից-այնտեղից:

1888 թ. Վատիկանի գրադարանում գտնուեց Էպիկուրի ասոյթիների մի այլ ձեւագիր ժողովածու: Հետագայում էլ՝ ուրիշ աննշան վկայութիւններ: Եւ այդ բոլոր սահմանափակ նիւթերի հիման վրայ է, որ ամէն անգամ փիլիսոփայութեան պատմաբանները ձեւակերպում են իրենց եզրակացութիւնները:

Էպիկուրի կեանքի պատմութիւնը այն տպաւորութիւնն է թողնում, որ նա աւելի շուտ ինքնուս, քան դպրոց յաճախած փիլիսոփայ էր: Եւ նա իրականում հպարտանում էր, որ փիլիսոփաների մօտ չի ուսանել: Բայց դա նշանակում է, որ նա անպայման կարգացել

է եւ խորհրդածել, ինչ որ վկայում է նրա բեզուն զրիչը:

Էպիկուրը ծնուել է 341 թ. (մ. թ. ա.), Սամոս կղզում, Աթէնքից զաւթած ծնողների ընտանիքում: Հայրը ուսուցիչ էր, բայց զբաղւում էր նաեւ գիւղատնտեսութեամբ: Այնպէս որ՝ Էպիկուրի մանկութիւնն ու պատանեկութիւնը անցել են Սամոսում: Տասնընորս տարեկանից հետաքրքրուել է փիլիսոփայութեամբ: Ասում է, թէ երբ ուսուցիչները շկարողացան դահուցիչ պատասխան տալ Էպիկուրի հարցին՝ Հեթոգոսի քառսի վերաբերեալ, նա արհամարհեց ուսուցիչներին եւ կլանեց փիլիսոփայութեամբ, սեփական ուժերով պատասխան գտնելու համար: Հայրը նկատել էր որդու ուշիմութիւնը եւ Սամոսից նրան ուղարկեց փոքրասիական Գառնուսի դպրոց թէ՛ ուրիշ ուսուցիչ մօտ: Էպիկուրը մի քանի տարի այնտեղ մնաց, ծանօթացաւ Գեմոպիլոսի ուսմունքին եւ խիստ տպաւորուեց: Տասնութ տարեկանում գնաց Աթէնք, իր գինուորական պատրաստութեան համար: Երբ փերադարձաւ Սամոս, ծնողները քաղաքական ղեկավարի հետեւանքով զաղթել էին փոքրասիական Կոլոֆոն քաղաքը: Ինքն էլ գնաց այնտեղ, ուր եւ իր ներքին հասունութեան հասաւ: Ապա, մօտ 30 տարեկանից սկսած՝ ապրում էր փոքրասիական Միթելէն եւ Լամպակ քաղաքներում ու փիլիսոփայութիւն ուսուցանում: 306 թուին վերջնականապէս հաստատուեց Աթէնքում եւ, հաւանաբար, իր հետ եկած աշակերտների բարեկեցիկ ծնողների օգնութեամբ գնեց մի հողամաս, ուր կային բնակարաններ, ուրիշ շէնքեր եւ, մա՛նաւանդ՝ այգի: Այդ այգու կապակցութեամբ էլ Էպիկուրի հիմնած դպրոցի փիլիսոփաները կոչւում էին «Պարտէզի փիլիսոփաներ»: Էպիկուրի դպրոցում կային բազմաթիւ աշակերտներ, այդ թւում եւ կանայք ու ստրուկներ: Էպիկուրի երեք եղբայրները եւս փիլիսոփայութիւն էին ուսանում: Էպիկուրն իր դպրոցը վարեց 36 տարի եւ մահացաւ 72 տարեկան հասակում՝ 270 թուականին, միզափամփուռութիւնով:

դոյացած քարի հետեւանքով, որից այնքան տառապել էր, բայց տոկացել այնպիսի արիտութեամբ: Էպիկուրի դպրոցը շարունակեցին վարել ուրիշները, մինչև հոսմէական կայսրութեան օրերը:

Էպիկուրի փիլիսոփայութեան ուսմունքը, ինչպէս ընդունուած էր նաև փիլիսոփայական այլ դպրոցներում, ասենք՝ ստոյիկներին մօտ, բազկացած էր հիմնականում երեք մասից՝ բնագիտութիւն (ֆիզիկա), տրամաբանութիւն (լոգիկա) եւ բարոյագիտութիւն (էթիկա): Այդ բաժանումը նրանց զիւտը չէր, այլ արդէն ձեւակերպուել էր Արիստոտելի կողմից: Ընդամին, սովորաբար, բնագիտութիւն ասելիս հասկացուած էին նաև բնագանցութիւնը, աստուածաբանութիւնը, ժարգարանութիւնը եւ հոգեբանութիւնը, իսկ տրամաբանութիւն ասելիս՝ իմացարանութիւնը, քերականութիւնը, տրամախոհութիւնը (դիալեկտիկան), ճարտասանութիւնը: Բայց ինչպէս ստոյիկների, այնպէս էլ էպիկուրեանների մօտ աստուածութիւնը տրուած էր բարոյագիտութեանը, միւսներին օժանդակ դեր էր վերապահուած: Ստոյիկներն, օրինակ, ասում էին, թէ՛ «Փիլիսոփայութիւնը մի աստղաբան է, ուր տրամաբանութիւնը ցմովապատմ է, բնագիտութիւնը՝ հազմ աւ ծառերը, իսկ քառոյագիտութիւնը՝ սլառլմերը»: Ահա թէ որքան մեծ նշանակութիւն էին տալիս նրանք փիլիսոփայութեան այդ ճիւղին եւ ինչու է նրանց ուսմունքը կապուած դրա հետ:

Բնականաբար, էպիկուրի բարոյագիտութիւնը կտրուած չէ բնագիտութիւնից ու տրամաբանութիւնից, այլ սերտօրէն միահիւտուած է նրանց, բացատրուած ու պայմանաւորուած է նրանցով: Այլապէս կր լինէր ոչ թէ բարոյագիտական ուսմունք, այլ հասարակ խրատարանութիւն:

Էպիկուրի բնագիտութիւնն, օրինակ, բխում է Դեմոկրիտի հիւլէապաշտութիւնից (ատոմիզմից): Ըստ Դեմոկրիտի, տիեզերքը կազմուած է դատարկութիւնից եւ անբաժանելի, անսահման, անփոփոխ հիւլէներից, որոնք յաւի-

տենապէս ու ճակատագրականօրէն շարժուում են զուգահեռ: Էպիկուրը դրան անլացրեց զկիսմանի» (չեղման) ուսմունքը: Սա կարող է սուկ փոքրիկ զարագրութիւն» թուալ, բայց իրականում վճռական էլակէս հանդիսացաւ միւս բոլոր զեղումների» համար: Էպիկուրը պնդեց, որ հիւլէները ի վիճակի են սկզբնական ուղղութիւնից շեղուել եւ իրար կցուել ու այդպիսով բազմատեսակ մարմիններ ձեւաւորել: Այդ հիման վերայ, էպիկուրը նոր բացատրութիւն տրւեց եւ հիւլէների ձեւի, մեծութեան ու այլնայլ յատկութիւնների վերաբերել, մերժելու համար ճակատագրի անհրաժեշտութիւնը եւ ամբապնդելու համար պատահականութեան դրոյթը: Դա հիմք էր տալիս եւ մարդու որոշակի ինքնավարութեան սկզբունքին: Էպիկուրի ըմբռնումով, ի հարկէ, աշխարհի հիմքը նրեթական է: Հոգին եւս նրեթական է, որը կազմուած է նուրբ տեսակի հիւլէներից:

Էպիկուրը նոյն ձեւով աստուածներին եւս նրեթական է համարում՝ հիւլէներից կազմուած, որոնք, սակայն, մարդուց անելի բարձր են եւ կատարեալ, ինչոր ոյրաններում սպրում են իրենց համար անվրդով ու երջանիկ եւ չեն խառնուում մարդկանց գործերին: Դրա համար էպիկուրը անաստուած (աթեիստ) է համարուել: Բայց պէտք է հաշուի առնել ժամանակի ըմբռնումները աստուածների մասին, առհասարակ մինչև օրս էլ գոյութիւն ունեցող հակասական պատկերացումները եւ Հենց էպիկուրի ասոյթները, որպէսզի այնքան էլ շատ կարեւորութիւն չտանք այդ ասթեիզմին:

Այս ամէնից բխում է եւ էպիկուրի համոզումը, թէ չկայ անդրլիբիժեան կեանք, չկան պատիժներ եւ ուստի մաշից վախենալը անհիմն է: Քանի դեռ կանք, — ասում էր նա, — մահ չկայ, իսկ երբ այն լինի՝ մենք չենք լինի եւ իրար չենք հանդիպի: Էպիկուրը ձգտում էր, որ մարդիկ յաղթահարեն ժառանգական վախը:

Էպիկուրի բնագիտական ըմբռնում-

ներին համապատասխանում է եւ նրա տրամաբանութիւնը, թէ մարդը ինչպէս եւ ինչ ճանապարհով է հասնում ճանաչողութեան: Այդ տրամաբանութեան հիմքում դրուած է զգացողութիւնը:

Բարոյագիտութեան հիմքում եւս զգացումն է: Էպիկուրը դերագոյն բարիքը համարում է հաճելի զգացումները, ուստի եւ դաւանում, որ կեանքում պէտք է որոնել հաճոյք ու խոյս տալ ցաւից: Այդ շարաքաստիկ «հաճոյք» բառը շատ քաշքռուքների տեղիք է տուել դարերի ընթացքում: Սակայն էպիկուրի ուսմունքին անմիջապէս իրազեկները զիտեն, թէ ինչումն է բանը եւ ինչպէս է պատկերացրել էպիկուրն ինքը արդ դժբախտ:

Հաճոյքի (αἰσθησις) գրոյթը հիմնական տեղ է բռնում Արիստիպես Կիրենացու եւ նրա հետեւորդների՝ կիրենեան ուսմունքի մէջ, հասցուելով շեշտուած ծայրայեղութեան: Աւուում է, թէ էպիկուրը նրանից է ազդուել: Մինչդեռ այդ երկու ուսմունքների միջեւ սար ու ձորի տարբերութիւն կայ: Արիստիպեսի համար զգացումը մի շարժում է, որը կոչւո է ցաւի մէջ, եւ փոփոկ՝ հաճոյքի մէջ: Էպիկուրի համար, ընդհակառակն, հաճոյքը հանգստութիւն է, որը կայանում է մարմնական ցաւի եւ հոգեկան խռովքի բացակայութեան մէջ: Դա «տաքաէ-սիան» է (անյուզութիւնը): Ուստի՝ նա անողոքաբար դատապարտում է հարբատութեան ու պատիւների ձղտելը, հանրային գործերին խառնուելը, փափկակեացութիւնը, որոնք հոգս եւ խռովք են պատճառում: Քարոզում էր շափաւորութիւն, հոգեկան խաղաղութիւն եւ արիութիւն, զազափարակիցների հետ շփուելու ճաշակ, եւ այլն:

Էպիկուրն անձամբ, ըստ բոլոր վկայութիւնների, եղել է վերին աստիճանի սեկուլաւապետ, աշնուաբարոյ ու փափկանկատ մարդ: «Մի գարնեացով եւ մի քիչ օրով, — ասում էր նա, — իմաստունը կարող է մրցել Ջեւսի հետ՝ երբանուրբեան մէջ»: Նրա համար սուաքիտութիւններ էին հանդիսանում խոհեմութիւնը, շափաւորութիւնը, հոգեկան ուժն ու կո-

րովը, արդարամտութիւնը: Դրանով հանդերձ, թէ՛ էպիկուրի ողջութեան օրօք եւ թէ՛ նրա մահից յետոյ՝ շատերն են վատարանել նրա ուսմունքը եւ ջամձին մեկնաբանութիւններ տուել: Դրանք եղել են ինչպէս փիլիսոփայական այլ դպրոցների պատկանողներ, այնպէս էլ «նախկին էպիկուրեաններ», որոնք ինչ-ինչ պատճառներով հեռացել են էպիկուրեաններից:

Պարզ է, որ էպիկուրի բարոյագիտական ըմբռումներին ծանօթանալու համար, անկախ բոլոր ուսումնասիրութիւններից ու մեկնաբանութիւններից, պէտք է դիմել անմիջապէս նրա «երկրաքին»: Թէեւ այժմ տրամադրելի «երկրաքին» բառացիորէն շնչին մասն են էպիկուրի ամբողջական վառտակի, այնուամենայնիւ, կարելի է անսխալ կողմորուել ընդհանուր գծերով: Այդպէս էլ ասում են փիլիսոփայութեամբ հետաքրքրուողները, իւրաքանչիւրն իր հաշուին:

Քանի որ այս ակնարկում մեզ զբաղեցնում է էպիկուրի յատկապէս բարոյագիտական ուսմունքը, ունելորդ չէ մի քանի ըստ հնարաւորին ընտրու մէջբերումներ կատարել հետաքրքրութեան համար:

Այս աղբյուրութեամբ, արժէ նշել մի կէտ: Սոյն ակնարկում մէջբերումներ են արուելու ո՛չ միայն էպիկուրից, այլեւ մի շարք ուրիշ փիլիսոփաներից: Արդ՝ ինչպէս որ այդ փիլիսոփաները հայերէն չեն զրել, այնպէս էլ մէջբերումները չեն թարգմանուում ուղղակի դասական յունարէնից ու լատիներէնից, այլ հիմնուում են մինչայժմեան եւրոպական լեզուներով կատարուած թարգմանութիւնների վրայ: Իսկ յիշեալ թարգմանութիւնները, ի հարկէ, ասուացիորէն նոյնը չեն, քանի որ միեւնոյն երկը թարգմանուել է տասնեակ տարբեր մարդկանց կողմից եւ ստացել տարբեր երանդներ: Ուստի՝ երբեմն մասնագէտները դանդաւատում են, թէ մինչեւ հիմա այսօրինչ կամ այնինչ երկի կանոնաւոր թարգմանութիւն դեռ չունենք եւ եղանակ մտաւորապէս է թարգմանուել: Ահա թէ ինչու այս հանրամատչելի ակնարկի հա-

մար թարգմանուած կտորնեը եւս պէաք է համարել պարզապէս հետաքրքրական նիւթեր, հիմնական իմաստով, այլ ոչ թէ դիտական բծախնդրութեամբ կատարուած հետազոտութեան արդիւնք:

Կպիկուրն ինքը իր բարոյադիտական բժշկութեանը համառոտաբար շարադրել է Մենեստասին յղած նամակում: «Էպիկուրից ոգոյն Մենեստասին» բառերից յետոյ նամակն սկսւում է այսպէս.

«Երբ մարդ երիտասարդ է՝ չլիտօք է վարանի փիլիսոփայութեանը ճուրղւելուց, իսկ երբ ծեր է՝ չլիտօք է երածարուի ուսումը շարունակելուց: Քանզի ոչ ոք չի կարող համազօյլ, թէ ինքը շատ երիտասարդ կամ շատ ծեր է՝ հագու առողջութիւն ձեռք բերելու համար: Ով որ յաւանդի, թէ փիլիսոփայութեան ժամը դեռ չի հասել կամ արդէն անցել է, կը նմանուի նրան, ով որ կ'ապի, թէ երջանիկ լինելու ժամը չի եկել կամ արդէն անցել է»:

Այնուհետեւ, անգրադառնալով ասուածներէ հարցին, կպիկուրը գրում է.

«Աստուածները գոյութիւն ունեն եւ դա ակնյայտ է, բայց նրանք կամ ոչ թէ այն ձեւով, ինչպէս որ ամբոյն է պատկերացնում: Ամբոյնը նրանց հանդէպ երբեք չի պահում նոյն ըմբռնումը: Անաստուած պէտք է համարուի ոչ թէ նա, ով աւստուածներին բաժանում է բազմութիւնից. այլ նա, ով նրանց վերագրում է ամբոյնի յերկրանքները: Իսկապէս, վերջինիս պնդումները յեմուում են ոչ թէ ակնյայտ գիտելիքների, այլ խարուսիկ ենթադրութիւնների վերայ: Սրանից էլ ըստում է այն կարծիքը, թէ աստուածները չարերին ամենամեծ ցաւերն են պատճառում, իսկ լաւերին ամենամեծ բարիքներն են շնորհում: Միշտ էլ տրամադրուելով իրենց՝ սեփական առաքինութիւնների օգտին, մարդիկ ընդունում են նրանց, ովքեր նրանք են իրենց, եւ խորք են համարում նրանց, տարբերում են իրենց գործելու նպատակից: Ընտելացի՛ր այն մտքին, որ մտքը ոչ ինչ է մեզ համար, քանի որ ամեն բարիք ու ամեն չարիք գրացման մէջ են.

եւ մտքը այս վերջինիս լրիւ բացատուում է»:

Հանոյքի մասին կպիկուրը գրում է.

«Հանոյքը երջանիկ կեանքի սկիզբն ու վախճանն է: ... Եւ որովհետեւ հանոյքը մեր հիմնական բարիքն է եւ ներքնարույթ, չենք որոնում ամեն տեսակ հանոյք: Լինում են դէպքեր, որ մենք անցնում ենք շատ հանոյքների կողքով, եթէ նրանք գլխացաւանք կարող են պատճառել: Եւ մենք շատ ցաւեր նայելուսում ենք հոգեյններից, եթէ երկար ժամանակ կրած տառապանքներն յաջողում է տելի բարձր հանոյքը: Այսպիսով, ամեն մի հանոյք իր բնութեամբ իսկ բարիք է, բայց ամեն հանոյք չլիտօք է որոնուի: Կամեպէս, ամեն մի ցաւ չարիք է, բայց ամեն ցաւից չլիտօք է խոյս տալ ամեն զեղով: Յամենայնդէպս, այս ամէնը հարկաւոր է որոշել, համեմատելու եւ ուշադրութեամբ քննելով, թէ արն է օգտակար եւ որը վնասակար: Քանզի մենք երբեմն բարիքի հետ վարում ենք ինչպէս չարիքի հետ, իսկ չարիքի հետ վարում ենք այնպէս, որ կարծես թէ բարիք լինի»:

Շարունակութեան մէջ կպիկուրը բացատրում է, որ իր դաւանած հանոյքը ասնճարճակների եւ նմանների հանոյքը չէ, ինչպէս որ ասում են իր ուսմունքը չհասկացող, իր հետ անհամաձայն մարդիկ կամ չար ժողով մեկնաբանողները: Ապա դառնում է իմաստութեան հարցին.

«Այս ամենի մէջ իմաստութիւնը ակորունքն է եւ ամենամեծ բարիքը: Ուստի՝ այն նոյնիսկ տելի արժէքաւոր է, քան փիլիսոփայութիւնը, քանզի միւս բոլոր առաքինութիւնների աղբիւրն է, քանի որ ուսուցանում է, թէ չի կարելի երջանիկ լինել՝ առանց իմաստուն, ուղղամիտ ու արդարամիտ լինելու, ոչ էլ իմաստուն, ուղղամիտ ու արդարամիտ՝ առանց երջանիկ լինելու: Առաքինութիւնները, յիշուի, միտեհիւստած են երջանիկ կեանքին եւ վերջինս անբաժանելի է նրանցից»:

«Մտածի՛ր, հիմա, — ասում է կպիկուրը, — թէ ով կարող է տելի բար-

օրը լինել իմաստունից, որը աստուածների մասին յարգալից կարծիքներ ունի, միշտ էլ աներկիւզ է մահաւան մասին մտածելիս, հասցրել է հասկանալ, թէ որն է բնութեան նպատակը, պատշաճորէն գիտի, որ գերագոյն բարիքը մտայելի է մեզ եւ հեշտ է ձեռք բերելը, եւ որ ծայրագոյն չարիքը երկար չի տնւում կամ էլ մեզ սոսկ թէթեւ ցաւ է պատճառում:

Ճինչ վերաբերում է ճակատագրին, որը ռմակ է համարում եմ ամէն ինչի տէր, — *դրո՞ւմ է էպիկուրը*, — իմաստունը ժպտում է: Իսկապէս, աւելի լաւ է ընդունել աստուածներին վերաբերող առասպելը, քան ծառայել բնագէտների ցոյց տուած նախաստորին: Քանզի առասպելը զանէ մեզ թոյլ է տալիս յուսալու հաշտութիւն աստուածների հետ՝ նրանց մատուցուող պատիւների միջոցով, մինչդեռ ճակատագիրը անզոգ անհրաժեշտութեան բնոյթ ունի: Ինչ վերաբերում է պատեակականութեանը, իմաստունը ամբօխ նման դա չի համարում իբրեւ աստուած, քանզի աստուականութիւնը ոչ մի բան չի կատարում անկարգ ձեւով, ոչ էլ իբրեւ անկայուն պատճառ: Կա չի հաւատում, թէ պատեակականութիւնը բարիք աւ չարիք է բաշխում մարդկանց, նրանց համար երջանիկ կեանք ապահովելու ձեւով, այլ՝ որ ճա նրանց հասցնում է մեծ բարիքների ու մեծ չարիքների տարբեր: Կա գտնում է, որ աւելի լաւ է վատ բախտը՝ լաւ մտածելու հետ, քան լաւ բախտը՝ վատ մտածելու հետ: Ի հարկէ, ինչ որ կարելի է մտաթել մեր գործերին, այն է, որ առողջ դատադութեան իրագործումը նպատարաւոր պատեակականութեան կողմից:

Մենեոսիսի ուղղուած նամակը աստուած է այսպէս.

«Ուրեմն, լաւ մտածիր, այս բոլոր եւ ճայն կարգի բաների մասին: Մտածիր գիշեր-ցերեկ, մեծ-մեծակ եւ նմանների հետ: Եւ երբեք, ո՛չ արքայն ժամանակ ոչ էլ երագում, դու լրջօրէն խռովի չես մտաւնուի, այլ կ'ապրես իբրեւ աստուած՝ մարդկանց կռակին: Քանզի ճա,

ով ապրում է անեղծ բարիքների մէջ՝ ոչինչով ճման չէ ռեւէ այլ մահկանացուի»:

Այս մէջբերումները միայն մէկ նամակից են: Հետաքրքրուողները կարող են մեծաթիւ ասոյթներ գտնել թէ՛ միւս նամակներում եւ թէ՛ ասոյթների հաւաքածուներում: Բայց այստեղից էլ պարզ է, թէ ինչու՞ն է կայանում էպիկուրի բարոյագիտական մտքի էութիւնը: Երջանիկ կեանք, առաքինութիւններ, իմաստութիւն, բարեկամութիւն, մարդասիրութիւն, եւ այլն, — ահա այդ բարոյագիտութեան առանցքը:

Արդէն ասուեց, որ էպիկուրեան դպրոցը շարունակուեց երկար ժամանակ եւ ունեցաւ բազմաթիւ աշակերտներ: Կային աւելի կամ պակաս անուանի հետեւորդներ: Ոմանց միայն անունն է մնացել, իսկ ոմանց էլ երկերի բեկորներն են պահպանուել: Այստեղ հարկ չկայ մէկ առ մէկ անդրադառնալու բուրիս: Բայց յիշենք ամէնից նշանաւորներին: Էպիկուրի մօտից յետոյ դպրոցը վարեց նրա աշակերտ Հերմարքոս Միթիլենացին: Նրա երկերն են «22 զրոյցներ Խոնդրոպիլեսի մասին, նամակների ձեւով», «Գիտութիւնների մասին», «Ընդդէմ Պլատոնի», «Ընդդէմ Արիստոտելի»: Մետրոդորոս Լամպսակցին՝ էպիկուրի նախադրած աշակերտն ու մշտեբիժ բարեկամը (330-277, մ. թ. ա.), որը գրել է մօտ 20 աշխատութիւն: Պոլիեռես Լամպսակցին՝ էպիկուրի աշակերտն ու բարեկամը, առանջնակարգ մաթեմատիկոս: Գրել է երկու երկ՝ «Կասկածներ» եւ «Ընդդէմ Արիստոնի»: Էպիկուրի խնդաւան աշակերտ Կոյրթես Լամպսակցին գրել է հետեւեալ գրքերը. «Անկարելի է ապրել ուրիշ փիլիսոփաների ուսմունքներին հետեւելով», «Ընդդէմ Պլատոնի Լիսիսի», «Ընդդէմ Պլատոնի Էլեթիլիսի»: Ապոլլոդորոս էպիկուրեանը, կոչուած «Պարտէզի թագաւոր» (ապրել է 2րդ դարի երկրորդ կէսին, մ. թ. ա.): Եւրոպոսի երկրորդ կէսին, մ. թ. ա.): «Փիլիսոփայական ուսմունքների ներածութիւնը», Նը-

րա աշակերտն ու յաջորդն էր Չենոն Սի-
զոնցին (ծնուել է 150 թ. մ. թ. ա.) :
Բեդուն հեղինակ, որը բարձր է գնահատու-
ւել իր արամբարանական դատողութեան
ու վսեմ ոճի համար, համարուելով իր
ժամանակի էպիկուրեաններից մեծագոյ-
նը : Յիլոդեմոս Գազարացին (մօտ 110-
28, մ. թ. ա.), նրա աշակերտը, գրել է
է մօտ 20 աշխատութիւն, մեծ մասամբ
շարագրելով իր աւուցչի մտքերը : Կա-
րեւոր հատուածներ յայտնաբերուել են
Հերկուլանումի պեղումների ընթացքում :
Չենոնից յետոյ դպրոցի վարիչ էր Յեդո-
րոս Աթենացին, որը գրել է «Աստուած-
ների մասին» գիրքը : Դիոգենես Տարսոն-
ցին (2րդ դար մ. թ. ա.) գրել է «Եպի-
կուրի բարոյագիտական ուսմունքների
հասկանալի գրութիւն» եւ «Ընտիր շա-
րադրանքներ» երկերը : Դիոգենիանոսը
(2րդ դար մ. թ. ա.) յայտնի է Քրիստի-
սոսի ճակատագրապաշտութեան քննա-
դատութեամբ :

Հռոմէական Հանրապետութեան
ժամանակ, առաջին դարում (մ. թ. ա.)
էպիկուրեան ուսմունքը հետեւորդներ
ունեցաւ նաեւ Հռոմում : Մասնագիտու-
կան գրականութեան մէջ յիշուում են զա-
նազան անուններ (Կիկերոնի բարեկամ
Պոպոնիոս Ատտիկոս, Կատուլլոսի
գրական շրջանակի քանաստեղծներ, Վիր-
գիլիոսն ու Հորացիոսը՝ երիտասարդ ժա-
մանակ, Կեսար, Կասսիոս, Պլինիոս
բնագէտ, եւ այլն) : Բայց ամենացայտուն
ու խանդավառ դէմքը շատերի կողմից
հանճարեղ համարուող քանաստեղծ
Լուկրեցիոսն էր :

Տիտուս Լուկրեցիոս Կարուսը ծնուել
է հաւանաբար 98 թ. (մ. թ. ա.), Հռո-
մում : Կիկերոնի բարեկամը : Ենթա-
զըրում է, որ փիլիսոփայութիւն ուսա-
նել է Աթենքում՝ Չենոն Սիզոնցու մօտ :
Քննադատան է կողմ դարձնել հաւանա-
բար 55 թուին, ոմանց ասելով՝ սիրոյ
ըմպելիքի հետեւանքով առաջ եկած եւ
երկար տեսած հողեկան խանդարման վի-
ճակում՝ ճգնաժամային մի պահի : Գը-
րել է «Իրերի բնութեամբ մասին» նը-
շանաւոր փիլիսոփայական՝ վեց մասից
կազմուած անաւարտ պոեմը, որի մէջ

մեծ պաթոսով եւ ուժով շարադրում է
հիմնականում էպիկուրի ուսմունքը եւ
առհասարակ պաշտամունքով է յիշում
նրա անունը : Արտակարգ հեղինակի ար-
տակարգ գրական կոթող :

Պէտք է կարծել, որ հետագայում էլ
էպիկուրեան ուսմունքը հետեւորդներ է
ունեցել այլեւայլ վայրերում : Այդ է
վկայում Դիոգենես Էնոանդացու պարա-
զան (Կիլիկիայում), որն ապրել է մ. թ.
2րդ դարի վերջերում : Լինելով Չերմե-
անոց էպիկուրեան, նա իր ծննդավայր
քաղաքի սիւնարահներից մէկի պատի
վրայ հատուածներ է փորագրել տուել
իր երկերից եւ էպիկուրի ուսմունքի էա-
կան տեղերից, որպէսզի իր հայրենա-
կիցներն ու օտար այցելուները հասկա-
նան ու գրանով իսկ ազատուեն անքանա-
կան հաւատքներից եւ մահուան երկի-
րից : 1884 եւ 1892 թուականների պեղում-
ների ժամանակ յայտնաբերել են մի շարք
կարեւոր արձանագրութիւններ : Ահա
նրանցից երկուսը .

«Երբ ասում է, թէ իրերը չեն կա-
րող համաչուել, սա արդեօք չի՞ նշանա-
կում ասել, թէ հարկաւոր չէ ասումնա-
սիրել բնութիւնը : Յիբաւի, ո՞վ կ'ուզե-
նայ արձնել մի բան, որը երբեք չի կա-
րող գտնել» :

«Հողի բաժանումից յետոյ, ան-
շուշտ, իւրաքանչիւր իր հայրենիքն
ունի, բայց ինչ վերաբերում է սիեզեր-
քի ամբողջ տարածքին, միայն մէկ հայ-
րենիք կայ բոլորի համար՝ երկիրը, եւ
միայն մէկ բնակավայր՝ սիեզերքը» :

Քանի որ արհեստեւ բուն Աթեւ-
մուտքում յունարէնի իմացութիւնը ան-
համեմատ նուազեց, էպիկուրի ուսմուն-
քը արթուն մնաց Լուկրեցիոսի լատինե-
րէն պոեմի շնորհիւ : Պոեմը 9րդ դարում
վերստին արտադրուեց, հասնելով Վե-
րածնոյին : 15րդ դարի նոր արտադրում-
ների միջոցով պոեմը առաւել տարած-
ւեց : Այս Գասենդին, Լաերուացու վրայ
յինուելով, արժարժեց էպիկուրի հարցը
եւ սպաղարութեան ու թարգմանութիւն-
ների շնորհիւ պատմութիւնը յայտնի
դարձաւ աշխարհին : Այստեղ աւելորդ չէ
յիշել, որ Կարլ Մարքսի աւարտանալը

ունէր հետեւեալ վերնագիրը. «Բնա-
քեան փիլիսոփայութեան տարբերա-
թիւնը Դեմակրիտի եւ Հպիկուրի մօտ»:

Հետաքրքրութիւնը Հպիկուրի հան-
դէպ շարունակում է մինչեւ մեր օրերը:
Այդքէն Կամիւն, օրինակ, իր «Ըմբոստ
մարդը» գրքում (1951 թ., Փարիզ),
«Բնագոյնցական ըմբոստութիւն» գլխի
մէջ, բաւական շարժով քննութեան է են-
թարկում Հպիկուրի եւ Լուկրեցիուսի
հայեացքները ու որոշում նրանց տեղը
եւրոպական մտքի պատմութեան մէջ:

Հելլէնիստական ժամանակաշրջանի
բարոյազիտական փիլիսոփայութեան
միւս նշանաւոր դպրոցը ստոյիկեան
դպրոցն էր, որը նոյնիսկ աւելի շատ
տարածում ունեցաւ, մասնաւոր հռո-
մէական կայսրութեան մէջ, ինչ որ ան-
պայման ունի իր պատմական հիմնաւո-

րումը: Այդ կապակցութեամբ որոշ բա-
ցատրութիւն կը տրուի այս ակնարկի
յաջորդ մասում, երբ կը պարզուի նաեւ
ստոյիկեան ուսմունքի էութիւնը ու կը
պատկերացուեն նրա առանձնաշատկու-
թիւնները:

Ուշագրաւ է, որ Հպիկուրեան ուս-
մունքը յայտնի է իր հիմնադրի՝ Հպի-
կուրի անունով, մինչդեռ ստոյիկեաննե-
րի ուսմունքը ճանաչում է ուղղակի իր-
րեւ այդպիսին եւ անմիջապէս չի կապ-
ւում հիմնադիր Զենոն Կիտիոնցու ան-
ւան հետ, թէեւ նրա դերը միանգամայն
անժխտելի է: Թերեւս դրա պատճառնե-
րից մէկն էլ այն է, որ Հպիկուրը դրա-
կանութիւն է ստեղծել, իսկ Զենոնը
հիմնականում բաւարարուել է բանաւոր
դասախօսութիւններով ու համեմատա-
բար, եւ ոչ միայն համեմատաբար, զիչ
է դրել:

(Շար. 2)

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

ՍՈՎՈՐԱՍՈՒՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ...



Դատողական գեղեցիկներու վրայ՝ դատան քան է տեսնել որոշ համարում վայելող նորերը աւանդական այն գինու- մութեան մէջ, որ ամբողջ երկու սերունդ պաշնեց թմրեցնող էր ազդեցութեան տակ:

Դատան քան է տեսնել նորերը, որ սովորածութեան կարգը խախտելու յեղափոխական վերաբերումներու փո- խարէն՝ չես գիտեր ինչ-ինչ հանդա- մանքներու տակ կազմուած գիւրհաւաճ ու շատ արժեքափերով կը ծօտենան հի- ներու բերքին:

Կարգացէք «Սովետական գրականու- քիւն» ամսագրի անցեալ տարուան Հոկ- տեմբերի համարէն արտագրուած քոյի սինակին գրութիւնը ու արդէն պարզ կը դառնայ, թէ դատողական ի՞նչ տխուր մակարդակի մը վրայ կը գտնուինք:

Չայն ստորագրողը, նորայր Ադալ- եան, ՅՈսկան թուականներուն Հայաս- տանի երիտասարդական արձակին մէջ յայտնուած դէմքերէն է, անցնող տա- նամեակին պատմութեանը ու վիպակներ հրատարակած ու հիներէն անջատուող ոճական ստոյգ շնորհներու տէր երիտա- սարդ մը, որ դատուածի մարդին մէջ կ'ըն- թանայ ահաւաստիկ բոլորովին կոխուած գեղեցիկներէ, պատրաստ մտքեր, հիւ- ցումներ ու զեղումներ կրկնելով:

«Տարերային անմիջականութիւն», «արտակարգ գեղեցիկ», «հոգու շարժման ինչպիսի խոսքուում»:

Եւ այս բոլորը մաս կը կար- ժեն Խոսակեանի՞ էջերուն որակին: Եւ վատահուած մէջբերում՝ Նմոյշին, որ զուրկ է ո՛չ միայն բանաստեղծութեան յետին նշոյլէն, այլեւ կա՛ր է մինչեւ ան- դամ իրրեւ որակուոր:

Ազգայինի եւ միջազգայինի բարդ հարցերուն լուծումը կարելի՞ է նման թուութիւններու ապաւինել: Ներքի՞ է մեզի միջազգային շուկաներուն ներկա- յանալ այդպիսի չքաւոր շարակներով:

Ամէն ժողովրդի գրականութիւն այդ ժողո- վերդի գեղարուեստական պատմութիւնն է, որք մէջ ուրիշներ նոյնպէս հանաչում են իրենց, այն- տեղ զանազան հարգում մտք, հոգսեր եւ զգոց- մունք:

Որո՞նք են առաջադիւժող յոգե- նիշները, թէ՛ համամարդկային, կարո՞ղ է գրա- կանութիւնը, արուեստը ընդհանրապէս, պատկո- նել լոկ մի ժողովրդի եւ կամ արտասուել բա- ցառապէս արտաքին աշխարհի արժագրութիւն- ներ, եւ, վերջապէս, որոյք թուն ինչպէ՞ր հարա- դաս ժողովրդի հետ խօսք ու զրոյցի բանա՞ծ է, թէ՛ նրան չընկերակող, մեծ աշխարհին հարա- դասանալը:

Ի հարկէ, Իսահակեանի գրաբերային անձ- ջակեանութիւնը, որ մեզ ներկայանում է ար- տակարգ գեղեցիկ բանաստեղծութիւններէ, կրկնորի տեսքով, միամտութիւն կը լինի անմահ գուշ- լով բանակը երկու մասի. սա զանգին հայրե- նիքն է, սա էլ արտար աշխարհը: Այդ գործե- րում հայրենի հողն ու մեծ աշխարհը մի հողի եւ մարտին են, աւելի ճշշէ՛ հայրենիքի բանա- տեղական պատկերում անպարփակ աշխարհից այնքան հողի (սէնս) կայ, որ այն թուած է աշ- խարհի շափ, իրեն կրկնող արտանութեամբ եւ մամանակով միմեանցից հեռու ընդ մարդկայն ժաբերն ու արտերը:

Ե՛յ ջան հայրենիք, ինչպե՞ս սիրում ես, Աստիքը կորած երկնի մովի մէջ, Քրքոյ անձը, հոգիքոյ անձը, Մեծակ թայեֆոյ տրուած-նպի մէջ...

Ընդամենը չորս տող, եւ արժագրութիւննե- րի երբեք փոխանցումներ, հոգու շարժման ինչ- պիսի խոսքում:

Ազգային ժողովրդի ու վերջերջ համամարդ- կային նուագներ են. սա է գրականութեան, ինչ- պէս նաեւ արուեստների շարժման գլխաւոր ուղ- ղութիւնը: Եւ եթէ շարունակ փոխակերպուող գեղարուեստական մասնազտութեան ընդարու- անում մի բան չի փոխուում, պահպանելով իր նախ- նական յղացումը, ապա դա կենց այս օրէնքն է:

Ա. Իսահակեանի բանաստեղծութեան հար- ղեմաշունչ ոգին հնարաւորութիւն է աստիճա- նայինը նաեւ ուրիշի զգարչն ու արուն ծովը: Հայ բանաստեղծը այրում է Նախիբի կարտիչ, եւ այդ ներքին այրումը ինչ-որ կարճատեւքով լիբեմացնում է հեռու մարդկայն հողները: Դա մեծ գրականութեան կոտորածն է:

ՆՈՐԱՅՐ ԱՐԱՆԵԱՆ



Je ne suis pas un grand lecteur. Je ne suis pas non plus un grand débateur. Bref, je ne suis pas un véritable intellectuel.

ROLAND BARTHES

անոնց գոյութիւնը հաստատող աշխուժ տեսարանը: Առաջին լեզուին տարբերով երկրորդ լեզու մը ստեղծող երկուսի՞ք տեսանելի դարձնելու համար ի՞նչն էր դարձնել, որ մխրճուեցաւ դարերու հետունները:

Վերջին տասնամեակին թերեւս չկայ թերթ մը Ֆրանսայի մէջ, որ Ռոլան Պարթի վարկածներուն համար զրոյց բացած չըլլայ հետը եւ չկայ խմբագիր մը, որ իր թերթը անոր ստորագրութեամբ բանալու նախանձախնդրութիւն մը մատնած չըլլայ: Վժէլ գիշական երրորդ ասորդ ահարկիչները ամբողջ թիւ մը նշարեցին իրեն: «Արժ»ը՝ նոյնպէս: Նոյնը բրած են հաւանաբար ուրիշներ: Երկուսի՞ք է Ռոլան Պարթ:

«Գլեճգէն լիթերեր»-ի աշխատակիցներէն ժիւլ Լափուժ, իր կարգին, «Ճամբորդ»-ը Ռոլան Պարթի շուրջը խորագրին տակ անոր հետ ունեցաւ ընդարձակ զբոյց մը, ուր նորայայտ հսկան ի մէջէն այլոց յայտարարեց...

«Ես մեծ ընթերցող մը չեմ: Ոչ ալ մեծ վիճաբանող մը: Կա՛րճ, ես նըշմարիտ մտաւորական մը չեմ»:

Ի լուր այս յայտարարութեան՝ Լափուժ փակագրիծի մէջ կը գոչէ՝

«Աստուած իմ, ըսի իւրովի այդ վայրկեանին իմ սեփական գրոյցին ընթացքին, եթէ Ռոլան Պարթ իմէն մը տաւորական մը չէ, ապա ուրեմն ա՛վ է մտաւորականը, ու առիկա վիատեցուցիչ չէ՞ միթէ»:

Աստուած իմ...

Մեր մօտ կացութիւնը բոլորովին տարբեր է: Եթէ մենք Ռոլան Պարթի արժանիքներուն թիւովը մտաւորական չունինք, Ֆրանսացիներն ալ մեր թիւին չափ մտաւորական չունին:

Հայոց լեզուին բառերը մտնելու մեղքէն զերծ չենք նաեւ մենք: Օրինակ, ո՛չ արին ձգած ենք եւ ոչ ալ համ մտաւորական բառին մէջ:

Բայց պահ մը ձգենք մենք մեզ ու ջիւլ մը խօսինք Ռոլան Պարթի մասին:

«Բագին»-ի էջերէն միջազգային հրոչակի աէր զրոյցներուն հետ ծանօթութիւն հաստատող ընթերցողներուն հաւանաբար բոլորովին անձանօթ դէմք մըն է Ռոլան Պարթ: Անոր անունին դժուար թէ մարդ հանդիպած ըլլայ մեր մամուլին միւս անդամներուն մէջ եւս: Բայց անոնք, որ կը հետեւին գրական օտար շարժումներուն եւ մտանաւորաբար Ֆրանսական մամուլին, դիտեն հարկաւ, որ Ֆրանսական գրականութեան ու մտաւորական կեանքի վերջին մէկուկէս ասանամեակին՝ Ռոլան Պարթ ամէնէն աւելի նորութիւն յայտնարերող դէմքերէն մէկը եղաւ, ընթերցումի, թափանցումի ու լեզուի բոլորովին նոր կարելիութիւններ յայտնարերիւով:

Ինչը, Ռոլան Պարթը հանդիսացաւ ընդ վէպի ու «Վէլ գիշականներու արկածախնդրութիւններուն հրամայականը ըմբռնող առաջին լուսամտը եւ

ԱՆՓՈՒԽԱՐԻՆԵԼԻ...

Je succède à Endré Maurois; je ne le remplace pas.

MARCEL ARLAND

Ներկայիս, մեր լեզուին ամէնէն աւելի չարչարուած բառերէն մէկն ալ
այս է, — անփոխարինելին, որ կը պարտի մասաւորականին թէ ինքզինք մը-
աւաւորական կարծող համբալին, վարժապետին թէ պարզ մարդուն, բոլոր-
րէն շրթներուն, իւրաքանչիւրին տալով իմաստութեան հով մը, թէ՛

— Անփոխարինելի մարդ չկայ...

Տարրեր մոլորութեան մը ակնարկելով՝ Չարենց կ'ընէ.

Մի ժամանակ, դժբախտաբար,

Ես էլ էի այդպէս կարծում...

«Մի ժամանակ» «անփոխարինելի» ըստին նշանակութեան մասին մենք
եւս նոյն կարծիքը ունէինք եւ անհաւանական չէ, որ յաւակնոտ յայտարարու-
թիւններու կողքին, անմեղ թուղթին վրայ արձանագրած ալ ըլլանք, թէ՛

— Անփոխարինելի մարդ չկայ...

Բայց ժամանակը, տարիքը, փորձառութիւնները, ընթերցումները,
այո՛, նաեւ ընթերցումները եկան գումարուեցան իրարու վրայ եւ բազին
կարգ մը բառերու նրբերանգները, չափ գնելով նաեւ անոնց գործածութեան
եղանակներուն մէջ: Այդ նպաստներէն ետք, մենք ստուգեցինք, որ սխալ է
վերի առումով գործածել «անփոխարինելի», անփոխարինելին անփոխարի-
նելի՛ է միշտ եւ, անկախ որակական արժանիքներէ՛ անփոխարինելի է
իւրաքանչիւր ոք:

Մենք այս ճամբարութեան հասանք այն օրը, երբ քանի մը տարի ա-
ռաջ կարդացինք «Ազգակոյտի մէջ լոյս տեսած գրութիւն մը, ուր մէջբերուած
էր նոր մեռած Անարէ Մորուայի տեղ ակադեմական ընտրուած Մարտէլ Ար-
լանի ակադեմական ճառին հետեւեալ պարբերութիւնը.

— Ես կը յազարդեմ Անտրէ Մօրուային. գայն չեմ փոխարինել:

Փոխարինելը ուրիշ բան է, եւ ուրիշ՝ յաջորդելը: Մենք երկուքը ի-
րարու հետ շփոթելով՝ շարունակ կը մտնենք առաջինին իմաստը, ա՛յն եր-
ջանիկ անգիտութեամբ, որ սոսկական յաջորդող մը կրնայ փոխարինել ան-
փոխարինելին:

Ընդհանրապէս այս իմաստութիւնը, քիչ է ըսել իմաստակութիւնը կը
կիրարկուի որոշ կարողութիւն, ձեռնհասութիւն ու հասունութիւն ցուցա-
բերած անձերուն կապակցութեամբ, յիշեցնելով այն պարզ իրականութիւնը
թէ անոնց մահացումով կամ հեռացումով արեւը չի խաւարիր ու կեանքը կը
շարունակէ իր ընթացքը: Ճիշդ է, որ արեւը չի խաւարիր, պիտի ընդունինք
սակայն, որ ընթացող կեանքն ալ արեւային շրջաբանակալան:

Ուրիշ օրինակ մը: Ս. Վրացեան տեղ մը մատաւորապէս կ'ըսէ.

«Եթէ Բարզէն Սիւնիմ առաջին վայրկեանէն չնահատակուէր, Պանֆ
Օթումանի պիտագործութիւնը տարրեր ելք կ'ունենար: Արմէն Գարօ Բարզէն
Սիւնի չէր»:

Արմէն Գարօ յաջորդեց Բարզէն Սիւնիի, Բարզէն Սիւնիին չփոխարի-
նեց: Բարզէն Սիւնիին անփոխարինելի էր, ամէն ոք անփոխարինելի է, ան-
փոխարինելի են նոյնիսկ «անփոխարինելի մարդ չկայ» պնդող անփոխարինե-
լի՛ «անփոխարինելիները»...

«ՀԱՆՃԱՐԵՂ» ԶՏԵՍՈՒԹԻՒՆ

Ողբացեալ Շահան Շահնուրի մահուան առիթով, ինչպէս միշտ կը պատահի արժանաւորներուն հետ՝ արձանագրուեցան յարգալիբ խօսքեր եւ եղան շարք մը առաջարկներ՝ ի լուսարանութիւն անոր գործերուն եւ անձին կապուած մանրամասնութիւններու:

Կարգ մը մութ մնացած կէտեր ըստ բաւականին պայծառացան, իսկ ուրիշներ, մա՛նաւորաբար Փրանսերէն գրելու անոր մարմաջին ներքին շարժառիթը, հաւանաբար երկար տունն պիտի շարունակէ զբաղեցնել ախտաբանական հարցեր պարզարանելու հակամէտ մտքերը:

Ինչ կը վերաբերի յարգալիբ արտայայտութիւններուն, պէտք է ճշդել, որ կշռադատուած խօսքեր ըլլալէ աւելի՝ անոնք կը կրէին զգացուած յուզումին բացորոշ ազդեցութիւնները:

Ոմանք չբաւարարուեցան անհետացող գրադէտին տաղանգով ու ձեռնատաղանդ՝ մակդիրը գործածեցին անոր անունին դիմաց: Մէկը նոյնիսկ մեծատաղանդն ալ բաւ չհամարեց ու «հանճարեղ» կոչեց զայն:

Մեր կարծիքով, ներկի շէ մեզի մեր ու աշխարհի մեծ գրականութեանց մեծագործութիւնները բաց դիրքի մը պէս ճանչցած ըլլալու հպարտութիւնը սպրբի մէկ կողմէ, եւ միւս կողմէ՝ շտեմարան մատնող պսակներ հիւսել:

Հանճարեղը հեղեղօրէն յորդած համադումար գորութիւնն է հաւանաբար, մեր մէջ՝ Նարեկացին:

Մեծատաղանդը՝ յայտնագործութիւններ կատարած խորհրդանիշ կարողութիւնը՝ Ինտրա:

Շահնուր մէկունն ապրածը, գիտցածը, գրածը, պոռագածը՝ կառուցողական բացառիկ զգայարանքով վիպող ազատողաւոր հեղինակը եղաւ մեր մէջ եւ աւելի արդար եղած կ'ըլլանք իր յիշատակին հանդէպ, եթէ այդ սահմաններուն մէջ յայտնենք մեր համարումները:

Նման առիթներու ժխտութեան չափ վտանգաւոր է շոյալութիւնը: Պէտք է յարգուի բառերը անտեսելու դիտութիւնը ու պահուի չափի զգացումը: Մշակուած ժողովուրդներու այդ յատկանիշները:

Կիրքի, քմայքի եւ շիւ գիտեր ուրիշ ի՛նչ դրոպապատճառներով բառերը թեթիւօրէն գործածելու մոլութիւնը բացառուած չէ նաեւ ի՛ր՝ Շահնուրի գրութիւններուն մէջ: Ու եթէ քառասնամեակ մը առաջ այդ անպատասխանատուութիւնը երիտասարդական յախուռն յաւակնութեամբ կը բացատրուէր, վերջին տարիներուն անոր թոյլ տուած անհակակշիռ վճիռները կը մընան բոլորովին անհասկնալի:

Շահնուր մեռաւ, բայց գերեզմանէն վեր ճակատագիր մը ձգեց իր ետին: Ըսել կ'ուզենք՝ ապրող գործեր կտակած բոլոր դէմքերու արտայայտութիւններուն պէս նա՛եւ իր արտայայտութիւնները ենթակայ են մնայուն քննութեան, մա՛նաւանդ՝ երբ անոնց, ապրող գործեր կտակած դէմքերու հետեւորդներուն մէջ կոյրզկուրայնները չնչին տակոս մը չեն կաղմեր...

Մոլորութիւններու առաջը առնելու համար՝ մատնանշենք հետեւաբար շահնուրեան մէկ-երկու բարդոյթներ...

ՄԵԾԱՏԱՂԱՆԴ - ԱՆՏԱՂԱՆԴ

Որքան անվիճելի էին Շահան Շահնուր գրադէտին զբաղան շնորհները, ա՛յնքան վիճելի եղան ու մնացին քննադատ Շահնուրի դատողական փորձերը: Հայ գրականութեան վերադառնալէ ետք, երբ ան թով թովի բերաւ հրապարակադրական ու քննադատական էջերը, անդրադարձաւ իր այդ աւելորդութեան ու ընդարձակ սրբագրութիւններով փորձեց դարձանել որոշ խօթութիւններ, այսուհանդերձ, ո՛չ միայն ի դորձ գրուած առողջացման ճիշդութիւնը ամբողջական չեղան, այլև բոլորովին հասուն տարիքի մը մէջ գրուած նոր գրութիւններուն մէջ անգամ պակաս չեղան շահնուրեան անհակալիւս գեղունները, չափազանցութիւնները: Անոր դատողական փորձերուն մէջ աւելորդագրութիւնը միշտ աւելի գերակշիռ տեղ մը բռնեց, քան արամաբանութիւնը, ու պատճառաբանուած խոհերու փոխարէն ընդհանրապէս քմահաճ վճիռներով լեցուց իր էջերէն շատերը:

Պրինակ, քանի մը տարի առաջ Վահագն Դաւթեանի քննադատական մէկ գրութեան արձագանգելով՝ ան գրեց.

«Ան (Վահագն Դաւթեանը) զիս կը դատաւարտէր այն ամբաստանութեամբ, թէ Հայաստանի ներկայ վերելքը, որ ներկայ ժամանակներու նուաճում է, չեմ յիշած եւ ոչ ալ ներքազած եմ ՅՅ տարի առաջ: Արդարեւ, չեմ ներքազած, ինչպէս որ չեմ գովեր, այսօր, Վահագն Դաւթեանի բանաստեղծական տաղանդը: Կարելի չէ գովել ա՛յն՝ որ գոյութիւն չունի»:

Գոյութիւն չունեցողը Վահագն Դաւթեանի բանաստեղծական տաղանդին է: Պահ մը կը տարուինք մտածել, որ Շահնուր «տաղանդ»ին կու տայ մասնաւոր, պերագանց, անկրկնելի Նշանակութիւն մը եւ բարձրագոյն այդ առումին համապատասխան չի գտներ Դաւթեանի բերքը, հետեւաբար՝ ա՛յդպէս:

Այդպէ՞ս է սակայն իր ճշմարտութիւնը:
Շահնուր Փարիզի «Յառաջ»ին մէջ լոյս ընծայեց իր վերջին գրութիւնը՝ «Բայց երազն էր գերիզօր», որ կը սկսի հետեւեալ բառերով.

«Յրամսաւայ գաղութիմ մէջ ամէն ո՛ք տեղեակ էր, թէ մեր մօտ կ'սպարի մեծատաղանդ բանաստեղծ մը, Յարութ Կոստանդնուսն»:

Մեծատաղանդ՞նդ:
Ինչ խօք, որ Յարութ Կոստանդեան մէկն է Սփիւռքի ամէնէն օժտուած բանաստեղծներէն, բայց եւ այդպէս անոր առիթով Շահնուրի առատածնութիւնը կը կարծենք, որ քիչ մը շատ չափազանցուած է: Մարդ կամայ կը սկսի բառ փնտռել՝ ընտրելու համար, օրինակ, Վարուժանի, Մեծարենցի, Թէքեանի կամ անոնց հասակակից ուրիշներու կարողութիւնները եւ դժուարութեան կը մատնուի: «Մեծատաղանդը» Կոստանդեանին յարմար դատելէ ետք, Վարուժանին կամ Մեծարենցին քիչ չէ՞ արդեօք «հանճարեղ»ը:

Եւ յետո՛յ՝ Յարութ Կոստանդեանը «մեծատաղանդ» դաւանող մարդը, ի՞նչ չափանիչի ապաւինած կամ ո՞ր խղճմտութեամբ արդեօք անտաղանդ կը հուշակէ Վահագն Դաւթեանը: Ասիկա պարզապէս կը կոչուի շահնուրեան քմայք, որ պարագայարար գլուխ չցցեց միայն, դրսևորուեցաւ յաճախ: Յաջորդով՝ ուրիշ օրինակ մը, մեր աշխարհաբարին կապակցութեամբ Բաշալեանին շոյլած պատիւին առիթով:

«ՄԻՆՉԵՒ» ԱՅՍՈՐ...

Մինչև այսօր ոչ ոք կրցած է հասնիլ
Բաշալեանի աշխարհաբարի գեղեցկութեան:

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

Երկու վերջակէտներու մէջ կատարուած այս «հաստատումը» առնուած է «Կրակը կողմիս» հատորին «Ընտանեկան ճամբանի» տնուն գրուածքէն, որ Շահնուրի եօթանասնական թուականներու մէկ արտագրութիւնն է:

Ապշեցուցիչ է իրապէս նման արտայայտութիւն մը կարենալ ընելու համարձակութիւնը... «Մինչե՛ւ այսօր»...

Կարծես հայ գրականութենէն լուր չունեցող մըն է խօսողը, կամ՝ կը խօսի հայ գրականութենէն լուր չունեցողներուն:

Շահնուր որոշ ժամանակաշրջանի մը մէ՛ջ ալ չի տեղաւորեր Բաշալեանի աշխարհաբարը, նկատի չունի նոյնիսկ Բաշալեանի աշխարհաբարին զարգացման փուլերէն մէկը կամ միւսը, այլ մէկ անգամէն կ'տունէ սմբողջը ու կը մերժէ անոր բերած գեղեցկութեան համեմատութեան որեւէ եզր ընդունիլ:

Նման քմահաճ վճիռները, զժրախտաբար, քիչ չեն Շահնուրի գատողական էջերուն մէջ:

Ոչ մէկ խօսք այն ժամին, որ 1890-1900ական թուականներուն, երբ դեռ գրաբարեանները չէին յայտարարած իրենց վերջնական պարտութիւնը եւ կազմաւորման իր բուն փթթումը ապրող աշխարհաբարին գրաբարէն տարբեր խառնելու սկզբունքին ջատագով միւս թեւը կը շարունակէր իր պայքարը, զուտ աշխարհաբար մը ունենալու երազով սազնապող «Հայրենիք» խմբակը, ընդ որս եւ Բաշալեան, շահեցաւ պայքարը, նուիրագործելով նոր լեզուն գործածութիւնը: Այդ օրերուն, բաղդատաբար այլոց, Բաշալեանի էջերը գրուած են իրապէ՛ս ուշադրաւ աշխարհաբարով մը, բայց անջատել այդ աշխարհաբարը իր ժամանակէն ու չգերազանցուած հոշակել զայն նաեւ այսօր ո՛չ միայն հիմնովին սխալ, այլեւ խորապէս վիրաւորական է ամէնէն առաջ մեր լեզուին զարգացման կարելիութիւններուն հաշույն ու անոր նրբաբանազային նոր տարբեր, պայծառութիւն, ամբողջութիւն ու թափ տուած վերջին երախտաւորներուն համար:

Շահնուրի «վճիռին» ի լուր՝ մենք փորձեցինք վերստին աչք մը նետել Բաշալեանի կարգ մը գրութիւններուն վրայ ու կրկին հաստատեցինք, որ հոն կիրարկուած լեզուն կը կրէ իր ժամանակին կնիքը՝ բառական, շարադասական ու քերականական ակնբախ տկարութիւններով:

Ահաւասիկ երկու-երեք նախադասութիւն Բաշալեանի «Ա՛յս է քեր» խորագրեալ պատմուածքէն, գրուած 1890ին:

«Լամպարներուն սաստիկ լոյսը կը ցօլար այդ հոյանի մարմնայն վրայ, տարօրէն իմն աւելցնելով անոր գծերուն կենդանութիւնը, սեւ կերպաւիճ խաղաղ արտայայտութեանը իմ: Իր վէս գլուխը կը բարձրանար ձիւ-

ճաթայր պարանոցին վրայ, միշտ դէպի ձախ հակած քիչ մը. նոյն լուսավառ աչուրներն էին միշտ, հիմակ աւելի ընկղմեալ նայուածքով. տժգոյժ այտերը քեթել իմն բառրած էին, հիմակ աւելի տափ մայնով. նուրբ ռեզուսէք կը սարսալային հեշտութեամբ եւ նուաղիտ ծպիտ մը ի վեր կը համէր իր քիչ մը հաստ եւ կարմրաքակ շրթունքը: Իր գերագնացութիւնը կ'զգար եւ կը վայելէր գայն, օրեակին քաւշեայ տախտակէն դուրս ծռած, գագցես ի յագարդ գիծէր դիտող աչերում եւ դիտակներուն»:

Եօթ-ութ տողնոց պարբերութեան մը մէջ աշխարհաբարը գիրաւորող եօթ-ութ ներկայութիւն, — ստարորէն իմն», «քեթել իմն», «ոնգումբը», «ի վեր կը համէր», «կ'զգար», «գագցես ի յագարդ»...

Երկրորդ օրինակ.

«Փիշեր մը այցելութեան գացած էր իր հեաւոր ազգակիցներէն միայն տունը, — սր տարին հազիւ մէկ երկու անգամ կ'երթար, նեղուելով այն յարգական դիրքէն զոր պարտաւոր էր պահել ուր հարուստ եւ բարձր դրից տէր ազգակիցներուն քով, ուր իրեն հասակակից մէկը չուներ, — հետըզհետէ եկող հիւրերուն հետեւ, յանկարծ երեցաւ Տիկին Սիմեան իր ամուսնոյն հետ: Միջէի սիրտը սկսաւ տրտիւլ, այնքան ուժգին, որ վախցաւ զի քողիկները չ'լսեն»:

Անկախ այս «միայններէն», «յարգական դիրքէն», «դրիցներէն», «ետեւէններէն», «զի քողիկները չ'լսեններէն», Բաշալեանի գրութիւններուն մէջ կը վրասան այսօր անհանդուրժելի բաղմամբիւ խորթութիւններ, «անուկ-նուկելի» անհամար ձեւեր, «տարորէն իմն մկլամադձիկ»:

Այս բոլորին դիմաց՝ իր քանակաւ օրէնք ու ճշմարտութիւն համարող Շահուր մը միայն կրնայ ըսել, որ «մինչեւ այսօր ոչ ոք չէ կրցած հասնիլ Բաշալեանի աշխարհաբարի գեղեցկութեան»:

Շահուր պէտք է գիտնար, ու դարմանալի է՝ եթէ չէր գիտեր, ու տիրուր է՝ եթէ չէր ուզեր խոստովանիլ, որ Բաշալեաններու սկսած աշխարհաբարը, Զարգարեաններու եւ Մեծարեհեցեանու գրչով արու եւ վայելչագեղ մակարդակներ նուաճելէ ետք, Սփիւռքի մէջ էր, որ բացաւ ու ծաղկեցուց իր առաւելագոյն գեղեցկութեան շրայլ եւ բուրումնաւէտ հարաւորութիւնները:

Ասիկա փաստի չի կարօտիր. կը բաւէ կոյր չըլլալ, ու աղերսաւ չըլլալ, տեսնելու եւ հաստատելու համար վերջին կէս դարուն ատայած մեր աշխարհաբարին որակական ներդրումները — ջերմութիւնը, երաժշտականութիւնը, առնականութիւնը, նկարչագեղութիւնը, վայելչութիւնը, ուժը, ձեռք բերուած՝ Օշականի, Շուշանեանի, Սարաֆեանի, Պէշիկթալեանի, Նարդուլիի, Մատուկեանի, Պոյաճեանի եւ դեռ ուրիշներու ջանքով, դորով, նախանձանդողորմեամբ, ներքին հուրքով ու ճաշակով:

Աւրիթը պատեհ համարելով յաջորդ էջերուն կու տանք քանի մը նմոյշ եւ այս անգամ ո՛չ թէ Շահուրի «վճիռը» ոչնչացնող փաստեր կուտակելու մտքով, այլ ընթերցողին վայելք մը ընծայելու համար:

Արտագրուած հատուածները առնուած են «Մնացորդաց», «Յեղափոխութեան լոյս» գոտիին», «Վեցերկն ամսադր» եւ «Ի՛նչմէր» անուն դործերէն:

Ա Ղ Ո Ւ Ո Ր Ը ...

Ամիսները կապուեցան ամիսներուն, դիւրին կամ դժուար: Ապրողները չապրած միայն գին կը կտրեն: Նոր տունը, իր գրադումներուն շատութեամբը ըրաւ անոր ցերեկները լեցուն ու հանելի: Ու պուպրիկէ մը աւելի աղուոր՝ ան պտրտեցաւ ընդարձակ պարտէզին մէջ, համակ կարմիր բեհեզով, կամ մեզրի գոյն զգեստներով: Ու երեւոյթ էր անիկա փոքր ծառերու կուշտին, դուրսէն դրուած պատկերի մը նման: Ու երեւոյթ էր անիկա հին ծառերու բունին, անոնց խոռոչներէն քիած աստուածուհիի մը նման: Եղանակին համեմատ՝ ան ապրեցաւ նոր-հարսնութեան բոլոր դասական յուզումները: Անոր կեսուրը, փոխարինելու համար անմահ հարսնուկին համակերպում առաքինութիւնը, անոր կռնակին թափեց Նալպանտեց հանի Արթինին օրերէն պահ դըրուած եզական, թանկագին զգեստներ, հնօրեայ ապրշում հիւստով ծաղիկներ, որոնց բաժակները զմրուխտի մէջ փարուած աղամանդ աչքերու նման կը նայէին: Ան ի՛նչ մոռցուած, հիմա անծանօթ կարմիր էր, որ իբր յատակ կը ծառայէր այս պարտէզին: Ու մուշտա՛կ, բայց ո՛վ գիտէ Ասիայ ո՛ր կիրճներէն, որ անոր մարմինին մէջ թափուած հոտեր եւ հեռաւոր, խուլ մրմունջներ կ'եղանակէր ու անոր այտերուն խուած ստեղծ անապատին ամբողջ կրակէ համբոյրը կը մազէր վրան: Բայց անոր կուրծքին շարեց կախոցները, ծանր, իրարու փակած կիսադեղներով ոսկիներէ հիւսուած, ութ-տասը շաբէ, այնքան հաստ, որ անոր վիզը կը ցաւէր պարտեզէն (պարելու կալը) դարձին: Ու համարուած տաղաւարներուն՝ անոր ժամ երթալը լռին սարսուռ մը կը մզէր չորսդին: Պատանիները կուլային անոր պատկերին անհաս խոռովէն: Երիտասարդները կը պազէին ու չէին քալեր: Ու գեղ իջնող նամբաներուն վրայ առանկ դեղձային զգեստաւորումով, անիկա արեւին մէջ բռնկած ու չվառող հսկայ ծաղիկի կը նմանէր: Բայց անոր խոռովէն հզօր էր մա՛նաւանդ իր պարզ ընտանութեան մէջ: ... Հնազանդ ու մա՛հուր՝ ան մտիկ ըրաւ կեսուրին ու մօրը, ոչ ոքի իսկ շիւղ մը բան զգալի ընելու իր ողբերգութենէն: Ու անեցաւ անոր մարմինը, մնալով նուրբ, դիւրարեկ ու ազագուն բանը, որ աղջիկները կը յատկանշէ, ի՛նչ տարիքի ալ ըլլան: Ու անոր այտերուն վրայ յամառեցաւ հոգիին ազուամագը, որ պարմանները կը գատէ կիներուն աւարտած ու ա՛լ խորք չունեցող մոյնէն ու կը տազաւարէ անոնց շուրջն ու վրան, անտես ամպ-հովանիի մը նման: Խորացած, գացին ու հաստն կարծես ոսկորները եւ մէջտեղ դրին գայն ամբողջ միս ու փափկութիւն: Ու հասակը տեղը, ու գարդը տեղը, ու գոյնէն զգլխիչ անոր դէմքը, այդպէս առնուած գարդին ու բողիմ կախարչութեանը մէջ, պտրտեցաւ գեղին փողոցներէն, անհասկնալի ու իրա՛ւ:

8. ՕՇԱԿԱՆ

ՎԱՐՔ ՀԵՐՈՍԱՑ

Վարք հերոսաց, — մատենան ազատութեան արշալոյսին ու յեզրփոխութեան յազմանակին համար ինկող զինուորներու, — ո՞վ պիտի գրի անէ՞ զայն: Ո՞ր հերոսութեան տաք հովերէն վառող բանաստեղծը, արոյրէ՛ բաներով, պիտի քանդակէ հայ ժողովուրդին դարաւոր ստրկութեան ու նուաճառութեան խորունկներէն եկող ու անոր ճակտին ստրջանքի անարգ խարանք մաքրող այս կտրիճ տղոց զմայլելի փառքը: Ո՞ր խօլ ու հպարտ տղան, մոռնալով այժմու կեղծ շափերն ու կշիռները, որ լոկ մեծութիւններ հարթելու կը ծառայեն, պիտի զգայ հայկական բարձրաւանդակի չարաշուք մթութեան խորէն յայնտուղ այդ հրաշալի քայներուն մեծաշոինդ գեղեցկութիւնը:

Հայ հերոսներու շարքերէն անջատել քանն-քանըհինգ արու ղէմքեր ու աշխատիլ ծայրագոյն խանդավառութեամբ մը քանդակել զանոնք, յաջորդ սերունդներուն համար, — ահա՛ փառասիրութիւն մը: Որովհետեւ կեանքի մը հանապազօրեայ ու ընթացիկ ղէպքերը չեն միայն, ոչ ալ արարքներու կուտակումը, որ կրնան բաբախուն գաղափար մը տալ մարդու ժը ներքին հրկիզումին մասին:

Ամէնէն անարգ մարդուն կեանքն իսկ կը բխի քանի մը խորունկ ակերէ, մէկնէն անարգ մարդուն կեանքին մէջ իսկ ազնիւ կիրքեր կան, պայծառութեան լուսեղ պահեր: Արտաքին ղէպքերու, ցցուն եղելութեանց, յստակ թուող արարքներու կեղեւը պատռելով՝ հարկ է որոնել հերոսին ներքին հուրը, իր քաջութեան ծածուկ զօպանակը, իր հարազատ ու եղակի կուժիւնը: Բանաստեղծօրէն պատմել զայն, ցոյց տալով գերազանց լայսի այն քանի մը վայրկեանները, որ նուաճառ ու շնչին կեանք մը կրնան երկարածուցել ժամանակի մթին անդունդին մէջ:

Ստուգելու մեծապէս հմայական ու յուզիչ թուած է ինձ հայ հերոսներու յետ մահու, — երկրայլդ կեանքը: Գէորգ Չաւուչեանը, Գալուստ Արթանեանները, Աղբիւր-Սերոբները փաստօրէն երկու անգամ ապրած են հայ ժողովուրդին մէջ ու յեզրփոխութեան համար: Մահը, կարելի է բուլ, լոկ արկած մը եղած է՝ փոխադրելով անոնց հմայիչ ու քաղցր անունները ուրիշ մակարդակի մը վրայ:

Քանի՛ հարիւր երիտասարդներու հոգիներուն խորը կը շարունակեն ապրիլ անոնք, աւելի՛ շքեղ ու թանկագին կեանքով մը, որ մահէն կու գայ: Սուրբիայէն մինչեւ Պուէնոս-Այրէս՝ խօսեցուցէ՞ք թափառայած տղաքը ու պիտի տեսնէք, թէ աւիւծի ի՞նչ հպարտ գլուխներ կան, յուզումի պահերու ընթացքին, իրենց ակնարկներուն զիմաց, քանի՛ սուլքամներ իրենց հոգիներուն խորը: Չարախիդ մարդիկ զուցէ մտածեն, թէ մեռելներու շահագործում է՝ հերոսներու յիշատակին ապաւինելը: Կենդանի, արթուն, յեղափոխական կազմակերպութեան մը անձեռնմխելի իրաւունքն է սակայն իր հերոսներուն անունները դրօշակի պէս պարզելը, այլեւ իր իմաստուն ու տաղանդաւոր գաւազներուն: Հասակ նետող տղոց հարկ է երկնամուխ բարձունքները ցոյց տալ: Ու հերոսներու պաշտամունքը ամէնէն ազնիւ ծէսերէն մէկը կրնայ ըլլալ, եթէ ծառայէ երիտասարդութեան ողբերգի մահու, ժողովուրդի հոգւոյն աշտարակումին: Այս պաշտամունքի մթնոլորտին, այս հերոսական մտերմութեան շրջանակին մէջ է, որ մեզմէ շատերը վերագտած են ապրելու հպարտութիւնը: Սկսած են հաստատել հայ արեւնաբաժ ժողովուրդի ապագային ու մերժած են մաս կազմել հասմունիկ տկարներու եւ դասալիքներու փաղանգին:

ՎԱՉԳԿՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՎԵՆՍԵՆԻ ԱՆՏԱՈՐ

... Ամբաստան լուսաբացը ունի տօնի մը մեծութիւնը: Կը կզամ յստակ ու մաքուր ու արդար անդորրութիւն մը՝ կեղծիքներէն վեր... Յարութիւն մը:

Ի՞նչ պահ: Ի՞նչու կու գամ կարծէք լոյն ծովու մը խորքէն: Կը լսեմ: Կը կզամ: Կ'արձագանգեն թռչուններուն երգերը զաղջ ու պայծառ բիւրեղի մը մէջէն: Փառաբանութիւն մը: Անպատմելի ուրախութիւն մը: Յուպում մը սիրածը գտնողի: Վախի ու վշտի նկարագրութիւն մը: Ու սիրոյ գինովութեան երգ մը: Ու այդ բոլորը կ'աճին, կը ճիւղաւորուին լուսեղէն բուսականութեան մը պէս: Ու կը ցրուին քիչ-քիչ անոնց առջեւ ներքին ստուերները, լքելով իրենց զաղտնի ու անհեթեթ աշխատանքը, կը հեռանան ալիքներու ծփանքով, տրամի մը դերակատարներուն նման, կամ խաւարին մէջ դղեակ մը քանդելու լծուած ոգիներու պէս: Թռչուն մը կը հալածէ պանոնք՝ Ջատիկի ոստէ սուլիլի ճիշով:

Ի՞նչ պահ: Այբերս փակ՝ ես կը սահիմ անսահման ու հեշտալիք տարածութեան մը մէջէն, քակելով մէկ առ մէկ ցալիս, խոնջէնքիս, տրամութեան ու յուսախաբութեան կապանքները, թեթեւալով, բարձրանալով դէպի լոյսը, դառնալով թափանցիկ ու պայծառ: Ու լուսածագը, փոխն ի փոխ՝ կ'ըլլայ երազային կին մը, վիհերէն վեր թեւածող թռչուն մը, ծառի մը կատարը, աղբիւր մը՝ ուրկէ կը հոսին բոլոր բարիքները: Ի՞նչ պահ, երբ տակաւին չեմ ճանչնար ես պիս, չեմ առած ինքնութիւնս ու չեմ գիտեր ուր ըլլայ: Ամէն ինչ յստակ է արտակարգօրէն, ամէն ինչ՝ մէկ ոստէն միւսը սլացող թռչունին թեթափը, տերեւներուն սարսուռը, թափշը կատուի մը թաթերուն, շամ մը ոտքերէն քակուող երկաթէ թելը, աւելի մը աղմուկը՝ որ կը յիշեցնէ պարուհիի մը երկար քղանցքը, բայց մամնաւանդ աւելը մօրս՝ որուն ձայնով կ'արթննայի դպրոց երթալու համար: Մայրս, ապելով պարտէզը, կը մօտենար պատուհանիս, կը մաքրէր նաեւ հոգիս ամբողջ ամէն լուսաբացի: Ու ինծի կը թուի, թէ այս բոլորը իմ մէջս են: Չուրեւ ես ներքին ու արտաքին աշխարհները: Ոչ մէկ սահման: Ու ես ամէն կողմ եմ, երկրագունտին հեռաւոր ծայրերուն վրայ, տարտամ վերլիշումովը ապրած երկիրներուս ու ճամբաներուս, ծովերուս ու գետերուս: Ջարմանալի է տիրացումը այս բոլորին՝ երբ հեռու եմ անոնմէ եւ որոնց պէտքը չեմ կզար: Պէ՛տք է հետեցնել, թէ աւելի մօտ եմ Լ՛րարիչին, երբ չեմ մտածել Անոր ու կ'անգիտանամ Ջայն, երբ շահախնդիր աղօթողը չեմ: Անձնատէրը՝ որ միշտ բան մը կ'ուզէ երկինքէն, կամ անոր դէմ ելլողը, որ, դարձեալ անձնականութեամբ՝ կը թշնոտի անոր կզացումներէ:

Կախարդական է Վէնսէնի անտառը: Հասած եմ փորձառութեանց ներքին խտացումին: Ունիմ ջերմեռանդ հաստացեալի մը երանութիւնը՝ առանց հաւատքին: Ծառերուն կանաչը կը փայլի տարբեր սրբութեամբ մը: Քաղաքը կ'որոտայ տարբեր խորհուրդով մը: Լոյսը՝ կիսաբաց կոպերուս տակ՝ կ'առնէ նշենիներու ծաղիկներուն գոյնը:

Ու արբեցում մըն է այս քաղցրութիւնը, անոր նման՝ զոր կը կզայ ճամբորդը, փոթորկուտ գիշերէն ետք, նստուն ցռուկին վրայ, լուսաբացին տակ երեւցող նոր, անծանօթ ու յոյսերու քաղաքի մը առջեւ: Հնորից իմացականութեան, որ կը յառնէ իր մոխիրներէն, իր կենսունակ, կորովի ու յաղթական զաւուստին առաջին յուզումը, լուսաբաց մը՝ լուսաբացին մէջ, ուր սիրտ ու մտածում հաշտուած են եւ ուր գեղեցկութիւնը կը դառնայ կրկին գեղեցկութիւն, խանդավառութեան աղբիւր: Լոյսը՝ կիսաբաց աչքերուս դէմ ունի Պարթենոնի մը մարմարին ճերմակութիւնը: Կ'ելլեմ անկողինէս, նորոգուած, քարմաքած, մաքրուած:

Ու ծառերուն դէմ, սեղանիս առջեւ կը սկսի իրական կեանքը:

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՅԵԱՆ

ՃՅՄԱՐԻՏ, ՃՅՄԱՐԻՏ, Կ'ՆՍԵՄ ՔԵԶԻ...

...եւ արդ՝ Աւետարանի աստուածամարդկային լեզու մը գործածելով ահա՛ ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ մեծագոյն եւ չգերազանցուած բանաստեղծները երկրի վրայ անոնք են, որոնց գեղեցկութեան ու լոյսին ակը աներեւոյթ մնաց եւ արժէքը անկշռելի: Որոնց ճշմարտութիւնը եղակիի եւ յոգնակիի ուրի՛շ օրէնքով մը՝ մէկ եղաւ ու մէկ չեղաւ, բազում եղաւ ու բազում չեղաւ: Եղաւ մէկ ու միապայծառ, բազում ու բազմապայծառ. եղաւ խոր եւ աշխարհակշիռ, բայց որ իբրեւ ճշմարտութիւն, որ ըսել է իբրեւ կրակ՝ մեծցաւ դատան ու դժնդակ սճումով գաւկի մը պէս:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի դարձեալ՝ որ մեծ եւ դեռ չերկրորդուած բանաստեղծները աշխարհի մեծ գինովներն են, իմաստին ու շքեղութեան աստուածային հովերէն քշուած ու կարծես խենթ եղած, ու կարծես մարդարէ եղած, ու սուրբ եղած մարդերը: Անոնք, որոնք առտու մը, կէս գիշերի մը, միջօրէի մը, չես գիտեր ժամանակի ո՛ր մէկ խորհրդաւոր վայրկեանին, տեսան կարծես անտեսանելին, ապրեցան կարծես անապրելին: Որոնք տարօրինակ լոյսը խմեցին ու տեսան մարդոց ամէնէն տարօրինակ երազները բովանդակ Արարչութեան բովանդակ Տիեզերքին մէջ: Որոնք իրենց մէկ ուսին վրայ ճակատագրի մը դըժտիքը ունեցան իբրեւ վերջին ծանրութիւն, ու միւս ուսին վըրայ, յոյսերէն իրականացած եւ ճակատագրէ մը իսկ աւելի յամառ դրախտ մը, այս անգամ իբրեւ գեր-վախճանական ծանրութիւն: Եւ որոնք Տիեզերքին Չարի ու Բարիի երկու բացարձակ ծանրութիւններուն տակ կրած՝ չկրցան մոլին չըլլալ լոյսին եւ գաղտնի ազատագրութիւններու, թեթեւութիւն ու կեանքի շունչ բերող բառերու թաքուն ալքովի մը:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի երրորդ անգամ ըլլալով, որ մեծ բանաստեղծները անոնք են, որ քնաւ տարբեր չեն կանաչութիւն բուսցնող երկրի հողէն եւ աստղերուն մայր ու կաթնտու եղող երկինքներէն, որոնք մանրանկարն են ու խեղճ նշոյլը գերբնական Արարիչի մը՝ խմեցին լոյսը ընտիր կաթի պէս եւ գորացան: Ըմպեցին զայն չտեսնուած գինիի մը պէս, ու ստացան այլեւս բուն լայնք, բուն հորիզոն, բուն անսահմանութիւն այս երկրի վրայ: Նեղ էին առաջ՝ ո՛րքան ալ լայնք ու տարածութիւն տայիր իրենց: Խոյսացան լոյսին վրայ աներեւակայելի որսորդներու պէս, ու անոնց հողին խորացաւ աւելի քան ծովը, աւելի քան հեռու արձակութիւններու մէջ մոնչող ովկիանոսը:

Ա՛հ, մենք չենք գիտեր լոյսը. անոնք գիտեն...

ԵԴ. ՊՅՍԱՃԵԱՆ



Տեղի անձկութեան պատճառով՝ ստիպուեցանք այս թիւով յետաձգել խոստացուած գրութիւն մը՝ «Քրոյց Ունի էլ-Ղաճի եկեղ, եւ շարունակելի երկու ուրիշներ՝ Լեոֆուս Լապէցի շիրազներու ճակատագիրը յեզափոխական շարժումներու ընթացքին» եւ Ն. Պարխուտեանի «Տրանսպարան ժամանակակից քանատնտեսագիտութեան յոգուածաւարքին վերջին բաժինը»:

Առջին երկուքը պիտի տանք մեր յաջորդ թիւով, իսկ Պարխուտեանի գրութեան վերջին մասը, որ կ'ուսուցնուի Քրանսերէնով պրոպագանդայի քանատնտեսագիտութեան (Արմէն Լիւպէն, Ռուբէն Մելիք, եւ այլն), Մայիսի թիւով:

Ն. Պարխուտեանի յոգուածին մէջ Նիւթ զարմած նոր զէմքերը նաեւ ֆիզիքային ընթերցողին ներկայացնելու համար շնորհ յիմայնցինք, բայց հարատւը չկուրի որին մեռք ձգել ըստ լուսանկարները: Վերջերս միայն, երբ արդէն արդարեւ էին խնդրոյ տարակալ զէմքերուն յատկացուած բաժինները (Փերար Նըվէօ, Փերար Փրէֆօ, Հանրի Փէլէթ), մեր արամագրութեան տակ ունեցանք յետպատերազմեան շրջանին Քրանսերէն լեզուով գրուած քանատնտեսագիտութեան պատկերացընող չեղ շատոր մը, որմէ անտեսելով քով սինակին վրայ կու տանք «Բացիմնի անցեալ տարւան թիւ 12ին մէջ առանց լուսանկարի ներկայացած զէմքերէն երեքը»:

Ի պէպ, յիշեալ շատորին մէջ, ուր Քրանսցիներուն կողքին տեղ դասած են տուեալ շրջանին Քրանսերէնով արտայայտուող բազմաթիւ ազգերու քանատնտեսագիտութեան, Արմէն Լիւպէնի եւ Ռուբէն Մելիքի հետքերն իսկ չկան: Պարագան նորին է նաեւ Քրանսական ժամանակակից քանատնտեսագիտութեան պատկերացընող մեր արամագրութեան տակ գտնուող ուրիշ շատորի մը մէջ:

Հետաքրքրական է գիտնալ, որ յիշեալ ժողովածուներու իմբողջներումն յատուկ վերաբերում մըն է ստիպալ, թէ Արմէն Լիւպէնի եւ Ռուբէն Մելիքի հանդէպ առհասարակ այս է Քրանսացի մտաւորականներուն կեցուածքը:

Հայ ընթերցողը գո՛ւ պիտի մնար, եթէ մէկը այս մասին լուսարանութիւններ տար իրեն:

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

- ՃԵՐԱՐ ՓՐԻՎՕ
- ՃԵՐԱՐ ՆԸՎԵՕ
- ՀԱՆՐԻ ՓԵՇԵԹ

Սերտ գործակցութեամբը Հայ Կուսակցութիւններու Յժմեակի Համագործակցական Մարմինն, «Ալ-ժարիտէ» արաբատա օրաթերթը գործնական իր մասնակցութիւնը կը բերէ հայութեան այս համաշխարհային հանդիսութիւններուն՝ աւելի քան 200 էջերով քացառիկ թիւով մը, որ պիտի պարփակէ պատմական, քաղաքական եւ քննարկային կարեւոր նիւթեր՝ հայ ազգի տղիսականին, իրագործումներուն եւ Դատի մասին:

Այս գործին առաւելագոյն յաջողութեան համար՝ «Ալ-ժարիտէ» կը խնդրէ բոլոր այն հայրենակիցներէն եւ կազմակերպութիւններէն, որոնք փաստաբույժներ, ուսումնասիրութիւններ եւ նկարներ ունին այս նիւթերուն կապակցութեամբ, բարի ըլլան հեռագրել 250-300 թիւին՝ ընտրութեան եւ հրատարակութեան համար: Բոլոր յանձնուած նիւթերը ազատով պիտի վերադարձուին ենթակամներուն:


Զեր գործակցութեամբ պիտի ջանանք այս վերածնունդի քացառիկ հրատարակութիւնը դարձնել վաւերական թղթածրար մը:

«Ալ-ժարիտէ»



ՇՆՈՐ ՀԱՎԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

- ՄՆԱՍ ԲԱՐՈՎ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ (Յուշավէպ), Մ. Իշխան, Պէյրութ, 1974
- ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ (Վէպ), Ն. Զարխուտեան, Պէյրութ 1974
- ԱՆՎԵՐՁԱԿԷՏ ՃԱՄԲՐԳՈՒԹԻՒՆ (Բանաստեղծութիւններ), Ա. Գարալէֆեան, Պէյրութ, 1974
- ՀԱԼՉՈՂ ԱՐԾԱԹՆԵՐ (Բանաստեղծութիւններ), Վ. Հանեան, Պէյրութ, 1975
- ՄԵՂՔԻ ՃԱՄԲԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ (Արձակ էջեր), Ղ. Ժիրայր, Պէյրութ, 1974
- ԽՈՐԷՆ ԽՈՐՎԻՐԱՊԻՆ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՀԸ (Կատակերգութիւն), Վարդան Եղիշեան, Փարիզ, 1974
- ԳԱՃԱՃ ՄԵՍԻԱՆԵՐ (Արձակ), Միքայէլ Թարիգեան, Պէյրութ, 1974
- ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐ (Սիամոսթո), հրատարակութիւն՝ Ասքարեան գրական մրցանակի — թիւ 1



digitise by A.R.A.R.®

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ՀԻՔԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՇԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

باکین
مجلة شهرية ، اذبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتمين كارنيك قزانهجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՍՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԹՅՈՒՆ

•

ԽՄԲԱԳԻՐ
Գ. ՍԵԼԻՄԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban